

5724

5725



VNF

Sturp facsimile

ΒΙΒΛΙΟΘΗΚΗΣ  
Χ. ΓΚΟΖΓΚΑΡΙΑΝ  
ΔΟΥΡΓΟΤΙ Γ. 32  
Β. 4064962

9(47.925)

Վ-31

493

# ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ե Ի

## ՏԱՐՈՆԻ ԱԾԽԱՐՀԸ 1914 - 1915

Գրեց՝ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

### ՌՈՒՍ—ԹՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՆՈՒԵԱԿԻՆ

Քսան տարի է անցեր անարկու և համառամ պատերազմէն, որուն ողջակէշը դարձուցին հայ ժողովուրդը աշխարհի զօրեղները:

Փամանակն է ըզը բարձրացնելու անելի ղէպքերու վրայէն, յանուանդ Տարօնի աշխարհի, որու ժաօին քիչ է գրուած է կամ աղաւաղուած է յաճախ:

Իբր ականաւե և դերակատար, ըստ ամենայնի պիտի ջանամ ապա տարկայական, ճշմարիտ և իրական նկարագրութիւնը Փամանակի և ղէպքերու. պիտի չխուսափիս ձողկելու աղետալի սիտիներն ու թերութիւնները մեր ամենքիս, որովհետև ոչ ոք իրաւունք ունի ապաղայ պատմութիւնը եզծելու:

Մինչդեռ թիւրքահայ ժողովուրդը ազգովին հետի հնու կը սպասէր բարենորոգումներու իրականացման, քանի որ «Մարզպաններէն» Գնդ. Հօթը արդէն իսկ

16564

իր ք' նական առաջին պատարը կատարելով հասած էր հայկական հարաւային նահանգները՝ եկեղեցիներու զահկներու հրհուադին զուղուններու և ժողովուրդի սնդուազ խանդավառութիւններու ւղղեկցութեա՛ր, իսկ միւսը՝ Վէտտէնէկ կը պատրաստուէր մեկնելու իր շքախումբով և աշխատակիցներով, օգոստոս 4ին (1914) պայթեցաւ նախ աւտարեւտերպ, ապա հասաշխարհային պատերազմը:

Առաջին օրերուն հնարաւոր չէր, անշուշտ, այդ աղէտին ծաւալը, աւտարութիւնը և հետեանքնեորը: Աստուի ևս անկարելի կը խուէր, որ թիւրք-իթթիհաա պիտութեան ղեկավարները մղուէին տնօրմէջ. վերջին վեց տաշիներուն երեք այնպիսի հարուածներ էին կրած, (յոյն-թուրք, Թրիպօլի և Բալկանեան պատերազմները), որ, կը թուէր թէ ոչ արամ գութիւն և ոչ ալ հնարաւորութիւնը պիտի օնենային նման քայլ առնելու:

Օսմանեան Խորհրդարանը արձակուրդի մէջ էր: Իթթիհաաի էեղրոնական քլիւպը ղարձած էր պետութեան ղեկավարութեան կնդրոն. ետուղեւ ժը սկսած էր հոն:

Մեզի համար կենսական էր հարկաւ օր-օրին հասկնալ անցուղարձը, ղեկավար շըջաններու արամաղրութիւնները և մաաղրութիւններին:

Պատրիարքարանի վարչական մարմինները ոչ նման յարաբերութիւններ պահելու և ոչ ալ վարագորներէ թափանցելու կարողութիւնը ուէէին:

Օսմանեան Խորհրդարանի անդամները ի վիճակի էին թիւրք ղեկավար շըջանակներու հետ աւելի սերա չվման մէջ լինելու, իսկ Դաշնակցութեան գաղանբ մեքեան օրոշ հնարաւորութիւններ ունէր անոնց քլիւպներէն ներս թափանցելու:

Քաղաքական մթնոլորտը անարմաղրութիւն.

ները յաճախ կը պարզուէին ՎՄէրպը տ'Օրիան» քաղաքական աղուսրին մէջ, օր պետական և քաղաքական թիւրք ղեկավարներէ ղաա, միջազգային դիւանաղէտներու ժամաղարավայրն էր: Զոհրապը (և պ. Հալաճեանը կարծեմ) իր անդամի հանգամանքով, աւելի յաճախ սկսաւ երեալ հոն: Գարօն և Վարդգէտը կապ կը պահէին նախարարներու հետ, իսկ միւս երեսփոխաններէն մէկ քանին Իթթիհաաի պատասխանատու անդամներուն հետ:

Այդ բոլոր տեղեկութիւնները կուգային ամփօփուիլ Վաղատարաաի խլբաղրութեան աճէնէն վերի յարկի սենեակին մէջ, ուր տեղաւորուած էր Դաշնակցութեան Բիււոն: Հոն, կը համաղրուէին, հետեւութիւններ կը հանուէին (ի հարկէ, եթէ հնարաւոր լինէր) ու կ'որոշուէին հետաղայ քայլերը:

Այստեղ էր օր գաւառներէն կը ստացուէին ու կ'ուսումնասիրուէին կարեւոր լուրերը և տեղեկագիրները:

Նկատելի էր, որ թիւրքերը հեաղհեաէ կը հակուէին գործօն դեր ստանձնելու պատերազմին մէջ: Պօսնա-Հիրթօգովինայի և Բալկանեան կորսուած հողամասերը յետ խլիւու քաղցր հեռանկարը, իսկ ռիւս կողմէ գեղնցիկ կովկասին տէր դառնալու եւ աուս սղձաւանջէն պարիսպով ժը ապահովուելու ամամաղրութիւնները թափ կ'առնէին: Այս հողի վրայ անպաշտօն բանակցութիւններ և աւակարկութիւններ» իսկ կը կուտարուէին...:

Այդ օրերուն Հայ Յեղ. Դաշնակցութեան Տրդ. Ըսդհ. Փողովի օրոշումները (Թիւրքիոյ և պատերազմի մասին) ըստ երեւութիւն արղէն ծանօթ էին թիւրք ղեկավարներուն: Նաջի և Պէհաէաաի Շաքիրը էրղրուսի մէջ այս հողի վրայ բանակցած էին մեր ընկերներու հետ: Պատաղամաւոր Փասարմանեանին

2004  
 1274-2002

(Գարօ) Թալէաթը արդէն հասկցուցած էր թէ դժգոհ է Դաշնակցութեան կրօնորական դիրքէն՝ աւելցնելով որ իրենք ազատ են ասկէ պէտք եղած եզրակացութիւնները հանելու...

Պատերազմի յայտարարութեան առաջին օրէն իսկ թէ՛ Երզրուսի մէջ գտնուող մեր կարևոր ընկերները, թէ՛ Պոլիս՝ մենք ամէն գիտով կը ճգնէինք հակազդել թիւրքերու անող պատերազմական արածադրութիւններուն: Մեզի կը շատաւին ապահովցնել թէև, բայց Երզրուսի իրենց առաջարկը, սեղի, անշուշտ ոչ մէկ կասկած կը թողուր թէ Ռուսաստանի դէմ պիտի ելնեն:

Ընդհանուր յուսալքում մը կը արիւթ Պոլսոյ հայութեան մէջ. դաւաճներէն անհանդսացնող լուրեր կուգային. մեր ժողովուրդը բնազդօրէն կը զգար թէ անաւոր օրեր պիտի ապրէր. ելք կը փնտաէին: Այդ հողերանական վիճակը աւելի ևս շեշտուեցաւ, երբ թիւրքերը հաշուեյարդարի ենթարկեցին հայկական բարենորոգումները՝ հեռագրական հրամանով մը ետ կանչուեցաւ Ինդ. Հօթը, իսկ Վէստէնէնկը Պոլսէն իսկ արձակեց...

Հայ Յեղ. Դաշնակցութեան Հայաստանի Բիւրօր Պոլսոյ հատուածը առանց սպասելու Տրդ. Ընդհ. ժողովի օրոշումներուն և իր պատգամաւորներուն և երկիրը կրելով, որ ճամբաները պիտի փակուին և այլևս անկարելի պիտի դառնայ կովկասի հետ կապ պահել, առաջարկեց ինծի անսխալէս կովկասի ճամբով վերադասնալ ընարակա՝ շրջանս՝ Վասպուրական:

Բիւրօն. այդ առթիւ ընկերներու լայն լորտեղութեամբ ինչ և որ կարգելու համար օրուան քաղաքական վիճակը և մանաւանդ Պոլսոյ Բիւրօր շրջանի զեկազարութեան տեսակէտները

ճշտելու մեր և կովկասահայերու բռնելիք դիրքին նկատմամբ. արուած լինելով որ, Ընդհ. ժողովը, նախ քան պատերազմի յայտարարութիւնը ցրուած էր և չէր կրցած իր դիրքը ճշտել:

Այդ նիստերուն, բացի մեր կարևոր ընկերներէն (Շահրիկեան, Խոթակ, Հրաչ, Արմէն Գարօ, Վարդգէս, Փաշայեան, Սարգիս Մինասեան, Սարգիս Բարսեղեան և այլք) հրաւիրուած էր նաև մասնակցելու Զօհրապը, Դժբախտաբար, անհնար է ինծի այսքան տարիներէ և ապրումներէ վերջ վերլուծել անհատ ընկերներու տեսակէտները կացութեան և ինչպէս և օրուան դէպքերու նախատեսութեան և զնահատութեան կամ հետագայ մեր ընկիւղներու մասին:

Կը յիշեմ միայն մտայլ դէմքերը, մտահոգ ու սեւեռուն աչքեր և անաւոր պատասխանատուութիւններու դիտակցութեան տակ կարծես կըսած՝ անուց տառամասող ճեմքը ժողովի սենեակի անկիւնէ մը սիւսը:

Կաւ կը լիշեմ նաև, որ ընդհանուր կարծիք կար թէ թիւրքերը անպատճառ նետուելու են պատերազմի քասօին մէջ. ներքին համոզում մը ունէինք նաև, որ պիտի հակին գերմաններու կողմը՝ ռուսներու հետ հաշիւներն մաքրելու համար...

Այս պարագային մեր առջև կը ցցուէր այն դաժան հարցը, թէ ինչպէ՞ս պիտի ելնենք սարսափելի երկընտրանքէն, երբ սուսահայերը պիտի կռուէին սուսական բանակին մէջ և բնականօրէն ուրախութեամբ պիտի առաջնորդէին այդ բանակը դէպի անտեսեց երկիրը — Թիւրքահայաստանի հողերը, մինչդեռ մենք պարտաւոր էինք մասնակցել թիւրք բանակին ոչ միայն իբրև զինուոր, այլև թիւրքերը

անկասկած պիտի պահանջէին մեզմէ չէզոքացնելու  
նուստնայ զինուորներու և մարտիկներու գործողու-  
թիւնները և նոյն իսկ արտակարգ ծառայութիւններ  
աինկալելու մեզմէ (ինչ որ խօսած էին արդէն էրզ-  
րումի մէջ):

Իսկ հակառակ պարագային — այդ ալ կը  
զգայինք անշուշտ ոչ այն համեմատութեամբ և անա-  
ւորութեամբ ինչ որ անդի սենեցու. բայց կը սպա-  
սէինք անխնայ յալածանք թիւրքահայ մարտական  
ուժերու և մատուցականներու հանդէպ:

Ջօնրայն էր ամենէն յօսետեսը և խորապէս  
ընկճուած:

Նա կորսնցուցած էր իր սովորական աշխոյժը,  
խիստ մտահոգ էր ու անհանգիստ: Խոր թախծով մը  
հասակուած՝ դառնութեամբ կը խօսէր բարենորոգում-  
ներս: Վերջնական վախճանին մասին:

Անթէ թիւրքիան Ռուսաստանի թշնամիներուն  
հետ ըլլայ, վրէժը պիտի լուծէ մեզմէ թէ այսքան  
տարիներու յեղափոխութեան փոխարէն և թէ հայ  
դատին համար...»:

Այսպէս կը մրմնջէր նա, քովս նստած, կարծես  
ինքն իրեն: Ու երբ, մանաւանդ Խաթակը, օգևոր-  
ուած ու հաւատքով Ռուսաստանի անարկու ուժի  
մասին կը խօսէր, որ կրնար կարճ միջոցին մահացու  
հարուած տալ թիւրքերուն, Ջօնրայը, — որ ուստե-  
րը կը ճանչնար պատմութենէն և Պոլսէն միայն —  
պահ մը կը լափշտակուէր այդ հաւատարիքներէն, բայց  
Նահրիկեանը կուզար խանդաբելու անոր հօգիին ան-  
դրրութիւնը:

Մինչև ասոր ալ չեմ կրնար առանց յուզուսի  
մտոնալ այդ սքանչելի հայ մարդու հօգեկան տառա-  
պանքը:

Որքան կը յիշեմ երկու տեսակէաներ կային:

Ա. — Ռուս — թիւրքական պատերազմի պարա-  
զային, ուսները կայծակի ջախջախիչ հարուած պիտի  
տան թիւրքերուն. այս պարագային Կովկասի սէջ  
պէտք էր պատրաստ ունենալ հայ կամաւորներու  
գունդեր, որոնք ուս բանակին իբր յառաջապահ,  
փութով գրաւէին Հայաստանի սազմական կէտերը,  
թոյլ չտալով որ թիւրք — քիւրա տարրերը վըսեն  
հայ ժողովուրդին:

Բ. — Բացի այդ, մշակել մեր քաղաքական  
պահանջները և ներկայացնել ուսական իշխանութեան  
կաթողիկոսին միջոցաւ: Քաղաքական մեր բաղձանք-  
ներն էին. թիւրքահայաստանի անկախութիւնը,  
ուսական հոգնաւորութեան տակ: Միևնոյն ժա-  
մանակ Հայաստանի Բիւրոն պէտք է որ հրահանգէր  
գաւառի իր կազմակերպութիւններուն, գաղտնօրէն  
պատրաստուելու ինքնապաշտպանութեան: Իսկ վը-  
տանգի պարագային միանալու ներարշաւ. հայ գուն-  
դերուն:

Այս տեսակէտը կը պաշտպանէին Խաթակը,  
մասամբ Արմէն Գարօն, Սարգիսը և Տօքթօր Փա-  
շայեանը:

Երկրորդ տեսակէտը անկի պահպանողական  
էր: Ջայն պաշտպանողները լաւատես չէին այնքան  
ալ ուսական յառաջխաղացման նկատմամբ, արուած  
ըլլալով արևմտեան ճակատներու հաւանական խոչըր  
ուժերու պահանջը և ուսական կովկասեան բանակի  
հրամանատարական կազմի որակը: Անոնց կարծիքով  
վտանգը անխուսափելի էր թիւրքահայ ժողովուրդի  
համար:

Թէև ինքնապաշտպանութեան պատրաստու-  
թեան հրահանգը պէտք էր տալ, բայց անհրաժեշտ  
էր նաև Կովկասի մէջ, սամաւաններուն մօտ, քանի մը  
կէտերու վրայ, ոչ համախուսը շպահել խոչըր միտա

ւորներ հայ սարաիկ խումբերու, որոնք կրաւորական դերին մէջ մնային և ծայրայեղ պարագաներուն (ջարդ կամ թրք, պարաութիւն) միայն սահմանը անցնէին: Վաստակար կը գտնէին օւկէ ձևով կամաւորական մասը կողմելու և ուրեմն ըստ ամենայնի ենթարկուելու սուսական բանակին:

Այս պարագային թիւրքերը պրոօկոլասիօնի աօրիթ չունենալէ զտա, հայերու դէմ նախ քայլ մը ընելը աւելի երկար պիտի մտածէին օսհմաններու վրայ կուտակուած օւժերու պատճառով, որոնք դիւրին կերպով կրնային գողանի ճամբաներով ներս սօհիլ և թիկունքէն ու կողերէն անհանգստացնելով թիւրքական զօւնդերը, անիշխանութիւն ստեղծել ներսը և անարեկել քրդական աւազակային տարրերը: Այս մասին երկրորդ տեսակէտ պաշտպանողները կը կարծէին, որ այժմէն պէտք է նախազգուշացնել թիւրք ղեկավարները, յայտնելով թէ սահմանի միւս կողմը գտնուող հայերը իրենց տեղերէն չպիտի շարժին, եթէ ներս քանուող ժողովրդին ֆիզիքական վտանգ չսպառնաս: Այս տեսակէտին կը յարէին Ս. Մինասեանը, Հրաչը, Վարդգէսը, Շահրիկեանը և աւելի ուշ Ջօհրապը:

Երկու իրարմէ տարբերող տեսակէտները անհաշտելի մնացին, որոշուեցաւ կեդք. կօմիտէներու քննութեան ենթարկել ու միւսնոյն ժամանակ երկու տեսակէտները առանձինն իմ միջոցաւ հաղորդել Արևելեան Իրևոյին (Կովկաս), օպասելով Ըսդհ. ժողովի պատգամաւորներու վերադարձին օրպէս զի ի հարկին քննութեան ենթարկէին:

Մինչ առջ, բոլորը համաձայն էին, սակայն, որ թիւրքերի հայութիւնը պարկեշտօրէն կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնները և կրկ պահանջուած զոհողութիւնները (չիւսուորագրութեան, արտակարգ հարկերու և այլն):

Օգոստոս 14ին պիտի մեկնէր իտալական վերջին նաւը դէպի Բաթու. ըսին թէ այսուհետեւ պիտի դադրի յարաբերութիւնը. այս առթիւր եթէ իտալացիներ, ուրեմն այլևս չէի կրնար տեղէս շարժիլ:

Այդ առան Մեծ Կղզի կը բնակէի: Մեկնելու նախօրը օրը, Արսէն Գարօն, Վարդգէսը և ես իրիւրիկունը միասին պիտի մնցնէինք. Ջօհրապն ալ հրաւիրեցինք և միատեղ նաւ առինք, Մեծ Կղզի ելթալու:

Նաւին վերը, անկիւն մը քաշուած էինք. Ջօհրապը խօսուս ու խոսր, հայեացքը ծովի բացերուն, Ղղային աննդով մը իր ընչացքին հետ կը խաղար. ճամբաւ ամբողջ տևողութեանը խիտա տակաւ կը խօսէր:

Մտեցած էինք կղզիին, երբ արցունքով լեցուն աչքերը ուղղեց ինձի և լուզուած ըսաւ.

— Եվաղը կը մեկնիս, ուրեմն... լաւ է ու ազնիւ երթալ ժողովուրդին քով ծանր օրերուն: Յնդափօխութիւնը եթէ արժանիք իսկ չունենայ, բաւ է որ իր անդամները այսպէս կը գտատիարակէ — գիտնալ անձը առ ժողովուրդին: Իրէ՛ եթէ բանի մը պէտք ունենաս... ասոնք մեր գլխուն բան մը պիտի բերեն, գիտցած եղիր... դժբախտ ես ես որ չեմ կրնար հետևիլ ձեզի...»:

Իմ տարաբախտ բարեկամս, ինչպէ՛ս քօ զգուսուն հոգիդ, որ այնքան լաւ կը ճանչնար չրջապատին մարդակիր բորենիները, չկրցաւ նախազգալ թէ քանի սը ամիս վերջը պիտի տանեն քեզի փչրելու գանկը Հայաստանի սեմին վրայ...:

Մեր նաւը Վասիօրի բնանէն առաջ հարձուեցաւ պղտիկ նաւէ մը, ըսին թէ թորփիլներ ղետեղուած էին:

Սա մասնէն քիչ մը հետացած, ծովային թաթա-  
 ուրի մը հանդիպեցանք: Մեզմէ քանի մը քիչովէք  
 հեռուն, յանկարծ, փրփուրներու հսկայ շեղջակոյտեր  
 ապա ջուրը հսկայ շտարուանի մը պէս վեր ելաւ,  
 այդ առան երկնքէն սե սիւն մը իջաւ, հասաւ բարձ-  
 րացող ջուրին և ծարաւած վիշապի մը պէս սկսաւ  
 ծծել անյագ. սիւնը ծովէն մինչև երկինք երկարած  
 էր: Այս տեսարանը տեսց 8-10 վայրկեան, երբ  
 յանկարծ, սարսափելի պայթիւնով մը ջրային սիւնը  
 փչրուեցաւ, ամպը դէպի վեր ելաւ և վիթխարի ջրա-  
 յին անդունդ մը բացուեցաւ. որ կ'հետք կատաղորէն  
 մինչև որ աստիճանաբար լեցուեցաւ ու խաղաղեց. . .  
 Ճամբորդները չարագուշակ նշան մը կը նկատէին  
 այդ երևոյթը. թէև ոչ սնապաշտ, բայց ես ալ  
 բնագրէն ենթարկուեցայ՝ սիրաս ճմլուեցաւ:

Նրկրորդ օրը արշալոյսին արդէն Տրապիզոնին  
 առջևն էինք: Ոչ մէկ արգելք կար դուրս գալու:  
 Ամիջապէս մտկոյլ մը շար և քարափը ելայ: Նրևի  
 Պոլսէն հեռագրած էին, օրովհետև ելած—չելած, մեր  
 վաղեմի ամենի զինուոր Աւետիսը և տեղական ընկեր-  
 ւորներ ելան առաջա:

Անհրաժեշտ էր գիտնալ թէ Ընդհ. Ժողովի  
 պատգամաւորներէն ուե մէկը վերադարձած էր, հոն  
 էին արդեօք, Ըսին թէ օր մը առաջ Պոլիս էին  
 լսկնած Ակնունին և Ջարդարնանը. շատ ցաւեցայ:  
 Տրապիզոնի մէջ կեանքը խաղաղ էր: Վարդիկ  
 ելևի միաքերէն ալ չէին անցներ մտաւրուտ պատե-  
 լազմը: Հոն վերջին անգամ տեսայ մեր ազգախա-  
 ընկերներէն Սեդրակ Սոսանանը, և Վանցի վաղեմի  
 ընկերներէն Միհրան Արարքեցեանը, որ պղտիկ խա-  
 նութ մը ունէր և մտադիր էր Վան վերադառնալ,  
 ու Արմենակ թոխմախեանը, որ ճաշարան մը բացած  
 էր: Խեղճ աղաք, որոնք ժամանակ չունեցան ապա-

տանի Վանի իրենց քաջարի ընկերներուն ջով:  
 Եսուզեա էր Թիֆլիսի մէջ: Ռուս—թրքական  
 պատերազմը անխուսափելի կը նկատէին. Ժողովրդա-  
 կան հաւաքոյթներ տեղի կ'ունենային. օրոնց մէջ  
 լաճախ անյայտ մարդիկ ամբիոն կը բարձրանային՝  
 հրա՛րելով ամբոխին արասադութիւնները:

Սաչակրաց արշաւանքի նման բան մըն էր օր  
 կը պատրասուէր:

Միւս կողմէ թրքախոյ և կովկասական երիտա-  
 սարդութիւնը Դաշնակցութեան դուռները ափ էին  
 ասեր. կը պահանջէին հրապարակ ելնել և ձեռք  
 առնել կոմաւորական գունդեր կազմելու գործը: Ա-  
 նոնցմէ ամենէն գործօնը Հաճաղասպն էր, որ նոր էր  
 եկած Ընդհ. Ժողովէն և իրեն յատուկ օգւորութեամբ  
 ու թափով, կը պահանջէր ստանձնել կամաւորական  
 գունդեր կազմելու ղեկավարութիւնը:

Կը հետեցնէի օւրեմն որ կովկասի մէջ ապրող  
 հայութեան համար կամաւորական գունդերով կուրին  
 մասնակցիլ անառարկելի էր և բնական. հազիւ ա-  
 ուրիք եկած կը նկատէին թուրքէն վրէժ հանելու և  
 մանաւանդ մեր հողերը խլելու:

Այսպէս էր ընդհ. արամադուրութիւնը օր հեազ-  
 հեաէ կը վարակէր նաև հայ վերին խաւերը: Կը խո-  
 սիէն Պետերբուրգ պատգամաւորութիւնն սը զրկելու  
 մասին, որ առաջադրէր մեր քաղաքական պահանջ-  
 ները. Պետական Դուռայի անդամ Մ. Պապաջանեանը  
 հոն այդ օղջութեամբ կ'աշխատէր, կարծեմ:

Դարով մեր շրջաններուն՝ Դաշնակցութեան  
 ղեկավարութեան, ես դատայ զանօնք տառանուող և  
 անհանդիստ մտադուրութիւններու մէջ: Ընդհ. Ժողովէն  
 պատգամաւորներ եկած էին արդէն. ղեկուցումէն  
 գիտէին ուրեմն Ընդհ. Ժողովի օրոյումները և ի թիթի.  
 հատի առաջարկները:

Միևնոյն ժամանակ, ամէն կողմէ բարոյական ճնշում ի գործ կը դրուէր՝ դրական կեցողով վճռելու կամաւորական գունդերու խնդիրը և ստանձնել կազմակերպութեան ղեկավարութիւնը: Եթէ չեմ սխալիր նոյնիսկ արդէն հեռագրով կանչուած էր ապագայ վարիչներէն Անդրանիկը:

Արագէտ էր մթնոլորտը երբ հասայ Թիֆլիզ, ուր շատ մը խիստ կարևոր նիստեր ունեցանք կուսակցական ղեկավարութեան լայն շրջանի մը հետ:

Որոշ կը յիշեմ միայն առթիւ Զաւրիէվի քրոջ տան մէջ տեղի ունեցած ժողովները: Խոջ. Կարճիկեանը կը նախագահէր նիստին: Որքա՛ն փոխուած, հասունցած տեսայ այդ մարդը. խստադէմ, ինքնամփոփ, մեթափիկ և արտամբանազ. նկատելի էր որ կը վայելէր հեղինակութիւն նոյնիսկ աւելի հին ընկերներու մէջ: Ընկերներէն, օրոնք ներկայ էին մեր ժողովներուն, կը յիշեմ Ա. Եսայանցիները, Բազր, Թօփչեանը, Կորիւնը, Զաւրիէվը, Արշ. Թադէոսեանը և առթիւ Տէր—Դա. Թեանը: Իսկ ղեկավարութեանը Հայաստանի Բիւսոյի Պալատի հատուածի տեսակէտներու մասին, քննուեցաւ երկար, խոր լրջութեամբ և բազմակողմանի: Ինչ համար սակայն պարզ էր արդէն, որ Թիֆլիզի ընկերներու մէջ կը գերակռէր ռուս բանակին սկիզբէն իսկ կամաւորական գունդերով մասնակցելու տեսակէտը. ժողովրդական խաւերու խանդավառ ցոյցերը և միախնդները, մեր շարքերուն և մարտական տարրերու յամառ պահանջները ազդած էին անոնց վրայ. կը խորհէին որ կարելի չէր տարեբարին այդ բուռն շարժումը և շարքերու արամադութիւնները թողուլ ճակատագրին, նա կրնար վիստակար հուներու մէջ մասնիկ կալ գործիք դառնալ առաջ հրամանատարութեան:

Կը մշակէի կարգ մը պայմաններ կազմուելիք գունդերու մասին և պահանջներ (գունդերու հրամանատարական կազմի իրաւասութիւններու, ազգային Բիւսոյի ենթակարգելուն, թրքահայ ժողովուրդի կանխակալ պաշտպանութեան): Ի նկատի ունէին նաև Թրքահայաստանի ազատագրման խնդիրը, կայսրը հանդիսաւորապէս լցէտը է յայտարարէր իր խօստումը այդ մասին. Տօքթ. Զաւրիէվ այդ նպատակով Պետերբուրգ պիտի մեկնէր:

Ոսակցութիւններէն և վիճարանութեան ընթացքէն տեղեկացայ, որ Թիֆլիզի մէջ կազմուած է բոլոր հասանքներէ Ազգային Բիւսօ (կարծեմ առանց սոցիալ—դեմոկրատներու) և որ մերոնք կամաւորական գործի կազմակերպումը և ղեկավարութիւնը անոր կ'ուզեն յանձնել:

Ի նկատի ունէին արդէն գունդերու հրամանատարները և հրաւիրած էին զանոնք:

Ես կողմնակից էր Պալատի ընկերների հրկրորդ տեսակէտին — պատրաստի ուժեր ունենալ. չկապ ուրի ռուսական բանակին, մնալ կրաւորական գիրքի մէջ և ծայրայեղ կամ նպատաւոր պայմաններուն ուժերը ի յայտ բերելու: Երկարօրէն խօսեցանք ու վիճեցինք այս հարցին շուրջ:

Թիֆլիզի ընկերները արդէն բուսականաչափ խրաւած էին գործօն մասնակցութեան մէջ, համոզուելու հոգար իմ կամ Պալատի ընկերներէն օժանց բերած փաստներէն:

Անսահման հաւատ և օգնութիւն կը տիրէր կովկասաւոյութեան բոլոր խաւերուն մէջ, հաւատ ռուսական ուժերու նկատմամբ, հաւատ որ, վերջապէս, հայութիւնը պիտի հասնի իր լուսաւոր հանգրուանին և վստահութիւն, որ ռուս բանակը բոս

ամենայնի ու անվերապահ պիտի քաջալերէ ու օժանդակէ հայ կամաւորական գունդերուն:

Երթալով կ'աւելնային ուսու—թրքական պատերազմի հաւանականութիւնները: Պէտք էր շատ պել սահմանները կրնային գոցուիլ:

Ուղղակի իգշիր անցայ: Ըսին թէ Դրոյին Պայազիւ կը հանդիպիւ: Իգշիրէն մեկնելու նախօրէր իրիկունը քովս եկան Պաշկալէի հրեայ հարուստ վաճառականներէն երկու եղբայրները, որոնք վան պիտի վերադառնային Կովկասէն. բայց շատ կը վախնային ճամբաներէն, ըստ երևոյթիւն բաւական դրամ ունէին քովերնին. խնդրեցին ընկերանալ ինձ. իմ մէտքուի հանդամանքին կ'ապաստանէին:

Չընկիլի բարձունքին, որ սահմանադրուին էր ուսու սահմանապահ զօրքէն 8—10 հօգի (որոնց երկուքը հայ էին) անցած էին սահմանադէն ու հաւաքուած խօշոր ժայռի սը ստուերին մէջ, մաերմօրէն կը շողակրատէին թիւրք զինուորներուն հետ...:

Հետեանալ իրիկունը արդէն Պայազիւ էինք: Դրոյին հանդիպեցայ միայնակ տան պղտիկ սննեակի մը մէջ. իր քովէ էր եգօրը (յետագային Կարճչկեանի սպաննողը): Դրօն ճանչցուած էր և շատ ժողովրդականացած քիւրդերու մէջ «Սուրէն էֆէնախ» անուանով: Վաճառականութեամբ կը զբաղէր — որքան կը յիշեմ Կովկասէն շաքար և այլն կը ներսուծէր, փոխարէն օշխար և հօւս բերք արտահանելով:

Դրօն պատմեց թէ քիւրդ համիրիէներու մէջ խլրատում կը նշմարէ. անոնց մեծերը վերջին օրերը Պայազիւ լեցուած են: Ըսու թէ ինքն ալ կտրձեո հսկողութեան տակ կը գտնուի. բռներ մը կը գտանան իր շուրջը. կը նախընտրէ վերադառնալ եւ վստահ է որ պատերազմը պիտի պայթի. այդ տեսե-

նենէն արդէն նա կը խորհնր կազմելու ուժեղ կոմսւորական գունդ մը: Դեռ ես վան չհասած լուր ապր արդէն մեկնած է Պայազիւէն: Հեռապես էր չվստուած, օրովհետեւ, երբ Բերկրիի մէջ հանդիպեցայ Հայտարանցի պետերէն Մէհմէտ Սաադգիմեր վազմի և հաւատարիմ բարեկամին, ըսու թէ կատարութիւնը դաղանի հրահանգ է տուած դաւադրօրէն սպաննելու «Սուրէն էֆէնտին», Բայց նա գիշերը անհետացեր է: Մէհմէտ Բէգը պատմեց թէ իր աշիւրէթն ալ (հասիրիէ) հրաման է ստացեր պատրաստ լինելու: Պայազիւ է հրաւիրուած, բայց ինքը արսւտագիր չէ երթալ, թերևս որդին զրկէ. ապա ևւրսպական պատերազմի մասին ինձմէ տեղեկութիւններ տանելէ յետոյ, զլուխը ախրօրէն թափ տալով՝ աւելցուց:

«Գիշ հատ կայ այս բոլորէն. ժամանակին երբ քեզի կ'ըսէի թէ այս շուն—անհաւատ ոսկերուն (թիւրք) վստահութիւն պէտք չէ ընել, դուն կէ հաւատալիք. մեր ազէտ ու յիմար քրդութեան մէջ ալ միութիւն չկայ, որ հայերու հետ միանանք և գալիք օրերուն՝ մեր գործը կարգի դնենք... Աստուած մեզի օգնութեան հասնի»:

Երբ Պայազիւ էի, իբր պաշտօնական մարդ, այցելեցի գոյսագասին. շատ պաղ ընդունելութիւն մը ըրաւ. դիտէր որ Դրօյի քով եմ իջած ու նենգ արտայայտութեամբ մը հարցուց. թէ շատոնց է որ կը ճանչնայի «Սուրէն էֆէնտին». ըսի թէ Կովկասի յայտնի առեւտրականներէն է և օգտակար կրնայ լինել այս շրջաններուն: «Այո՛, — պատասխանեց նա քմծիծաղով մը — վաճառական ըլլալու համար, դեռ շատ ջանիլ է» — «Եթէ երիտասարդ մը կրնայ գոյսագաս լինել, դժուար չէ վաճառական գտնալ, պատասխանեցի ես կատակով մը, աւանց. ի հարկէ,

իր անհարկը հասկնալ ցօյց տալու :

Կ'անցնէի հայաբնակ գիւղերէ, հանդիպելով իմ վաղեմի բարեկամներու երկրւորոս բայց անտանձան յուսալի հայեացքներուն: Ինձմէ կը սպասէին լսելու "աւետիսը, — Հաւատանի մօտակայ ազատութիւնը...: Հայ ժողովուրդը խիստ նուրբ զգայութիւն ունի և բնագր. վտտտ էր, որ ուսաները պիտի արշաւէին դէպի Թրքահայաստան: Ասենքի կարծիքով Դաշնակցութեան և Կաթողիկոսի շնորհիւ է որ ուս կառավարութիւնը այդ քալլը պիտի առնէր, յապակապէս "հայութիւնը ազատելու անօրէններու լուծէն", ու հառաջանքով մը կը բացականչէին "Առաւուտ ինոր դուռը հատու անի...": Նոյնն էր մթնօրորը նաև վանի մէջ, Բաղաքի ժողովուրդը անշուշտ աւելի զուսպ էր, զգուշանալով զբռն. պատճառել թրքական թաղերուն կամ կառավարական շրջանակներուն: Թիւրք ժողովուրդը խիստ մտահոգ էր ու սմբած:

Վառմանը մինակ էր իր բնակարանին մէջ. հրաւիրեց իրեն հետ ապրելու: Ռուսական նախկին հրկատոսարանին գրեթէ կից, Դաշնակաճի առնն էր, կեկիկ երկու սենեակով և սրահով: Այդ առնն վան կը գտնուէին նաև Քաջազնուներն (որ Վասպուրաճանը վերէն վար ճամբորդած և լուսանկար ապակիներու մեծ պաշար էր հաւաքած), զաշնակցական "Խնչօն և Գալուստ Արօիանը, որ կարծեմ Դրօիի առեարական ընկերն էր Արճէի շրջանում: Հոն էին, ի հարկէ, Արամը, Իշխանը և Բուլգարացի Գրիգորը:

Այլ էր արամադրութիւնը մեր շարքային երիտասարդութեան և տարբեր՝ Վասպուրակոսի կուսակցական զեկավարներու:

Կրնամ վտտտհօրէն ըսել, թէ Վասպուրակոսի երիտասարդութիւնը (առանց կուսակցական խտրութեան) բացարձակ հակառակ էր թրքական բանակին

մէջ ծառայելու: ամէն գիւնով կը խուսափէր. մասնա. որապէս այս շրջանին, երբ անագին քաղաքական ակնկալիքներ կաին, երբ իրենց հայրենիքին ծառայելու րօպէն հասած էր և բարեկամ վիթխարի ուժ մը կը պատրաստուէր ճղնել թիւրքերուն, լիմարութիւն էր զինուոր երթալ: Այդտեղ ևս զօրեղ բարոյական ճնշման տակ էր Վասպուրակոսի Դաշնակցութեան զեկավարութիւնը:

Առաջին այս ապաւորութիւնը սասցայ, երբ շփման մէջ մտայ դիւ այցելող և մեր պատրաստած նօր սերունդին հետ:

Բայց անհրաճեշտ էր ընկերներու փութով ծանօթացնել Կովկասի մէջ տիրող արամադրութիւններուն և ձեռնարկներուն, քանի զեա — կը կարծէր — ուշ չէր:

Գոյազնուներն և Խնչօն կը պատրաստուէին Կովկաս վերադառնալ, ուրեմն պատեհութիւն էր անոնց միջոցով Վասպուրակոսի վիճակն ու զեկավարութեան տեսակէտները հաղորդել Արևելեան Բիւսօյի շրջան մըն էր, որուն կարծիքները և որօշումները էական նշանակութիւն ունէին:

Իսկ զեկուցումը՝ Պօլսոյ և Թիֆլիզի կուսակցական բարձրագոյն մարմիններու վերաբերմունքի և արամադրութիւններու մասին, խիստ ճնշող ապաւորութիւն թողուց ընկերներու վրայ: Ամենէն շտ ազդուած էին Արամը և Քաջազնուներն. անոնք թըրքահայ ժողովուրդին համար կօրտաաբեր կը համարէին կամաւորական գունդերու կազմութիւնը և մանաւանդ զօրծօն մասնակցութիւնը և ենթարկուած սուսակա բանակին: Դաշնակցական Խնչօն ճիշտ անոնց հակառակ, ուսերը հրճուանքէն վեր—վեր կը նետէր, աչքով արագ շրջաններ կ'ընէր դէպի անտառային լեռներ:

1244-2002



Հայաստանը, ու որովհետև անոր ընդուն անդոր էր համոզելու իրմէ զօրաւորներուն, բացազանչութիւնս ներ կ'արձակէր ու կից կուտար՝ ճինչպէ՞ս կարելի է... խելքի բա՞ն է ձեռքից թողնելու այս առիթը. նորից սիւսմիտ ենք մնալու... եթէ չխառնուենք, կարծում էք թրւրքերը սեղ հանդի՞ստ պիտի թողնեն...» մէկ խօսքով ամենալայն չափով մասնակցելու կողմնակից էր:

Վաստեանը, Իշխանը, Գալուստ Ալոյսանը և Բուլղարացի Գրիգորը աւելի շուտ կը միանային Պոլսոյ ընկերներու երկրորդ անասկէտին — պատրաստել ուժեր, բայց զործածել խիստ անհրաժեշտ պարագաներուն սիւսմին. այժմէն սուսական բանակին հետ չկոպտելի ու յանձնառութեան տակ չմտնել: Ուրիմն Վասպուրականը դէժ էր կամաւորական գունդելու պաշտօնական կազմութեան՝ ենթակայ սուսական սպայակոյտին: Այսպէս ալ հրահանգ տրուեցաւ Քաջաղունիին. Խեչոն մնաց իր անասկէտին վրայ և յանձն չառաւ պատուիրակի դերը: Քանի մը օրէն անոնք մեկնեցան:

Վասպուրականը անկասկած կազմակերպական սեւակէտէն, յեղափոխական կուսակցութիւններու և մասնաւորապէս Դաշնակցութեան զօրեղ միջնարեղն էր ժողովուրդը և մասնաւորապէս երիտասարդութիւնը լեցուած էր գլխաւորապէս Դաշնակցութեան սէջ: Դիւզերու կազմակերպութիւնները զանգուածաբան էին. անոնց մարտունակ տարրերէն ստեղծուած էին ինքնապաշտպանութեան կարգապահ զօրեղ խումբեր — որոնք կապուած էին իրար՝ գաւառական կեդրոնէ յը կառավարուելով, իսկ վերջինս ուղղակի կեդր. Կոմիտէին:

Չեմ հանդիպած երբեք և ոչ մէկ տեղ հայ ժողովրդական զանգուածներու, որոնք իրապէս այդքան

հաւատարմօրէն սնուած լինէին Դաշնակցութեան աւելչէն: Տարօնի հայութիւնը նորիպէս անցեալ մը ունէր, բայց երկրին պայմանները և անոնց խառնուածքը այդ ժողովուրդէն պատրաստած էր մօլեւաանդ հայեր, աղքատէրներ, իսկ Վասպուրականի ժողովուրդը ոչ այնքան մօլեւաանդ աղքատէրներ, որքան զիտակից դաշնակցականներ էին: Թերևս այս երեւոյթը կարելի է վերագրել ժողովուրդի կրթական մակարդակին, Կովկասեան հայութեան մերձաւորութեան և դաշնակցական մատուցականութեան հետ աւելի յաճախ և երկարատեւ շփման. կը դժուարեանամ ըսել:

Յենուած նման զանգուածի մը վրայ, Դաշնակցութեան ղեկավարները ամուր կը զգային ինքզինքնին, Կառավարութիւնը ևս անդիտակ չէր անոր: Առդ էր պատճառը, որ Վանի կուսակալ Թափն պէլը տարտաւ շփման սէջ էր դաշնակցական ղեկավար ընկերներու հետ:

Սրիտասարդ էր Թահոնը, կիրթ, խելացի և յարաբերական սիւսքով, անկեղծ իր վերաբերմունքին սէջ: Կը թուէր թէ մօլեւաանդ Իթթիհատականներէն չէր. չէր սիրէր բուռն միջոցներ և կը ձգտէր մեզի հետ ստեղծել միջին ճամբաներ, խուսափելու համար վասնզուոր շախուռմներ:

Արդէն իսկ զննուորակոչութիւն յայտարարուած էր: Հայերը կը խուսափէին. գաւառները և մասնաւորապէս Կարճկանի շրջանը հանգիստ չէր. թրւրք ստիկաններ ջրւրա բեզերու հետ դաւադրութիւններ կը լարէին Դաշնակցութեան մարտիկներու դէմ, և ընդհարումներ իսկ պատահեցան:

Թահոնը կը խնդրէր փոխադարձ համաձայնութեամբ կարգադրել նորակոչներու հարցը և անդիտանցող դէպքերը չթողուլ որ մեծ ծաւալ ստանան:

Իբր մէպուսներէն մէկը, Վառսեանը սեկնեցաւ Ոստան և տեղի գայմազամի հետ (Շիւքրի — սուլեռանդ և կրթուած իթթիհասական մը) Կարճկան անցաւ տեղին վրայ քննութիւն բանալու:

Սակայն Վանի Իթթիհասական քլիւպը շատ աւելի ուժեղ էր և ազդեցիկ քան Վանի Իշխանութիւնը: Քլիւպը կը վարէին Վանի լոթի թիւրքերէն մէկ երկուքը, գնդապետ Ջաֆէր Թայարը, վանեցի սպայ Վէֆէկը, Քիւլիւք Քիւաշիմը և այլն (հետագային Տարօնի հայութիւնը ջորդով ճրատսպ թապուրի» հրամանատարը): Աննշմարելի կերպով բացասական մեծ դեր կը կատարէր նաև հուսուած ժանտարմա քուժանդանը (սահասնապան ժանտարմա գնդին պետը) ապա Քնազիմը (էնկիւրիի ազգ. ժողովի» նախկին նախագահը և այժմեան «ազգ. պաշտպանութեան» գործավարը), ծայրայեղորէն հայտատեաց, դաժան իր պարտականութիւններու և պահանջներու մէջ:

Շատ յաճախ Թահսինը կ'այցելէր Վառսեանի բնակարանը, սւր ժողուած կը լինէինք, սեղմէ զատ Իշխանն ու Արամը:

Վառսեանն էր, գրեթէ միշտ, խօսակցութիւն վարողը, ան անկաշկանդ ու անվերապահ էր իր արտայայտութեան մէջ, անշուշտ, դեր կը կատարէր նաև իր մէպուսի անկախ հանդամանքը. խիստ էր քննադատութիւններու մէջ, գիտէր օրսալ դիմացինի արամադրութիւնները և օգտագործել զայն, առաջնակարգ բանազնաց էր. գիտէր պնդել կամ ի հարկին իր զիջումները արժեցնել. Վալին յարգանք ունէր անոր հանդէպ իբր խիստ ազնիւ մարդու, բայց անգործնական և միջավայրի տայմաններուն անձանօթ կը համարէր:

Արամի հետ մտերմօջէն կը խօսէին. կը քաշուէին անոր պաթկուսներէն. իր տեսողիւններու

պաշտպանութեան մէջ թափ մը, մտերմին շեշտ սը կը շնէր, օր կ'ազդէր դիմացինին հետ. բայց շատ անգամ իրւրքերը շահագործած են. անոր վայրկենական բռնկումները և ըրած քայլերը, ճթօհաֆ տաւա՛ տըրը» — կ'ըսէին անոր մասին — ասիրտ ունեցող մարդ էս:

Իշխանը գրեթէ չէր խօսէր մեր բանակցութիւններու ընթացքին, կամ ղէմքի գծերով և աչքերու. արտայայտութեամբ կը մասնակցէր աւելի շուտ: Մէկ կողմը նստած, ջղայնօրէն մատը քթին մէջ կը կօխէր ուժգին կամ մազերու հետ կը խաղար, իսկ երբ նկատէր նենգութիւն մը, կեղծիք մը, դու սը, քիչ մը արիւնով լեցուած աչքերը փայլ կը ստանային, սև կօպիճները արագ կը դառնային և բերանը հեղնական սպառնող ժպիտով մը կը ծուռէր: Խիստ կասկածամիտ էր իր բարեկամութիւններուն մէջ. Թիւրքերը օրոնց յաճախ հանդիպած էինք, կը հասկընային Իշխանին այդ ղէմքի խաղերը և աւելի զգոյշ կը դառնային:

Իշխանը սուտը ունէր թրքական քլիւպներու միակ մարդն էր սեր մէջ, օր գիտէր, պաշտօնականէ դուրս, կապ պահել ըրօր խաւերու հետ, մէջը լինելով եւրոպացիներ: Կը վայելէր յանդուգն եւ անվախ մարդու համբաւ. իր բարեկամութիւնը կը փնտրուէր:

Վանի զինուորական հիմնարկութիւնները այդ օրերուն (սեպտեմբեր) սեծ եղուղեախ մէջ էին. առաջնուս թրքական պատերազմի յայտարարութեան, ոչ միայն զինուորական հւժավորումներ կը կատարուէին այլև առաքումներ գունդերու ղէպի սահմանազրուխ:

Օր մը Թահսին պէյէն Վառսեանը և ես, իբր մէպուսներ, հշաւէր սաացանք ներխայ գտնուելու:

գունդեի ու զօրանցքի մը, որոնք սուսական սահման կը մեկնէին: Բերդի արևելակողմը, Աւանց գլխի ճանապարհին վրայ, հաւաքուած էին կառավարական և զինուորական բարձր աստիճանաւորներ չրջապատուած հայ և թիւրք անդին բազուլթեամբ: Թահսինը հրաւրեց մեզ իր քով, ուր կանգնած էին արդէն թիւրք մէջուս Միւնիբը և հիւպատոսները: Զօրքերու խուճերը զինուորական նուագախումբի հնչիւններու հետ կը քալէին մեր առջևէն:

Իթթիհատի կարևոր անդամներէն Զօֆէր Թայարն էր հրամանատար մեկնող խուճերին. նստած ձերմակ ձիու վրայ, սուրը մերկացուցած, հերոսի մը պէս կուրծքը դուրս ցցած, հպարտ մեզի բարեկցու անցաւ. Վէֆիէն ալ զօրաբաժիններէն մէկը կը վարէր: Զօֆէր Թայարին կը հետևէր Ռոտանի յայտանի շէյխ Սոյիաթը՝ երեսը քողով մը ծածկած և չրջապատուած փաթթեցաւորներով և քիւրդերով:

Մեր առն վերադարձանք, գտանք հեն Զօֆէր Թայարի այցեատմօք, որուն վրայ կարդացինք իր անունը և նոր պաշտօնը, ապա անկիւնին քով մեծ տառերով "Թիֆլիզ...": Վանէն ելած էր վատահօրէն թիֆլիզ հասնելու մտադրութեամբ:

Սեպտեմբերի վերջերն էին. Մեր դժբախտ ընկեր Դաւուսա Ալոյեանը պիտի մեկնէր Կովկաս. Նա ականատես եղած էր վերջին անցուդարձերուն. Եստէն անդեակ էր ընդհ. արամադրութիւններուն և իւրքերու պատրաստութիւններուն: Իր մեկնելու ժամանակ օրը դէպի Թօփրաք Քալէ օրսի ելանք իրեն, Վառմանին և Իշխանին հետ. կաքաւներ և նապաստակ սը բերինք, վերջինը իբր ճասրու պաշար պատրաստուեցաւ. հետևեալ օրը մեր առաջնորդներուն հետ հեռացաւ Վանէն:

Քանի մը օրէն հասաւ մեզի անոր գաւադրօրէն

սպանութեան գոյժը Պաւազիտի մէջ: Իթթիհատսականները միջոցներ ձեռք առած էին ներսի գաղտնիքները դուրս չհանելու դէս: Կը կարծէին թէ Ալոյեանը խիստ կարևոր գաղտնիքներ ու հրահանգներ կը տանի իր հետ... Պէտէտախն Շաքիրի օրագրէն կը պարզուի այժմ, որ Իթթիհատը դեռ սեպտեմբերի սկիզբէն օրոշած էր օչնչացնել հայ ղեկավարները:

Օրէ օր պատերազմի յայտարարութեան կը սպասուէր: Տենդուս կերպով հապճեպ ժողուած զօրքը սահմաններ կը դրկուէին. Համիախէները զունդերով սկսան երևիլ Վալիի սէրալին առջև. Թահսինը լսելի ու աւելի ջղային ու պահանջկոտ կը դառնար. հայ երիտասարդութիւնը արամադիր չէր ընդառաջ երթալու զօրակոչին. իսկ բանի միջոցնիր անզօր էին հարկադրելու անոնց: Կառավարական չրջանակները իրենց վերաբերմունքը փոխած էին հայերու հանդէպ: Ձերբազալած էին հնչակեան անդական երեք աչքի ինկած շատ խոռամնային երիտասարդներ, Սոլաքեանը Բուրաեանը և Ասօն. մեր միջատութեան վալին կը պատասխանէր թէ հրամանը Պաշտէն է և թէ հնչակները Ռուսմանիոյ մէջ գաղտնի ժողովներ են ունեցեր ուժիսին դէմ գործելու համար... Աղօտ լուրեր կուգային արդէն Կովկասէն կամաւորներու աղմկալի հաւաքոյթներու և կողմակերպութեան մասին: Անդրանիկի անունը արդէն կը լսէինք թիւրքերու բերնէն, որ իբր թէ եկած է Պարսկաստան: Իթթիհատի քիւպը խորհրդաւոր և աւտական ժողովներ անդի կ'ուսնենային. լուր կը չրջէր, որ հայերը կը զինուին և պիտի թիկունքէն դարնեն...:

Պէտք էր դրութիւնը փրկել: Դաշնակցութեան ղեկավարութիւնը կը խորհէր քիչ թիւով զինուորացընել աւլ և բոլորովին դասալիք չլինել: Իսկ երիտասարդութեան բրոյ մէկ մասը արամադիր էր բա-

նակին մէջ մանելու, պայմանով որ յղէնք արուի ի-  
րենց և ոչ թէ զրկուին ռամէլէն կոչուած գունդեր:  
Այդ ատենն էր, որ Արամը, իրեն յատուկ բանկուսով  
մը՝ դաւուլ զուրնայի ուղեկցութեամբ, սէրայի դուռը  
տարաւ քանի մը ատանեակ երիտասարդներ ու ճայ-  
րենատիրական ճառով մը յանձնեց անոնց, թէեւ  
անոնցմէ և ոչ մէկը մնաց բանակին մէջ. համբան-  
բէն փախան բարեբախտաբար:

Վասպուրականը սերտ յարաբերութեան մէջ էր  
Դուրանի (Տարոն) հետ: Հոն վերահաստատուած էր  
մեր ընկեր Ռուբէնը որ նոր վերադարձած էր Էրզրու-  
մէն. մասնաւ զ էր Տարոնի կացութեան վերաբերմամբ.  
գրեթէ նոյն վիճակը կը տիրէր և հոն: Հոկտեմբերի  
դիրզըն էր, որ ստացուեցաւ անկէ աւելի լուրջ մտա-  
հոգութիւն պատճառով նամակ մը: Պա-  
տերազմը անխուսափելի կը նկատուէր. զօրահաւաք  
էր. քիւրդերը շարժման մէջ էին. զօրք կը պահան-  
ջուի հայերէն. շրջանի պատգամատար Դեղամը վերա-  
դարձած էր Պոլիս: Պարլամենտը այդ ատենները հրա-  
ւերուած էր նիստի. հեռագիր ստացած էր նաև  
Վաստանը որուն պատասխանեց ընդարձակ տեղեկա-  
դրով մը երկրի ծանր կացութիւնը պարզօր. այդ  
պայմաններուն մէջ նա նպատակայարմար կը գտնէր  
մնալ իր ընտանեակն շրջանը և էր խնդրէր արձակուրդ  
տալ իրեն:

Նոյնիմաստ հեռագիր մը տուի նա Մուշէն մի-  
այն, յայտնելով թէ կարճ միջոցէն կը մեկնիմ:

Ոչ ոք կը մնար կառավարութեան հետ յարա-  
բերութիւն պահող: Կարիք կը զգային պաշտօնական  
հանդասանք կրող ընկերօջ մը:

Այդ ես էի, ի հարկէ: Ըն երներ որոշեցին որ  
անմիջապէս Մուշ մեկնիմ, անկէ Պոլիս անց ելու հա-  
մար: Ես ալ անհրաժեշտ կը համարէի այդ. քանի որ  
Վան օժտուած էր արդէն պէտք եղածէն աւելի զե-  
կավար ուժերով:

Բ.

# Դ Է Պ Ի Տ Ա Ր Օ Ն

Նոր թախիժով և չարազուշակ նախազգա-  
ցումներով համակուած կը մեկնէի Վանէն: Պարտա-  
կանութիւնը կը հարկադրէր ինձ, այդ վասնզներով  
յղի օրերուն, բաժնուելու վարիէ մը, որուն ամէն  
մէկ լեռ—բլուրը, հովիտն ու ժուռը կապուած էին  
սրտիս պատմութեամբ մը, և ժողովուրդէ մը, որուն  
հետ սնուցած էի երկար տարիներ՝ լեցուն սքանչելի  
պահերով և դառն ու առապանքով լի օրերով, որ  
դիրքին չէր ձգել եւ յեղափոխական այն սերունդը,  
որուն հետ ազրեցայ ու միտանդ կրեցի յեղափոխու-  
թեան կեանքի ծանրութիւնը, դառնութիւնները և  
հոգեկան հաճօյքը: Կը զգայի որ վերջին անգամ կը  
տեսնէի շէն Վասպուրականը:

Որոշած էինք զաղանի պահել մեկնուս ժողո-  
վուրդէն և տեղացի ընկերներէն: Լուր տարածած  
էինք թէ Աղթամար պիտի երթամ. կառավարութեան  
ալ ըսած էի այդպէս և խնդրած, որ ոտտիկան մը  
արամազրուի ինձ մինչև հեն:

Մ. ւ. օ կողմէ, կարգադրած էի, որ մեր հին  
հայրակներէն Լորթօն, օք այդ ատեն ձիապանու-  
թեամբ կ'ապրէր, մեկնուսիս հեռակալ օրը իրեր-  
բերէ Աղթամար, ուրկէ պիտի ուղեկցէր ինձի մինչև  
Բաղէշ:

Եթէ չեմ սխալիր, Հոկտեմբերի սկիզբներուն  
էր, երբ ճամբայ ելայ՝ մեր սքանչելի ծովակի ելրէն,  
ձիերու դանդաղ քալերով, ոտտիկանը ետևէս:

Մաշտակ գիւղին քովէն անցած պահուս չկրթի  
զրկել ի՛ծի իմ համեստ, հաւատարիս զինուոր Գաս-  
պարին անսնելու հաճոյքէն: Շատ երիտասարդ չէր,  
երբ օր մը եկաւ ինքզինքը նուիրելու յեղափոխու-  
թեան: ունեւոր էր և ամուսնացած: Մինչև վերջը  
մնաց իր պարտականութեան գլուխը, իսկ սահմա-  
նադրութենէն վերջ վերադարձաւ գիւղը իւր գութա-  
նին քովը:

Իմ անակնկալ երևումէս շփոթած ու անս: հ-  
ման ուրախ՝ գիւղը գլխուս հաւաքեց և գիւղով կը  
ճգնէր համոզել մեզու իրենց քովը: Մաշտակը ոչինչ  
գիտէր աշխարհին սպառնացող փոթորիկներէն —  
զաշտերէն հոտերը գիւղ կուգային խաղաղ, կտուր-  
ներն ճիճ ու պիժով կը վխտային: միայն Գասպարն  
էր մտահոգ. չէր կորսնցուցած հայգուկային հոտառու-  
թիւնը վառնգի պահերուն:

— Պատերազմի հոտ կուգայ, Պարո՛ն. եթէ  
լինի, էս շները մեր բուրդը կը գզեն. ըսինք ըստու-  
գ դէն գէնքի պէտք չմնաց, էս անգամ էլ աւելի...» կը  
խորհրդածէր նա, սիւնոյն ժամանակ իւր հարցական  
հայեացքը ուղղելով դէմքիս:

Ոտախանն աչ հանգիստ չէր: Ճաստան կողմ-  
նակի հարցերով կը ճգնէր խօսակցութիւն սկսել ու  
վերջը ախ ու վախով դարձաւ ինձ.

— Պէ՛, էֆէնտի օրթան գէշ կը տեսնեմ. նորէն  
յետֆիր սուրը մեր հողիէն վազ չի գար. վա՛յ մեզի  
պէս ֆուկարաներուն. չնչին ամսական մը ունին, որ  
չան աօքէ ձգուած փշրանքներ են. ի՛նչ պիտի լինի  
մեր ընտանիքներուն վիճակը, այս խեղճ երկրի վի-  
ճակը, Աստուած մեզի օգնութեան հասնի...»

Քաջալերեցի զինքը և բաժնուեցայ ուստանէն,  
ըսելով, թէ Ռատանէն անդին չեմ չուզեր նեղութիւն  
տալ իրեն:

Իրիկնամուտ էր երբ մինակս ճամբայ ել ու  
սու շէրեր էր, երբ ծեծնցի Ախալաքի Ախթամարի  
կաթողիկոսարանի դարպասը, գաճփաներու յարձա-  
կումներու մէջէն:

Բնաթաթախ դուրս ելան հօտաղները, ապա  
հին ընկերս Դանիէլ Վարդապետը ուրախութենէն  
ինքիւրմէ ելած, և Եղնիկը Ըսին թէ նկարիչ Թէրլէ-  
մէզեանը ևս 8—10 օրէ ի վեր հոն է ու առաջուորդե-  
ցին հիւրասենեակը: Մինչև առաւօտ հարցեր կուտային  
քաղաքական ընդհանուր կացութեան մասին: Տաք  
թէյը կու տալով, կը ջանայի բուտարել: Անհան-  
գիստ չէին: հաւատացած էին որ ուսու—թրքական  
պատերազմի մը պարագային ուսնները շարաթէ սը  
Վասպուրականի տէրը պիտի դառնային. անձ ան էր  
այդ երկու վարդապետներուն հրճուանքը:

Թէրլէմէզեանն էր քիչ մը տեսես, վստահու-  
թիւն չունէր ուսններու վերաբերմամբ և կը վախնար  
որ մեր ժողովուրդը ոտքի տակ երթար: Հեռեկալ  
օրը ցոյց տուաւ ինձ իր նկարած պատկերներուն շա-  
արժէքաւոր ու գեղեցիկ հաւաքածոն, որոնք բոլորն  
ալ, դժբախտաբար, կորսնցուց Վանի առաջին նա-  
հանջի ատեն:

Հեռեկալ օրը երեկաւ Լօրթօն իր փոռայեղ  
ճերմակ պեխերով, յաղթանդամ մարմնոյն համեմա-  
տութեամբ փոքր ձրու մը վրայ: Անագին փափախը  
վար առաւ. «Սխնեա՛ աէր» մը արտասանեց քիւն  
տակէն իր սովորական հեղնականի նմանող ժպիտով  
ու դառնալով ինձ, «Եկա՛, տէ՛ քէլի էրթանք, էսս  
վարդապետների սօտ շատ կննալ չեղ՛ի, կը սասնեն  
...» ու մանկական քրքիջով մը յատեցաւ ուտելիք-  
ներուն: Լօրթօն զինուոր սզած էր ինձ հին Նախըն-  
ւանի մէջ հայ—թաթարական ընդհարումներու սիջո-  
ցին. ինձմէ առաջ հոն էր արդէն, մասնակցատ թա-

Թարական լեռնալին գիւղերէն մէկուն վրայ եղած արշաւանքի մը. սպաննած էր Թաթար ազնուական պաշտօնաթող ժէնէրալ մը, որուն վերարկուն կարմիր աստառով. կը կրէր միշտ: Նշանակած էինք եկեղեցու դիրքերու հսկել: Բորը դուրս ցցած, դորշ ասփոկ փափախը գլխին, ձեռքերը ետև դրած կը հետևի մանաւանդ Թաթար անցորդներուն ու շարժումներուն: Մեծ սիրահար էր քաղաքի բէգերու դէմ կտրւներուն, Քաջ շներին պիտի սասչեցնէր, իննք են յեղաւոր, թէ չէ Քուքարա, քննու թաթարը խեղճ ին:

Անգամ մը սակայն, յանձնած էինք դարանէն գնդակահարել անդի մեծ բէգերէն մէկը, որ Զարդի հեղինակներէն էր. գնաց և վերադարձաւ:

- Վերջացիր, կը հարցնեմ:
- Չէ՛, Պարսէն:
- Ինչո՞ւ, այդտեղ չէ՛ր:
- Չէ՛, էնտեղ էր, համա ձեռքս չգնաց միտմիտ իր անդ նստած մարդը սպաննել...:

Կարգապահական պատիժ նշանակեցի և զէնքը ձեռքէն ափ մէկ շաքախ. յանձնեց, բայց չդադրեցաւ անարդար համարելու պատիժը. «Յեղափոխականը պէտք չէ որ պատի ետևէն մարդ զարնէ»:

Աղթամարէն դուրս ելլելէ վերջը՝ դաւալի եղաւ կարծես, որ Վասպուրահանէն կը հեռանամ: Արևմտեան Գուաշը և Կարճկանը հին տանները իբր ֆէտայի այցելած էի թէեւ, բայց ոչ շատ յահախ:

Գոմս գիշերեցինք. հին շրջիկներէն Վարդանը լրագիրներէն դիտէր աշխարհի վիճակը, բայց մեր ժողովուրդի մէջ լատտեռութիւն մը կտր եւ խոր հաւատ պէպի ռուսի թուրիո ամենակարողութիւնը: Տեղեկութիւններ առին իրենց շրջանի համրութենեքու խմբաւորումներու մասին. յայտնեցին որ շատերը

կը խուսափին և գունդերու կէտն իսկ չի ժողովուրդ:

Հեռեկալ մարդը որը գրեթէ կ'անցնէինք կապուա—կողի անտառապատ լեռնալանջերէն ձգուող արահետով, որ կախուած էր խորշերու վրայ թուալուող ծովին վրայ: Սորիէն այն կողմ կ'ընկնէր ասփառակը և Խնձորկիւնէն աստիճանաբար կը բարձրանանք գիշերելու Ուրտափ գիղը մեր երախաւար գիւնուոր հռչակաւոր Փալապետի կարապետի մօտ: Ոչ ոք ունի նա. ախոռ մը, որուն մէջ գետինը կը դրդեցնէ իր մշտաթաւը նժուղը, Դաշնակցութեան Մօսինը և նափուկիւն: Երկար տարիներով նա սովորութիւն ըրած է հրացանը ծուկկերուն մէջ գրկած, եսփուկիւն մէջ պլլուելը և պառկել իր նժուղին քով կապուած ախտակամածին վրայ:

Երկինքէն իջած էինք սնոր համար: Փաթ. թուեցաւ մեզ, համբուրեց ձեռքերս և գրեթէ ձեռքերու վրայ արաւ իր մենաուրի դախաին վրայ:

Դառնացած էր իր գիւղացիներէն, որ մեղկ են, սոսցած են յեղափոխութիւնը, դանդաղեցաւ գիւղի ղէտէն, որ կը պատակէ ժողովուրդը, իր խօսքով «մատնիչ» է և «լրտես»:

Ամբողջ գիշերը անոր ու Լօրթիի փոփոխը կը լսէի կրակին քով. երկու հին զինակիցները իրենց և ազդի ցուերը կուլային. Լօրթօն կից—կտար կը պտտէր. «Քողքէն» կուգար, շատ բան պէտք է որ գիտնար. կը պատմէր քաղաքական բարդ խնդիրներն որ լսած էր դէս—դէնէն. ինքն ալ յաճախ կը խնդար իր ըսածներուն վրայ. բայց Փալապետը խիստ մտախոն ու լուրջ կը լսէր ու անդադրին լարուածութեամբ հարցեր կուտար աւագ ընկերներու ամէն մէկի մասին պատերազմի, կառավարութեան, զօրակոչի հն. և ու Լուսարաց էր, նրբ Լօթօն նստած անդը քնացաւ:

Փալատները թէյ կը պատրաստէր:

— Կարապետ, ինչո՞ւ չքննար. հարցուցի իրեն:

— Ե՛, Պարո՛ն, ասէն որ գործս ի՞նչ է: Եւ քաջալերուած նստաւ և իր աղէքտերը բացաւ:

Իր. զին մէջ դաւադիրներ կային անոր դէմ. կառավարութիւնը անօնց սիջոցաւ կ'ուզէր սպաննել տալ զինքը: Աւ աւելցուց,

— Պարոն վաճառները կնիքը դրկեց ինծի որ վան երթամ, համա ես տեղէս չեմ էլնի, չուր սեր դաւաճան աէսը չսպաննեմ: Կը խնդրեմ որ հրաման ասս. ես ինոր հախէն գամ...:

Շօտ համոզեցի, որ մինակը չմնայ այ՞ անկիւնը, անմիջապէս մեկնի վան միտնայու հին ընկերներուն: Խօսափողական համաձայնութիւն մը տուաւ ու հեծնելով իր հրաշալի ձին ինկաւ առաջներս ու ետ ու առաջ քշելով առաջնորդեց մինչեւ

Բաղէչի կիրճի բերան զտնուող ճիւղանը: Վերադարձի պահուն խիտա լուրուծ էր. նորէն կրկնեցի պահանջս անմիջապէս վան մեկնելու. կէս—խոսաւում տալով՝ ձին մարակեց և անհետացաւ:

Ջարդերէ առաջ խարելով Բաղէչ տարին եւ բանտին մէջ սպաննեցին այդ սարի—առիւծը:

Բաղէչը կը գտնւի դէպի հարաւ Մղերդ տանող կիրճին մէջ. երկու կողմերէն պատնէչի մը պէս կ'երկարին հիւսիսէն հարաւ կցցանի ու Խրդանի և միւս կողմէ Մօսկանի ասեհի լեռնաշղթաները:

Լօրթօն, հակառակ չի յարասն կենսուրախ բնաւորութեան, լուս է, մռայլ և ստահոգ:

— Ինչո՞ւ չեմ խօսիր, Լօրթօ:

— Ինչ խօսա՞մ, պարոն, սիրտս հանգիտ չի. տիտո՞ս սեր մամլաքեաթը. . . ես էլ պիտի գամ հետք մինչև Մուշ. մինակ չեմ թողնի երթաս էս

վայրենի տեղերից...:

Գէչ էր աղբուած կիրճի մռայլ տեսքէն: Հաւկառակ իր յաղթանդամ հասակին, Լօրթօն ապուստուող էր և փուխ զգացումներ ունէր:

Արցունքով բաժնուեցաւ ինձմէ. "Դժնակցութեան Աստուածը քեզի հեռա՞ արտասանեց կերկերացող ձայնով Վր ու վերադարձաւ Բաղէչէն: Ձայն ալ վերջին անգամ տեսայ...:

Բաղէչ մտաւ սուս—թրքական պատերազմի յայտարարութեան օրը. այդ օրն իսկ Խրդանի շէյխ Սայրա Ալիի ըմբոստութիւնը զսզուած և տնար պարազուխներէն շէյխ Սէլիմը դեռ կը ձօնէր կախաղանին վրայ, քաղաքի հրապարակին մէջտեղը: 70 շանցած, երկար սօրուքով ձերուներ մը որ դուրսը սէկ կողսի վրայ հակած, պարանէն կախուած էր:

Հայոց թագին մէջ Սլաքի աւուն էր (Արսենակ Յոսիկեան), ուր իջանք:

Սլաքը յեղափոխական հին երախտուօրներէն էր, շատ լաւ քրտագէտ, բազմիցս իբր գործակալ աշխատած էր քիւրա զանազան աշխրէթներու, եւ մասնաւորապէս Հայտարանցի պետերէն Մուսթաֆա բէգի մօտ, որի բնակավայրը Տատինի Միջազան գիւղն էր: Բէգը և իր կնիք սեր հաւատարիս բարեկամներէն էին. հոն էր մեր զէնքերու փոխադրութեան գլխաւոր կայաններէն մէկը: Սլաքը սեծ համբու կը վայելէր շրջակայ աշխրէթներու մէջ և շատ օգտակար եղաւ յեղափոխական գործին:

Բաղէչի և շրջակայքի հայութեան վրեժակը, Սլաքի պատմածներուն համաձայն, շատ լուրջ էր և վտանգաւոր: Կառավարութիւնը համարիչներու գունդերը լեցուցած էր քաղաքը, օրօնք անխլաճութեան և թալանի կը մատնէին շուկան, որ հայերու ձեռքն էր: Նոյնիսկ հայ թողերն ալ սպասնալիքի տակ էին:

Նոյն վիճակը. մերթ աւելի վատաբար, կը տիրէր նաև հայ գիւղերու մէջ և ճամբաներուն վրայ: Միևս կողմէ խստորէն զօրանաւաքի ձեռնարկուած էր հայերու, որոնց մէկ մասը, դատան պայմաններու մէջ կ'աշխատեցնէին ճամբաներու և նոր զօրանոցներու շէնքերու վրայ, միևս մասը կը զրկուէր դէպի հիւսիս. հայերու զօրանաւաքը չարաշահութեան և սպորինութիւններու նիւթարկուած էր: Անխնայ բռնադրրաւումներ սկսած էին Բաղէշի վաճառականներէն և այլն և այլն:

Սլաքը և տեղական ընկերները պատմելով այդ բոլորը խորհուրդ տուին այցելել նաև առաջնորդին ու անկէ վերջ կուտակալին: Պէտք էին արդէն այդ երկու այցելութիւնները:

Առաջնորդ Սուրէն Գալէսեան երիտասարդ վարդապետ մըն էր, խաշօր, սև, վառվառն աչքերով: Դաշնակցութեան համակիրներէն չէր թէև, բայց այդ օրերուն անփորձ ու երիտասարդ վարդապետին համար քիչ օժանդակութիւն չէր ունենալ իր քով օսմանեան խորհրդարանի անդամ մը, որուն տուջև դօց չէին կուտակալի և ուրիշ կառավարական անձանց դուռները: Նա ևս թափեց իր դատնութիւնները, պատմեց իր դիմումներու մասին, որոնք բացարձակ ապարդիւն կը մնային:

Ստացայ տեղեկութիւններ և բնութագրիծը նաև կուտակալին մասին: Մուսթաֆա Ազատիւլ Սալըքը իթթիհատի դպրոցէն ելած էր, կրթուած, փորձ, խիստ ապակտով ու խորամանկ սէկն էր, կ'ըսէին, որ չէր հանդուրժեր հայերուն: Առաջնորդին հասկցուցած էր, թէ վարդապետը պէտք է որ բաւականանայ միայն հօգևորական պաշտօնով, թէ հայերը, իբրև օսմանեան երկրի քաղաքացիներ, արդէն կը վայելն հաւատար իրաւունքներ, ուրեմն պարտաւոր են ծա-

ւայել հայրենիքին ու կրել ծանրութիւնը: Կուտակալը զիս ընդունեց որոշ յարգանքով, բայց խիստ վերապահ էր և սակաւախօս: 40էն քիչ մը անց, մօրուքով սակէ ակնօցներու տակէն կը փախէր իր սուր, որոնող հայեացքը, որ սակայն քիչ ատիւ կը հանդիպէր աչքերուս...:

Լսեց ինծի ուշադիր ու քաղաքավարի, ապա քառ թէ այդ բոլոր դանգատներուն տեղեւի է ինքը. կը ջանայ ապօրինի և անարդար դէպքերուն վերջ տալ, բայց դատան պահանջը պատերազմի պէտք է որ բաւարարուի. բանակին զինուոր և պաշար հարկաւոր են, իսկ թիկունքէն կը պահանջէ կարգապահութիւն և ամէն տեսակի զոհողութիւններ.

— Ձեռք մէպուս էք և ինձմէ աղէկ պիտի զիտնաք — աւելցուց նենդ ժպիտով մը — թէ նման պահանքուն ինչ պարտականութիւններ կը ծանրանան ժողովուրդին վրայ: Կը խնդրէի ձեզ, յորդորել հայ աւարը, որ կրէ այս օրերու դժուարութիւնները. անտեղի միջամտութիւններ չըլլան կառավարական կարգադրութիւններուն, վատան ելէք, չս ալ պիտի ջանամ, որ ամէն քայլ կատարուի օրէնքի սահմաններուն մէջ: Աւելորդ չեմ համարեր ձեր միջոցով նաև յիշեցնել հայ առաջնորդին և կուտակցական պնտերուն որ այս արտակարգ պայմաններուն մէջ չեմ կրնալ հանդուրժել ուէ արգելք և շեղում մեր կարգադրութիւններէն:

Այսպէս լինցուց իր բողոքը Բաղէշի ապագայ հօշակաւօր ջարդարար Ապտիւլ Սալըքը (որուն դէպքը սպանալիք էր այդ պահուն) և որ Մուսթաֆա Բէմալի ելևտական նախարարը դարձաւ հետագային:

Ինծի կը մնար վերադառնալ Սլաքի քով և

Երբեք չի կրնար իմանալ ինչ էր այդ քաղաքացիական պատերազմը

9  
 (ապագային)  
 Չի կրնար իմանալ ինչ էր այդ քաղաքացիական պատերազմը

առաջնորդին հետ մեր երիտասարդութիւնը փրկելու  
ճարը խորհել:

ինչպէ՞ս սակայն:

Ենթակաները չնեղկայանալէն զինուորակոչու-  
թեան ատեանին:

Բայց չէ՞ որ այդպիսիներու ինչքը կը գրուէին,  
ծնողները պատանդ կ'առնէին և ասուը կ'այրէին:  
Կառավարութիւնը օրոշած էր մերժել զհայերու զին-  
ուորական փոխարժէքը (պէտէլ): Սլաքը այն կարծի-  
քէն էր, որ աչքի ինկած, նեղ պարագային անհրա-  
ժեշտ եղող երիտասարդները պէտք էր պահուէին.  
կէս փոխառական պէտք է որ դառնային նաև լեղա-  
փոխակոն և հասարակական գործիչները:

Վ անգը ակներև էր հայերուն համար: Պէտք  
էր պատրաստուիլ ինքնապաշտպանութեան իսկ ձա-  
խողանքի պարագային լեռ ելնել ու Մօսկանի գծով  
միանալ Մասունցիներուն կամ անցնիլ Կարկառ: Այս  
կարծիքէն էր նաև Վանի «առեկագէտ» Արսենակը  
(որու մասին խօսած եմ յիշողութիւններուս մէջ —  
«Հայրենիք» մամագիր):

Սուրէն վարդապետը ընկնուած էր բոլորովին,  
անգոր կատաղութեամբ մը համակուած, շատ յռետես  
չէր հայ յողովուրդի ինքնապաշտպանութեան կարո-  
ղութեան ստահն: Ժամանակէն առաջ մեր պատրաս-  
տութիւնները ուշադրութիւն պիտի գրաւէին և մատ-  
ուէին ձախողանքի: Ես զանգուածային ջարդերուն  
չէր հաւատար. հնարաւոր կը գտնէր սակայն, հայ  
ղեկավարութեան ձերբակալութիւնները կամ աքսորը:  
Այդպիսիները արթուն պէտք է գտնուէին՝ ի հարկին  
պահուելու:

Սնդրեցին ինձմէ, որ հեռագրեմ Պոլիս կառա-  
վարութեան և Պատրիարքարան՝ մեղմացնելու հալա-  
ձանքը և խտուրթիւնները: Հեռագիրը աննպաստիկ

համարեցի, բայց հեռակալ օրը տեղեկագիրներ ղրկե-  
ցի Պոլիս և ըրի շարք մը առաջադրութիւններ:

Այս ամբողջ խորհրդակցութիւններով և առա-  
ջարկներով հանդերձ, ամէնքը բնազդօրէն կը զգային  
թէ անարկու վտանգ մը կախուած է մեր զխուսն:  
Հեռակալ բնօրոշ դէպքը պիտի հաստատէ այն նա-  
խազգացուսը, որ իւրաքանչիւրը ունէր:

Կուսակալը ինծի ոտական մը ասուաւ ուղեկ-  
ցելու մինչև Մշոյ դաշտի առաջին հայ գիւղը: Ընկ-  
նուած՝ բաժնուեցայ իմ ընկններէն և տարաբախտ  
առաջնորդէն, որոնք քանի մը ամիսէն զոհ գացին  
գարշելի կուսակալի թակարդին:

Ոտականը ձիաւոր էր, ի հարկէ. եւ կիրճին  
մէջ, թէ Ռեզվանթուզ կոչուած անապատի տարածու-  
թիւնը անցնելու՝ ըրվէս կ'երթար, երբեմն այս ու-  
այն կողմէն, հարցեր տալով, բայց երբ Դուզէն ի-  
ջանք դաշտը և արևը կը թեքուէր դէպի հորիզօնը,  
ձիուն քայլերը դանդաղեցուց և ետևէս 15-20 քայլի  
վրայ սկսաւ գալ: Ի հարկէ, այն ժամանակ Իթթի-  
հատը դեռ վտարաբախտ չարութիւնը չէր ճրա-  
գրած մեր դէմ, բայց և այնպէս սքախ մէջ կասկած  
ինկաւ — արդեօ՞ք ետևէս պիտի գնդակահարէ...:  
Իբր մէպուս զէնք կրելու ազատ իրաւունք ունէի.  
աասնոց մազկէր ատրճանակը դեռ Բաղէշի մօտերէն,  
իր կոթին հազցուցած, ծունկերուս վրայ կը պահէի  
(Ռեզվանթուզը շատ ապահով վար մը չէր), բայց  
ինչպէ՞ս կր'այի դիտել ետևէս եկող ոտականին  
չարժումները և կանխել զայն, եթէ հրացանը չակէր  
ինծի: Երբ կը մտածայի, յանկարծ նկատեցի ստուերը  
որ ըրվընտի կ'իյնար միշտ, (հորիզօնին սօսեցող ա-  
րևը ետևնուս էր), հայեացքս ստուերէն չկտրեցի  
այլևս, իր բազուկներու կամ հրացանի ամէն մէկ  
չարժուսը կը տեսնէի...: Այս գիրքին և զգացումներու-

այնպէս էր (չարժուածային)  
այսպէս էր (չարժուածային)

այսպէս էր (չարժուածային)

րուն մէջ էր որ հասանք Մնղրագետի աշունքի վրայ  
գտնուող շատ փոքր հայկական գիւղ մը, որու անունը  
մտքեր ես այժմ, դժբախտաբար:

Գիւղի ռեսը, Ռէս Յակօն, եթէ չեմ սխալիր,  
և իր բազմամարդ ընտանիքն ու եղբայրները կը  
կաղմէին «գիւղին» մեծամասնութիւնը: Պատերազմէն  
երկրւոյ չունէին բնաւ. զբան մը եթէ պատահէր, Գըր-  
գուան ու Նէմրուիք ետեւին ր իսկ «Շամբուաը»  
(Վարդէնիսի ընդարձակ հասնախուաը) առջևնին...  
կրնային ամփոփել իրենց գեղջկական ուղեղին մէջ  
պատերազմին եւ անոր հետեւանքներուն տնաւորու-  
թիւնը:

Այդ գիւղէն մինչև Մուշ ստիպուած էի մինակօ  
երթալ. ձամբու ամբողջ երկայնքին հայ գիւղեր  
էին, իսկ «Շամբան» բարդ չէր: Առջևս էր Տըլեա ը,  
ուր ժողովուրդը տարօրինակօրէս հասգիւտ էր դարձ-  
եալ. «ասկեար չընք էրթա» թփըսկներս կ'աւնենք,  
կ'ընենք զիրքեր», այսպէս կը պատասխանէին իմ  
հարցին, ցոյց տալով ինձ գիւղի ծայրէն բարձրացող  
բլուր մը (պատմական արհեստական բլուր մըն էր,  
որոնցմէ կը գտնուին կարծեմ, ուրիշ գիւղերու մէջ):  
Սկրագոմի մօտ Մնղրագետէն անցայ գիւղացիներու  
հունով և Տէրվէնկանքի գեղեցիպատեսիլ ճերմակ տու-  
ներու ուղղութեամբ և արտերու ծայրերէն ինկայ  
կասգեղ—Մուշ մեծ ճանապարհին վրայ:

Երկր-2 չո-հէ/2

Գիւղացիներ հայր 2/2 9/20

Բ.

# Տ Ա Ր Օ Ն Ը

Մշոյ դաշտի հարաւային եղրին, Սասնոյ լեռ-  
նաղթթաներու և անկէ գահավիժող ձորի մը մէջ գե-  
տեղուած է Մուշ քաղաքը, որուն չորս հայկական  
թաղերը շեանաղթաներէն իջած են մինչև դաշտին  
սփերը:

Արևելեան հին գիւղաքաղաք մըն էր կարծես—  
փոքրիկ շէնքեր, «տառապանքներով» խանութներ և  
աղտոտ, ծուռ—մուռ փողոց մը, որ դաշտէն կը բարձ-  
րանար քաղաք: Շուկայի մէջէն կ'անցնէ՛ լեցուն  
չըլանի քիւրա հասարակ խողովքով, համիախէներով  
և դրացի կէս թիւրք, կէս քիւրա տարրերով:

Ակնածանքով ճամբայ կուտային ձիուս, կտր-  
ծելով թէ թիւրք պաշտօնեայ մըն էի:

Շուկային ծայրն էի հասած, երբ ոտական մը,  
որ հեռուէն կը դիտէր ինձի, մօտեցաւ, բարենց և  
հարցուց թէ՛ կրնա՞ր օ և է բանով օգտակար լինել:  
Ըսի թէ Դաշնակցութեան քլիւզը կը փնտռէի: Ոտախ-  
կանը այն ատեն խիստ սիրալիր ժպիտով մը խնդրեց  
հետևիլ իրեն:

Գործարուտ անպիտան ճամբայ մը կ'երկարէր  
ձորի կողերէն. ձիւս դժուարութեամբ կ'ըջնար: Զօրի  
յատակէն պղտիկ ջուրէ մը անցանք. բարտի և ուռի  
ծառերու ետին կեցանք երկյարկանի տան մը առջև:  
Դաշնակցութեան «քլիւզ» էր:

Ռուբէնին գիտէի Պօլիսէն: Տնդացի կարևոր

ընկերներէն — Կովկասէն կամ Վասպուրականէն —  
բաւական թիւով կը ճանչնայի. կարծես Սալւատա  
հանդէպած էի Մձօյին. Կոտայի Հաղիին՝ նոյնպէս  
հինէն, երկար ատեն վան մնացած էր, ճեմարանէն՝  
Արշակ Միրիջանեանը. Թիմարի «չըջիկ» Հաղին:

Մեծ հաճոյք մըն էր ինձ համար նորէն հան-  
դիպել Տարօնի հին և լաւ ընկերներուն:

Հեազհետէ ահումբը եկան բազմաթիւ այլ պա-  
տասխանատու լընկերներ — Գաւառեան Տիգրանը,  
Միրջանեան Արշակը, Սուլիար Արմենակը, երկու Յա-  
րօնները, Համազասպը: Առաջին անգամն էր որ ի-  
րենց հօդին վրայ և հարազատ լմիջովայրի մէջ կը  
տեսնէի Տարօնի ժողովուրդը և ընկերները:

Մեծ աօրբերութիւն կար Վասպուրականի և  
Դուրանի ընկերներու բնութագծերու, յեղափոխական  
ըմբանդութեան և հօգեբանութիւններու միջեւ:  
Վանեցի երիտասարդը կամ ընկերը կը սիրէ ընդ-  
հանրապէս ինքզինքը ցուցադրել առաջին իսկ հան-  
դիպումին և իր ունեցած խելքի և գիտութեան պա-  
շարը առաջը թափել լաւ գաղափար կազմել ապու  
հօշածութեամբ:

Իրապէս ալ, ի հարկէ, անոր ամբանդութիւնը  
աւելի լրիւ է և գիտակցական, քէ ս պ ու լ ս ի վ  
է և լախուան իր դճացումներու արտայայտութիւննե.  
բուն մէջ, մինչդեռ Տարօնցին չի սիրէր, մանաւանդ  
նոր միջավայրի կամ անձի առջև, ինքզինքը ցու-  
ցադրել. դանդաղ են իր շարժումները, սակաւախօս է  
և դիտող: Իւրայայտուկ փիլիսոփայի մը կը լիռով,  
վերապահ է ու քիչ բաներով շատ բան կ'ըսէ. պիտի  
հասկնաս. կամ կը խօսի, իր իրական միտքը ծած-  
կելու համար. պէտք է լաւ ճանչնալ զոյն, հասկնա-  
լու և մանաւանդ աարբերելու համար անոր իրական  
իմաստը:

Մէկ խօսքով, աւելի բարդ է անոր արկը.  
հասարակական խնդիրներու լըմբանդութիւնը նախ-  
նական է թէև, բայց խստօրէն ճշդուած, որուն յա-  
մառօրէն կը հաւատայ լինք: Իւրայայտուկ սքանչելի  
ոճ մը ունի, նուրբ երգիծանքով և հեգնանքով լի:  
Ինծի կը թուի թէ Մշեցիին է հին հայի իրական ախ-  
պը, իր բնածին իմաստութեամբը: Երկար ատեն  
պէտք էր ընտելանալու և մանաւանդ ճանչնալու Դաւ-  
րանի ընկերներուն. առանձին արուեստ մըն է անոնց  
հեա վարուելու և խօսելու կերպը:

Մեր կուսակցութեան կազմակերպութիւնն ալ  
հոն աարբեր նրանդ և ձևեր ստացած էր. Դուրանի  
ժողովուրդը իր յատուկ կնիքը դրած էր մեր կուսակ-  
ցութեան դաւանանքի, մասժողութեան և կազմա-  
կերպութեան վրայ, որ չէր նմանէր այլ տեղերուն:

Դաշնակցութիւնը կրօնական դաւանանք մըն  
էր դուրանցիներուն համար. կուսակցական ղեկավար-  
ները այդ սրբազան կրօնի ճուրմերն էին իրենց բողոք  
ստորագրիներով: Զանգուածօրէն դաշնակցական էին  
բոլորն ալ, դաւանութեամբ դաշնակցական: Անոնց  
չէր հեաքքերեր ծրագիրը ևն.:

Լաւ գիտէին միայն, որ Դաշնակցութիւնը նը-  
ուիրուած է հայ հայրենիքի և ժողովուրդի ազատա-  
գրութեան. Դաշնակցութիւնը ազդն է: Անոր անդամ  
եղողը զիւուր մըն է, որ կուրօրէն պարտաւոր է  
ենթարկուել պետին հրատանին կամ սկարմիր կնի-  
քին, որ զինուորագրուածը համազ զոհողութիւն  
պէտք է լինի. երիտասարդութիւն, սէր, ծնողք, ատեն  
— հարստութիւն գոյութիւն չպիտի ունենան անոր  
համար. ազդը և զէնքը իր պատչուն են, — ահա բո-  
վանդակ ըստնողութիւնը Դաշնակցութեան մասին:  
Երգէն մեր ըմբանած կազմակերպութիւնը հոն գոյու-  
թիւն ալ չունէր: Իւրաքանչիւր գլուղի մէջ կազմա-

կերպութիւնը Վեմիտէ մը ունէր, այսինքն անհատ  
 մը, որուն մէջ կը մարմնանար կուսակցութիւնը.  
 այսինչ գիւղի Մկրտչը, Մանուկը, Պետրոսը. Դազա-  
 րը մէկ—մէկ կ'օմիտէ էին, որոնք սփորարար բնա-  
 կան ներկայացուցիչները կը համարուէին ամբողջ  
 գիւղին:

Կուսակցութեան ընդհանուր ղեկավարը ասոնց  
 միջոցով կարգադրութիւններ կ'ընէր: Ձեւական էր  
 նաև Կ. Կօմիտէի գոյութիւնը. Բիւսօյի ներկայացու-  
 ցիչը տէրն էր և կարգադրողը բոլոր խնդիրներու:  
 Գրեթէ ամէն գիւղի մէջ ունէինք նաև հին, արժէ-  
 քաւոր ֆէտայիներ, մարդուած բազմաթիւ կռիւններու  
 մէջ, որ խաղաղ գիւղացիներ էին դարձած՝ նուիր-  
 ուած օրուան քարուստին և ընտանիքին, սակայն  
 անանջնին միշտ Դաշնակցութեան ձայնին էր. պէ՛տք  
 ունէին իրեն — ալ անոր աչքին ոչինչ կողմար, արե-  
 թը կը կապէր, հրացանը օւսին, դատան մասսևե-  
 ուսմով մը կը քայէր հոն, ուր պէ՛տք էր: Այսպէս  
 էր Դուրախի առասպելական յամառութեամբ, վճռա-  
 կանութեամբ, աւելի յախուսն էր և յանդուգն, բայց  
 նոյն արիւր դաշնակցականն էր ե՛ւ Սասունցին:

Դաշնակցութեան ակումբը նախապէս կարծեմ  
 բժիշկ Չաւրեանի հիւանդանոցու ընդունարանն էր  
 եղած: Շէնքի կէս յարկ բարձրութեան վրայ, փոք-  
 րիկ սենեակի մը մէջ տեղաւորուած էր զբաղարան —  
 ընթերցարանը, ուր կը ժողուէր քաղաքի պատանե-  
 կութիւնը: Վարը ախօռն էր, իսկ վերի յարկը հինգ  
 սենեակ և մի սրահ ունէր: Սենեակներէն մէկը իբր  
 խոհանոց կը դործածուէր, երկրորդը բժ. Չաւրեանի  
 գործիքներու և դեղերու պահեստն էր, միւս երկու  
 սենեակներուն մէջ, մենք էինք տեղաւորուած, իսկ  
 հինգերորդը հիւրասենեակի յաակացուած էր. հոն էր  
 որ կ'ընդունէինք թիւրք պաշտօնականներու այցելու-

թիւնը: Ակումբի «կառավարիչը», խոհարարը, ձիւ-  
 պանը, սուրհանդակը մեր հաւատարիմ Պողոսն էր.  
 սեղմ, բարեհամբօյր երիտասարդ մը, որ արաբունէ  
 մինչև իրիկուն անարտունջ կը կատարէր տաւնի և  
 դուրսի գործերը, յաճախ գաւառէն եկած ընկերնե-  
 րուն կուսակցական թելադրութիւններ ու խորհուրդ-  
 ներ անգամ ընելով...:

Քիչ անգամ կը ձաչէինք առանձին. իսկ առ-  
 հասարակ քաղաքի թէ շրջանէն եկած ընկերները կը  
 սեղանակցէին մեզի ամբողջ օրը հոն անցնելով: Իրի-  
 կունները միայն կը մնայինք առանձին Ռուբէնին  
 հետ և մտահոգուած բարդացող քաղաքական վիճակի  
 մասին միտքերու փոխանակութիւն կ'ունենայինք  
 օրուան ղէպքերու, տեսակցութեանց առթիւ:

Ակումբէն քիչ վեր, բլուրի լանջին Սուրբ  
 Մարինէի թաղի գերեզմանատունն էր, որուն մէջ  
 հանգիստ կ'առնէին Տարօնի արծիւ Դէօրդ Չաւուշի  
 սպորները...:

Հոկտեմբեր և Նոյեմբեր ամիսներուն յաճախ  
 սեծ ու փօքը ընկերներ կը ժողվուէին մեր ակումբը  
 զրոյցի:

Խիստ կը հետաքրքրուէին քաղաքական և  
 ազգամական անցուդարձերով: Օրուան աղիտալի շա-  
 բիքը զինուորադրութիւնն էր, որ կը մտահոգէր ժո-  
 ղովուրդը: Աղաղակող հակասութիւն կը թուէր իրենց  
 թրքական բանակին զինուոր երթալը:

Ռուսը պատրրազմ է հրատարակէր, կռուի մէջ  
 է մեր թշնամի թիւրքին դէմ. ռուսը քրիստոնեայ է  
 և կ'ուզէ ազատել հայերը — ինչպէ՞ս երթալ թիւր-  
 քերու հետ միասալ և կռուիլ ազատարարներուն դէմ  
 • այս արամադրութիւնը շատ աւելի զօրացաւ մա-  
 նուանգ երբ մեզմէ լսեցին, թէ, կախուորական զուս.

դեր կազմուած են նոյնիսկ Անգրանիկի, Գեաի եւ  
Իրենց ծանօթ այլ պետերու գլխաւորութեամբ:

Դաշնակցութեան և առաջնորդարանի յարաբե-  
րութիւնները շատ սերտ էին և ժամերիմ: Ներսէս եպ.  
Սարախանեանն էր առաջնորդը: Հազուադիւս հայրե-  
նասէջ ու ժողովրդասէր այդ հոգևորականը մեծ յար-  
գանք ու ժողովրդականութիւն կը վայելէր ոչ միայն  
դաշտի և Սասունի հայերէն, այլ հեղինակութիւն մըն  
էր նաև քիւրտերու համար. կ'ակնածէին անկէ նաև  
թիւրք մեծ ու փոքր պաշտօնեաները:

Դաշտի Աւրան գիւղէն էր՝ հին ընտանիքի մը  
մեծը. տարիներով պաշտօնավարած, հալածուած ու  
աքսորուած, կը մնար աննկուն, անձնուրաց, իրա-  
կան հովիւր էր ժողովրդի: Իրեն շուրջն էին ազգա-  
յին վարչական—կրթական մարմինները, որոնց ան-  
դամներուն մեծ մասը բարձր կրթութեան կամ իմա-  
ցականութեան տէր չէին թէև, բայց մուկառանգ հա-  
սարակական զէմքեր ու անշահախնդիր մարզիկ.  
որոնք գլխովին նուիրուած էին իրենց պարտակա-  
նութեանը և առաջնորդին:

Ասոնց մէջ աչքի կը զարնէին մանաւանդ,  
Նազարէի Էֆէնտին և Տէր—Չաքարեանը, կարծես  
երգուքն ալ Միսցեալի զպրօցէն ելած: Բանիմաց,  
հասուն եւ ներկայանալի զէմքեր, մանաւանդ առա-  
ջինը:

Ռուս—թրքական պատերազմի յայտարարու-  
թիւնը աննկարագրելի խուճապ առաջացուց Տարօնի  
մահմետական տարրին մէջ: Զօրակոչի մունետիկները  
արդէն իսկ քաղաքի շուկայի երկայնքին պոսալով  
կ'անցնէին՝ սարսափը կրկնապատկելով: Ըստ երևոյ-  
թիւն, մահմետական տարրը (ամբողջ ազգաբնակչու-  
թիւնը քիւրտ է արդէն և որոշ մասը թրքացած  
քիւրտեր, ինչպէս Բաղէշի քիւրտերը) ոչ մէկ համա-

րուս ունէին իր կառավարութեան ուժի և կարողու-  
թեան նկատմամբ:

Նոյնիսկ կառավարական բարձր պաշտօնէու-  
թիւնը յուսահատ էր: «Անհաւատ» սուսի հետ զլուխ  
չենք կրնար ելլել. կուսի դացողը ողջ չի կրնար վե-  
րադառնալ, այս էր բոլորի կարծիքը:

Ամէն օր գրեթէ հանդիսատես էինք շրջաննե-  
րէն քաղաք բերուող նորակոչ (րէֆիֆ) խումբերու.  
ողբալի էր անոնց տեսքը — ոչխարի հոտերու պէս  
կը լեցնէին մզկիթը, խաներու բակերը և չիտախար-  
խուլ շտեմարաններու մէջ, օրերով կը մոռցուէին հոն  
իրենց ապականութիւններու գորչանոտութեան,  
ցուրտի և անօթութեան մէջ:

Մանօթ ոս իկան մը կ'ըսէր ինձի, թէ հարիւ-  
րուոր նորակոչներէ, իրենք տասնեակները միայն  
կրնային հասցնել տեղը — մեծ մասամբ կը փախչէին  
ձամբաներէն:

Կը մտնէր հայերու համար ծանրագոյն ու  
վճռական երկընտրանքի վայրկեանը: Կառավարու-  
թիւնը հրաւիրած էր առաջնորդը և հայ երևելիները,  
ու պահանջած որ յորդորեն զօրակոչի հայ ենթակա-  
ններուն օր առաջ ներկայանալու. ատենաներուն, ինչ-  
պէս նաև յանձնած էին զինուորական պէտքերու մը-  
թերքի և պարենաւորման ցուցակներ, որոնցմով հայ  
առևարականներէն կը պահանջուէր շուտափոյթ ներ-  
կայարնել պահանջուած իրերը՝ փոխարէն ստացական-  
ներ առնելով:

Նոյրերըր ասուան վերջերուն էր, աստական  
բանակը անցեր էր արդէն սահմանը և կը յառաջա-  
նար. խուճապը կատարեալ էր մահմետական ժողո-  
վրդի մէջ, իսկ կառավարութիւնը օր աւուր աւելի  
զստան կը դառնար իր պահանջներով:

Առաջնորդը այս առթիւ հասարակական խառն-

բու լայն խորհրդակցութեան մը հրաւիրեց Առաջնորդարանին մէջ:

Տա՛լ զինուոր թէ ոչ, ի՞նչ սիջօցներով ժամանակ վաստակիլ. ինչպէ՞ս վարուին վաճառականները կառավարութեան պահանջած ապրանքներուն նկատմամբ:

Հրաւիրուած էին քաղաքի և շրջանի աչքի զարնող հասարակական և յեղափոխական գործիչները: Ես իբր հիւր կը գտնուէի անոնց մէջ:

Կառավարութեան հետ, զանազան առիթներով, չիման մէջ եղողները կը թելադրէին մէկ կողմէն համակերպիլ, այսինքն երևութապէս բաւարարել կառավարութեան պահանջը, միւս կողմէ սակայն ցանկալի կը նկատէին, որ ճանհետացնեն իրենց ունեցած գոյքերը: Զինուորութեան ներկայացնել սակաւաթիւ երիտասարդներ ձամբաներէ փոխչելու դիմաւորութեամբ, պէտէլ առաջարկել աչքի ինկածներուն համար: Հին մարտիկները սակայն կը կարծէին, որ այժմէն իսկ կառավարութիւնը պէտք է հասկնայ թէ հայ երիտասարդը չի կրնար իր ընտանիքը թողուլ երեսի վրայ, քանի որ քրդական ասպատակութիւնները աւելի մեծ թափ և ծաւալ ստացած են. համիտիները ոչ մէկ իշխանութիւն և օրէնք չեն հասկնար. կը լեցուն զիւզերը և կը լափշտակեն ինչ որ իրենցը չէ: Բոլորի հայեացքը սակայն Դաշնակցութեան ներկայացուցիչ երեսին էր. ինչ կարծիք ունի նա. կրնա՞յ ազդել կառավարութեան վրայ, ի՞նչ կը սպասէ մեզ հետագային. պիտի կրնանք դիմագրաւել զարութիւններու:

Առանոտը զլիտաւոր մաշեօգութիւնն էր զսիրտզան քայլերով ու փոքր զիջումներով ժամանակ շահիլ, կային ուսուսկան բանակի յառաջացման հաւանականութիւնները, յետոյ, հեռոյնէ պիտի պար-

զուէր միջուորած և յաջորդող նոր դէմքերը, որոնց մէ կրնային օգտուիլ և, վերջապէս, ժամանակ պէտք էր մեզ՝ ինքնամիտփութելու և պատրաստուելու:

Սրբազանը խիստ անհանգիստ էր հայ կամաւորներու գործօն մասնակցութենէն. անորոշ երկիր մը ունէր անոր հետանքներէն. կ'ուզէր միթիթարուիլ անով, որ շուտով գոնէ կրնան հասնիլ Տարօնի դաշար, մինչ այդ պէտք էր չիզել յարաբերութիւնները կառավարութեան հետ և ստեղծել այնպիսի կացութիւն, որ սեէ կատկած չհրաւիրէր և չհարկադրէր աւելի անձանցի միջօցներու դիմելու:

Ռուբէնը իրեն յատուկ վերապահութեամբ կ'արտայայտուէր: Դաշնակցութիւնը խզելու կողմնակից չէ. յենք զիտեր մօտաւոր ապագան և ուսուսկան բանակին չենք կրնար մեր յոյսերը կապել: Հարկադրուած ենք մեր քաղաքացիական պարտականութիւնները կատարել, զոնէ երևոյթները փրկելու համար: Կուսակցութիւնը իր ձեռքէն եկածը պիտի ընէ մեզմացնելու կառավարութեան պահանջները և միւս կողմէ համազգային ուժերով պատրաստուիլ աւելի գէշ օրերու համար:

Ահա սօտաւոր ամփոփումը ժողովականներու արտայայտած կարծիքներուն. իրագործումը կը մնար կառավարութեան հետ ի պաշտօնէ յարաբերութիւն պահելու. հնարաւորութիւն ունեցող Ստրախանեան սրբազանին և ինծի:

Այս առթիւ էր, որ կ'ուզէի դասը շրջիլ անմիջական չիման մէջ մասնելու Դուրանի ժողովուրդին հետ և մօտիկէն ճանթթանալու անոր անտեսական կացութեան, ցաւերուն և մանաւանդ օրուայ կենսական խնդիրներու վերաբերմամբ ունեցած արամադրութիւններուն:

Լեռներէն եկած էր այդ օրերուն Վասպուրա-  
կանի մէջ ինծի գործակցած Կողբեցի Տիգրանը, որ  
«Յարութիւն» անունով կը ճանչնային այժմ:

Տիգրանը 1904ին մտած էր վաճառել իր ծի օգնելու  
համար. մեր Զննաւորութիւնները սակայն ներդաշ-  
նակ չէին. նա խիստ նեարդային էր, քիչ մը պիւ-  
նօքրատ, չոր վարուելակերպով, և մտնուանդ անծա-  
նօթ երկրի պայմաններուն՝ չէր կրնար շուտով ըն-  
տելանալ միջավայրի պահանջներուն ու հոգեբանու-  
թեան: Այն ատենուան պայմաններուն մէջ անկարե-  
լի էր թող տալ նման յարաբերութեան շարունակու-  
թիւն. մասամբ ինքն իրեն, մասամբ ալ իմ անուզ-  
դակի վերաբերմունքով հարկադրուած եղայ չէզոքա-  
ցնել զայն այնքան, մինչև որ Արամի և Իշխանի  
հետ ալ անկարող աշխատելու՝ թողի երկիրը:

Ուրիշ պատճառներն է այդ սակայն: Տիգրանի  
հետ հանդիպեցանք երկու յեղափոխական ընկերներու  
ամենաջերմ գիրկախառնութեամբ. Ի հարկէ, մօտը-  
ուած էր ամէն բան: Ապրեցանք միասին և անմո-  
տանալի կարճ օրեր անցուցինք անոր ու Ռուբէնին  
հետ:

Տիգրանի առաջարկով էր, որ միասնաբար  
չըլջանք: Զօրի գիւղէն սկսելով այցելեցինք Մասնա-  
վանք, Սաղաթաղ, Սուլուխի հինաւուր, կամուրջէն  
անցնելով մասնա կուրավու, Ծրօնք, Աղջան, ապա  
Աւրան, ուր Սարախանեան սրբազանը քանի մը օ-  
րով եկած էր իր եղբօր տունը:

Մեր անցած բոլոր գիւղերը լի էին առատու-  
թեամբ. գոմերու մտերմերու երկայնքին կապուած  
էին շաքիւր կովերու, ձիերու և ամեհի գոմէշներու,  
փորանները՝ ոչխարներու և այծերու հօտերով լե-  
ցուն: Հայ հիւն նահապետական գիւղն էր իր առատու-  
թեամբը ու առասպելական հիւրասիրութեամբը:

Այսուհետ էր. գիւղացիները այնցան կատարած՝  
սեծ մասով, հանգստի մէջ էին և առատ ժամանակ  
ունէին ընդունելու մեզի: Սակայն պաշարուած էին  
անորոշ ու ծանր նախազգացումով մը, մտախոհ էին  
ու թախծոտ: Պատերազմով կ'ապրէին. զինուորակո-  
չութեան և մթերքներու գրաւման հրամանը հասած  
էր հոն ևս ու անհանգիստ՝ անդադար միւսնային հարցը  
կուտային սեղ ըլլալ կեղծի. . . — երթալ—չերթալ  
զինուորութեան, յանձնել մթերք թէ ոչ:

Վարդայի և Պուլտեղի լեռնաշղթայի ստորոտը  
և միւս կողմը փռուած Զիպրանցի ու այլ աշիրէթնե-  
րը անտուն էին զարձեր. Համիտիներու համազգեստ  
հագած, խուճերով կը մանէին Մեղրագետի ալ ափին  
սփռուած հայ գիւղեր ու կամայական բռնագրաւուս-  
ներ ու թալան կ'ընէին. տեղ տեղ սպաննութիւններ  
ալ կը կատարուէին: Թըլա Շեյխը, Մուսա, Դասըմ  
ու Նիօ պէյերը, Զաթօն Պարիօ ու այլ քրդական  
բորենիներ գլուխ էին բարձրացուցած. իրենց մէջ  
կարծես այժմէն բաժնած հայ գիւղերը՝ սարսափի  
տակ կը պահէին: Մեր ժողովուրդը անցեալի դառն  
փորձով կը լզգար կարծես մտաշուտ անաւոր օ-  
րերը. . . :

Սրբազանի հետ այցելեցինք նաև Մսկուն,  
Տէրկէվանք, Առաղ, Բերդաչ, Հաւասորիկ և Աւա-  
քելոց վանքը, ուր վանահայր էր առաքելափայտ  
սուրբ Ժեռուհին — Յովհաննէս վարդապետը: Առանձ-  
նացած խցիկին մէջ, իր իմաստուն հայեացքով յստակ  
կը տեսնէ ստեղծի վաղը որ պիտի գար և կ'ողբար  
Տաթօնայ աշխարհը. «Խրութեամբ հեռացանք: Ան-  
ցանք նաև Գառնին և Ս. Յովհաննէս վանքը, որի  
վանահայրը Հ. Մկրտիչն էր, յայտնի ըլլաւ վար-  
դապետը, որ կ'ըսէր թէ բանէ մը վախ չունէր և  
առատ հայնոյանը կը թափէր կատաղարութեան գըլ:

խին:

Ամէն տեղ անորոշ երկիւղ մը կ'իշխէր մութ ապագային հանդէպ:

Ժողովուրդը Դաշնակցութեան կապած էր իր բովանդակ յոյսերը. անոր կարգադրութիւններուն և վճռական խօսքին կը սպասէր:

Դժբախտաբար զինուած չէր մեր ժողովուրդը: Քիչ շատ գործածական զէնքեր ունէին միայն հին մարտիկները, սիւսները մաշուած ու պակասութիւններով էին. խիստ սակաւ էր փամփուշտը: Եւ չտեսային ճակատագրականութեան կ'ազմակերպութիւն և ոչ մէկ տեղ և մանաւանդ ընդհանուր ծրագիր մը ապագայ անակնկալներու հանդէպ: Առեւեոյթը կարծես կարիք չկար անոր, կը թուէր թէ ամենքը պատրաստ են առաջին իսկ կոչին համախմբուելու, բայց քիչ միջիթարական էր այդ երեւութական պատրաստակամութիւնը. քանի որ խումբերու չէին վերածուած, իրենց պետերով, նպատակով, զանազան առիթներու նախապատրաստութեամբ, ազգայնութի կանխակալ պատրաստութեամբ, քիւղերու և շրջաններու ազգական կապերով, հրահանգներով և այլն, աշխրէթներու վիճակին մէջ էին: Կը թուէր թէ կուսակցական ղեկավարները ազանդուած էին Մշոյ և Սասնոյ ժողովուրդի աւանդական ազգամուտութեամբ և մարտական փորձառութեամբ: Դժբախտաբար, քիչ յոյս կը ներշնչէր նման «կազմակերպութիւն» մը: Վերաբարձիս, Ռուբէնի և Տիգրանի ու Մճօյի հետ գլխավորապէս (Կոստայի Հայրն հետու կը պահէր ինքզինքը), առիթ ունեցանք երկօրօրէն անդրարս անալու այդ կենսական խնդիրն, թէ և ընդհանուր վերահաս վտանգի (չարդի) կասկած դեռ չունէինք: Ռուբէնը լամպօրէն տեսակէտ մը կը պաշտպանէր, որ մինչև վերջը շարունակեց, դժբախ-

տաբար, առաջնորդուելով անով. վաանգի պահուն, կ'ըսէր նա, դաշտը չի կրնար պաշտպանուիլ, իսկ քաղաքը վտանգելի լինարան մը չէ ինքնապաշտպանութեան տեսակէտէն. մեր ուժերը պէտք է կեդրոնացնենք Սասուն և հօն կազմակերպենք ինքնապաշտպանութիւնը, ապաւինելով լեռներուն և լեռներով լեռնական մեր ժողովուրդին:

Մճօն չէր բաժնէր Ռուբէնի տեսակէտը քաղաքի մասին, բայց դաշտի նկատմամբ նոյն կարծիքը ունէի: Տիգրանն ալ Մճօյի պէս կը խորհէր: Իմ կարծիքը հիմնովին տարբեր էր անոնցմէ: Այս տարակարծութեան դեռ առիթ կ'ունենանք վերադառնալու:

7.

### ՄԵՐ ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՏԱՐՉՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Տարօնի քիւրա տարրը իր քաղաքական ուղղութիւնը կը ստանար Մշոյ քիւրա բնակչութեան ղեկավար տարրերէն և մանաւանդ Մուշի Իթիթիտաի քիւլպէն: Մուշի քրտութիւնը կ'ապրէր քաղաքի արեւմտեան մասի բլուրներու և անոր ետե գտնաւող ձորին մէջ: Քաղաքի մանրտական ք հայ բնակչութեան յարաբերութիւնները ընդհանուր առմամբ եղած էին մտերմական և թաղաղ: Ընտանիք մը (քապէլա) կար սակայն, որ սուրբաւանդ աւատական է եղած և հայերը իրաւազուրկ դարձնելու և իբր ստրուկ գործածելու ձգտած է. «Բօթանենց» տուն կը կոչուէր:

Հաջի Մուսայի գլխաւորութեամբ: Այդ ատենն է հըռ-  
 չակաւոր Հաջի Իլիասը, Մուշի մէպուսը, որուն մայ-  
 րը յափշ Կոնստանտնուպոլիս մըն է եղած. ինքն ալ  
 հայերէն գիտէր և ինքզինքը մօտ ցոյց կուտար միշտ  
 հայ շրջանակներուն. երիտասարդ, նենգ, խիստ  
 հայապետաց, քսու, գարշելի դեւերէն մէկը: Այդ ըն-  
 տանիքէն էին նաև կարծեմ Մուշի Իթթիհատի պե-  
 տերէնն և խկին հարկահաւաք դատան Թաշիարը, եւ  
 կարուածատէր «Ջան Պէզար» Ծարամաղը:

Սիշեալ քապէլայէն զատ հայոց ձորամիջի թա-  
 դերու սօտ կ'ապրէր նաև աւելի թոյլ «Պայրաքա-  
 րենց» քապէլան, որուն պետը, Հաջի Մուսթաֆան,  
 խելացի, նախապետական յարգելի ծերունի մըն էր,  
 որ կ'ատէր Թօթանենց ցեղը՝ շերկրի օձեր» անուա-  
 նելով գոնոնք:

Իթթիհատի քրիւպը, ուրեմն և երկրի քաղա-  
 քական ու հանրային գործերն ու արդեցութիւնը  
 Թօթանենց ընտանիքի կամ անոնց կուսակիցներու  
 ձեռքն էր, մանաւանդ, որ Հաջի Իլիասը, շնորհիւ իր  
 իթթիհատական և մէպուսական հանգամանքին,  
 ստեղծած էր արդեցութիւն մը, որուն ուժով նսեմա-  
 ցուցած էր Մուշի միւս քրդական ընտանիքներու  
 հեղինակութիւնը: Կառավարութիւնը անոնց վրայ կը  
 յենուր, շրջաններու պատասխանատու պաշտօնները  
 անոնց կուսակիցներուն կը տրուէր:

Մուշ հասնելէս անմիջապէս յետոյ, բնականօ-  
 րէն առաջին այցելութիւնս պիտի տայի Մուշ սան-  
 ճաքի միւթէտարիֆին, դատարանի նախագահին,  
 զորաց հրամանատարին և տեղացի երևելիներուն:  
 Այդպէս որոշեցինք Սարախանեան Սրբաղանի հետ  
 խորհրդակցութեամբ:

Միւթէտարիֆ Սերվէթ պէլը, երիտասարդ եւ  
 կրթուած պաշտօնականներէն էր, քիչ մըն ալ ֆրանսե-

րէն կը խօսէր. Հիլմի փաշայի "դպրոցէն", դատաւա-  
 րակուած էր քաղաքական—վարչական դեկավարու-  
 թեան համար: Բաղէշի կուսակալ Ապտիւլ Խալըքէն  
 պակաս փորձառու, աւելի թոյլ, բայց թերեւս աւելի  
 խելացի այդ երիտասարդը, կրցած էր մեծ արդե-  
 ցութիւն ձեռք բերել երկրի մէջ. ասոնքը կը վախ-  
 նային անոր նեարդային շարժումներէն, բռնկումնե-  
 րէն ու կարող կարգադրութիւններէն: Ըստ երևոյ-  
 թին, Թալաթի առանձին հովանաւորութիւնը կը  
 վախէր ու կրնն ալ, չեմ յիշեր թէ ո՞ր նախարարին  
 ազդեկանուններէն էր:

Ընդունելութիւնս վերապահ, բայց խիստ սի-  
 րալիր էր: Ի՞ր ուրախութիւնը յայտնեց, որ այս ծանր  
 օրերուն ես կուգամ իրենց և հայրենիքին օգտակար  
 լինելու, ու յոյս յայտնեց, որ ինքը և ես իբար պի-  
 տի աշակցինք թիկունք կազմակերպելու հասար: Պատասխանեցի թէ որչա՞ծ էի Պոլիս վերադառնալ  
 այս գիծով՝ ծանօթանալու համար երկրին այս մասե-  
 րուն, աշուշտ, կրնամ մնալ հոս ժամանակ մը, եթէ  
 օգտակար կը համարուի և պատրաստ ես ըստ ա-  
 մենայնի աջակցիլ կառավարութեան այս դժուար  
 օրերուն:

Այս տեսակցութիւնը անշուշտ քաղաքավարա-  
 կան այցելութեան գոյն ունէր. փոխ—այցելութիւնը  
 չուշտաւ. հետեւեալ օրը նա եկաւ մեր «ապուլը»  
 կառավարական քանի մը բարձր պաշտօնականներու հետ:  
 Ռուբէնի հետ մտերմօրէն կը տեսնուէին անոնք օ-  
 բայց հակառակ անոր, որ ընկերօջ: շէմքը կը ժողտէր  
 ամենուն, կը գիտէի որ կը խրաչէր աւել շրջանն:

Ձինուերակէն հրամանատար Վասֆի պէյը,  
 տարիքօտ, ճարպօտ ու մեծ փորով հին հազարապետ  
 մըն էր: Բարի մտրդու ու անհօգ տրարածի մը երե-  
 ւոյթը ունէր. շատ բաց սիրտ ու մտերմօրէն ընդու-

նեց զիօ. հիւրասիրեց ճիւղ պատաստած» խմորեղէ-  
 նով և խոստացաւ ի յ բոլոր պիտուներուն ընթացք  
 աւլ. խնդրեց միայն, որ յորդորեմ հայ երիտասարդ-  
 ներուն չխուսափիլ զինուորութենէ. ինքը կ'ուզէր,  
 որ առանց բռնութիւն ի գործ դնելու կտրագորուէր  
 այդ խնդիրը: Անոր հետ թիչ մը աւելի խորացաւ իր  
 յարուցած հարցերուն մէջ օգտուելով տնտեսութեան իր  
 վաշտուելակերպէն, սակայն, նկատեցն թէ հլու կա-  
 մակաւորն էր սիւսն միւսէթարիֆին և կը վախճար  
 իր պաշտօնը կորսնցնելէ և հետեւաբար սիւսքերը կը  
 ծածկէր ու չէր ուղեր աւելի բացօճիլ: Յամենայն  
 դէպս, որոշեցի օգտուիլ իր բարի տրամադրութիւն-  
 ներէն:

Իթթիհատի տեղական վարիչներուն հետ չը-  
 փուսները նայնպէս շատ կարևոր էին: Առաջին կարգի  
 վրայ կանգնած էին երկու դարչելի ճիւղեր — Ռ.Ս.  
 շիւր և Տարամաղը: Տեղական ընկ ընկերէն քանի մը  
 հոգի սերտ յարաբերութեան մէջ էին անոնց հետ:  
 Գրեհիկ և ազէտ այդ սրիկաներու հետ յարմար չէր  
 որ ես ուզողակի յարաբերէի. անգամ մը սակայն ցան-  
 կութիւն յայտնած էին տեսնուիլ հետս: Ռուբէնը  
 բացակայ էր: Տեղական ընկերներու խորհուրդով,  
 Դաւառեան Տիգրանը ճաշի սեղան մը պատրաստած  
 էր: Առաջին անգամ կը տեսնէի զանոնք: Ռաշիւրը  
 ամբողջով, լայնաթիկանք, կոպիտ ու ժանա դիմա-  
 դրծերով և ալքուրով ուսած դեղին աչքերով ցմարդ  
 մըն էր, Ֆարամաղը նուրբ, երկարահասակ, թիչ մը  
 առաջ հակած, բայց հիւանդօտ արտայայտութիւն մը  
 ունէր, օրուն երբեմն ի գուր կը ճգնէր տալ մեղմու-  
 թիւն, Երկուքն ալ Ֆրէնչներ և երկար վրդ կոշիկներ  
 կը կրէին — կատարեալ քիւրա Ֆէտայիներ — ջան  
 պէզարներ, վասպուրականի մէջ նման տիպերու հետ  
 գործ աւանջած էի արդէն:

Մեր խօսակցութիւնը սկսաւ արևելքի սովորս  
 կան և անբովանդակ փոխադարձ հաճոյախօսութիւն-  
 ներով, որ կը ծառայեն միշտ զիրար թիչ մը ճանչնա-  
 լու և դիմացինին թոյլ կողմը շօշափելու՝ աւելի լու-  
 շահագործելու դիտուածով:

Ինձ կը հետաքրքրէր տեղական իթթիհատս  
 կաններու կազմակերպութիւնը և մանաւանդ պատե-  
 րազսի նկատմամբ ունեցած տեսակէաները ու աշխա-  
 տանքի բնոյթը, որ անոնք կը կատարէին:

Բայց անոնք եկած էին գործակցութեան հրա-  
 ւիրելու տեղական Դաշնակցութեան՝ պատերազմի  
 թիկունքը կազմակերպելու — պաշարի հաւաքման,  
 առաքման և զինուորացուներու հաւաքման գործին  
 համար:

Ըստ երևոյթին միւթէսարդֆին թելադրու-  
 թեամբ եկած էին և ծանօթ էին Էրզրումի Դաշնակ-  
 ցութեան և իթթիհատի բնակցութիւններուն: Ակ-  
 նարկներ ըրին հայ կամաւորական գունդերու մասին,  
 աւելցնելով թէ այդ հանգամանքը խիստ լարած է  
 իսլամներու արամադրութիւնները զէպի հայերը,  
 թէև իրենք ըստ ամենայնի կը ջանան մեղմացնել  
 ըսելով, թէ օսմանեան երկրի հայերը կապ չունին  
 անոնց հետ. ստաւել ևս, ուրեմն, ներկայիս, ահլա-  
 կան հայերը պէտք է որ ամենաեռանդուն գործու-  
 նէութիւնը ցոյց տան, ցրտելու համար զէչ արա-  
 մադրութիւնները և չխուսափիլ զինուորութենէ:

Հակացուցի իրենց թէ ես Մուշ կը գտնուի  
 իբրև սէպուս և թէ հիւր եմ կրնամ միջնորդի գեր  
 կատարել անշուշտ իրենց և Դաշնակցութեան միջև:  
 Միայն վստահ կրնամ ըսել, որ հայ ժողովուրդը եւ  
 Դաշնակցութիւնը բուստահայերու այդ շարժման հետ  
 ոչ միտղիս մէկ կապ ունին, այլ եւ հիմնովին հակա-

ապի են:

Իսկ Թիւրքիոյ մէջ անոնք իբր պարկեշտ օսմանեան քաղաքացի, իրենց վրայ ինկած սոյոր պարտականութիւնները հաւատարմօրէն պիտի կատարեն: Աինուորութենէ խուսափելու խնդիրը, ըսի իրենց, ընդհանուր է. քիւրաքըրը և Մուշի բնակիչները նոյնպէս կը խուսափին:

Այս բոլոր խօսակցութիւնները, ի հարկէ, երկուստեք կը կատարուէին փոխադարձ գաղտնի տրամադրութիւններն ու քայլերը Քասիկնալու դիտարութեամբ: Աիս հետաքրքրող հարցերէն կը խուսափէին:

Տեղական մէկ քանի ընկերներուն յանձնարարեցինք, այս առիթէն օգտուիլ և յաճախել իթթիօ հասական քլիւպը և շրջանները: Բայց օգուտ մը չունէր, քանի որ դաւադրական ծրագիրները եւ գաղտնի կարգադրութիւնները կը պատրաստուէին վերը. լեթան կրօքին ամրացած Ֆարատաղի քէօլի կամ Հալի Մուսայի օտառի մէջ, Հալի Իլիասի անօրջական ղեկավարութեան տակ:

Բանագրաւումները սկսան և մեծ թափ ստացան արդէն Իեկաեմբերի սկիզբին, երբ, մանաւանդ Մուշը դարձաւ կեդրոն պահեստի ուժի կազմակերպման: Տիրաւորակերպէն, Խարբերդէն, Ճապաղաբէն, Կիլիճէն, Հաղոյէն ժողովուած բէտիֆներու նուաճը գր բերուէր ամէն օր: Քաղաքի մղկիթներու, դըպրօցներու, խաներու մէջ տեղ չէր մնացած: Արեց զօրանօցները կարգի կը դրուէին հոն ևս լեցնելու համար:

Բէտիֆ գունդերու կաղմութեան ղեկավարութիւնը կը տեղաւորուէր քաղաքի բանագրաւուած տուններուն մէջ. Շտեմարանները կը լեցուէին գիւղերէ յափշտակուած եւ զիւղացիներու սայլերով և ա-

նասուններով փոխադրուող հացահատիկներով. շուկան աւերակի էր վերածուած. խանութները դատարկ էին իսկ կեանքը մեռած:

Այդ օրերուն էր որ գէշ լուրեր կուգային ուսական սահմաններէն — էնվէրի սարսփելի պարտուեան գոյժը: Սուճապը անագին էր. յուրահատութիւն կը թաղաւորէր, համիտի գունդերը, որոնք հազար մէկ դժուարութիւններով ժողովուած էին — բազմաթիւ գայթակղեցուցիչ խօստումներով, անշուշտ թալանի — գիշերները կը ցրուէին նորէն իրենց գիւղերը կամ լեռներու մէջ կ'անհետանային:

Մուսա բէգը և իր եղբայրները, որոնք նոյնպէս պատրաստուած էին ճակատ մեկնելու, գաղտնորէն ցրուեցին գունդերը եւ Մուսա բէգը «հիւանդացաւ»:

Սէրվէպ պէյ և քլիւպը համակ գործունէութիւն էին. պաշար և մարդ պէտք էին հասցնել: Իեռ ոչինչ չսովորած նորակոչները փութով հակառակը դրկուէին ցնցօտիներով ու անօթի, անոնց մե՛ծ մասը ճամբաներուն վրայ կ'իյնային պաղած. տեղը նորեր կը բերուէին անընդհատ:

Միւթէսարըֆը, այլ տանն էր, որ դիմեց ինծի ստանձնելու ճակատին մթ ըբ հասցնելու համար կաղմուած յանձնաժողովի նախագահութիւնը...: Մերժել անհնար էր, Ընկերները թելադրեցին ընդունիլ, թերևս մէջէն աւելի օգտակար լինէինք:

Կատավարութիւնը տեսնելով որ մեծ յոյս չկայ հայ նորակոչներ ժողովելու. ճակատը (Մինչև Խնուս) մթերը զրկելու խմբեր կազմեց — «ամէլի» թաղաւորներ» և առաջարկեց, որ հայերը զոնէ սյդքան աջակցութիւն բերեն երկրի պաշտպանութեան գործին: Այդ յանձնաժողովին մէջ կը ստնային 8—10 հօգի տեղացի երեւելիներ և երկու սպաներ:

Դժուար չեղաւ այդ գործին համար քանի մը հարիւր հողի հաւաքել, նախ կը թուէր թէ պարզ երթեակութիւն մըն էր: Նախապէս որոշուեցաւ բեռան ծանրութեան չափը, սնունդի պայմանները, ճշտուեցան հանգստի և գիշերելու իջեւանները (մէնդիլ) ու փոխադրութիւնը սկսաւ: Այդ ատեն (չեկտեմբերին), չկար դեռ ջարդի ծրագիրը, ատսվ հանգերձ սոսկալի էին բեռնատար (չալակաւոր) հայերու քաջած նեղութիւնները և մէկ մեկնող խուճերն հետ, մեր կողմէ անպաշտօն տեղեկատու մը կը դնէինք, որոնք նկատուած թերութիւններ կը հաղորդուէին մեզ: Առաջին խուճըրը վեց օրէն վերադարձաւ. դժգոհութիւններ ունէին, ի հարկէ, նեղութեան, սնունդի, վարուեցողութեան սասին, որոնք այնքան ալ մտահոգիչ չէին: Բայց հետզհետէ, երբ ձմեռը սասուցացաւ ձիւնը խորացաւ և բուքերը սլօտն, անհանդուրժելի դարձաւ կացութիւնը. համբոսն մեռնողներ եղան. իսկ սեծ սասը կը վերադառնար հիւծուած եւ հիւանդ:

Հայերու նման մասնակցութիւնը — բանակի պիտոյքներու զրաւման և փոխադրութեան — ըստ երևոյթիս դնահատութեան կ'արժանանար, և կառավարական խտութիւնները այդ խնդրոյն մէջ առ երևոյթ կը սեղմանային. սակայն միւս կողմէ անոր անուղղակի քաջալերութեամբ, աւելի լայն ճաւաղ կը ստանային պտերագմէ խուսափող աշիրէթներու սխրագործութիւնները հայ գիւղերուն մէջ. անհատական և նոյնիսկ հաւաքածան (Յրօնք ևն. տեղեր) սպաննութիւնները յաճախակի դարձան. աւերքերը ամենայն խտութեամբ կը ժողովուէին, հացահատիկի դինուորական թալանը կը շարունակուէր: Տեղ տեղ սերիններուն մէջ արդէն իսկ ըմբոստութեան և ընդդէմութեան դէպքեր տեղի կ'ունենային: Ազգային և

կուսակցական շրջանակներու կարծիքն այն էր, որ մեր կողմէ ուէ առիթ պէտք չէ տալ, ընդառաջ պէտք է երթալ ըստ կարելւոյն կառավարութեան պահանջներուն, ջանալով վարչական եղանակով մեղմացնել կամ առաջն առնել ապօրինութիւններու: Սակայն, ալ չափը կ'անցնէր. մեր համբերութիւնն ալ կը սպառէր, մասնաւոր երբ տեղեկացանք, որ Զրպրանցիները հայ գիւղերու ասպատակութիւններէ վերջը, քաղաք են հրաւիրուած և հիւրասիրուած միւթէսարըֆին կողմէ:

Նրաւ լեցուած էինք, Նորախանեանը անզուպ զայրութով լեցուած, կ'ուզէր երթալ քոզոքելու. այդ վիճակին մէջ չթողինք որ երթայ:

Հանդիպեցայ միւթէսարըֆին հեռագրատան մէջ, երբ ուզիդ հեռագրաթելով կատուած էր Պօլսոյ հետ:

Պահ մը վերջ մօտեցաւ ինծի իր սովորական ժպիտով և գոհ երևոյթով:

Սոսակցութիւնը սկսաւ սեղմ, բայց երբ իմ բողոքներուն, նա պատասխանեց չոր ու քիչ մը հեգնութեամբ, ըսելով թէ անխուսափելի են նման դէպքեր պատերազմի միջոցին և թէ պէտք չէր խըռովիլ, ու դարձանք յայտնեց որ այս տարրական բանը հայերը չեն ըմբռներ, այլևս չկրցայ զսպել ինքզինքս և սովորական քաղաքավարական դարձուածքներ դնելով, ամենարուսն կերպով յարձակեցայ վրան, ըսելով թէ աւաղակները կը քաջալերուին, թիկունքը կը վտանգուի այս քաղաքականութեամբ, թէ հայերուն խորթ կը նային և ուժիւր համիտեան ուժիմէն աւելի վատ դարձած է:

Չեմ յիշեր այլևս մանրամասնութիւնները, այն դիտած միայն, որ Միւթէսարըֆը ինքզինքը կորս

սընցուցած, շուարած կը լսէր ինծի. քանի մը անգամ  
փորձեց իր սովորական ջղախին ճղճղօցներով ազդել,  
բայց ես անկէ աւելի կը դռսառի:

Վերջապէս ինքն իրեն շուտով ձեռք առաւ և  
խոստացաւ վերջ տալ երկրի անիշխանութեան:

Կողմնակի մարդը միայն հեռագրատան միւ-  
տիւրն էր, վանեցի կէս խափշիկ մէկը, որ ի զար-  
մանս իմ, նկատելի գօհունակութիւններ կը զգար իմ  
յարձակումներէն: Այս մարդուն մենք պիտի հանդի-  
պինք դարձեալ: Այս տեսակցութենէն և միւթէտարը-  
ֆի վերաբերմունքէն ես գէշ նախազգացումներով  
հեռացայ:

Շատ բան չփոխուեցաւ այդ օրէն, ի հարկէ.  
միայն միւթէտարըֆ Սերվէթը, ինչպէս յետոյ տեղե-  
կացայ միւտիւրէն, բողոքած էր Պօլիս իմ քով չ'աւ-  
տութիւններուն՝ զէմ, օրովհետև քանի մը օրէն  
Սորհրդարանը հեռագրով կը կանչէր զիս:

Անկտրելի էր այլևս մնալ. միւթէտարըֆը ան-  
ձամբ եկաւ հեռագիրը լանձնելու, աւելցնելով սիրա-  
լիրօրէն թէ ամէն դիւրութիւններ պիտի տալ ինծի՝  
ապահով Պօլիս հասնելու. քաղաքավարութեամբ  
կ'աջատրուէի երկրէն:

Մանր ազդեց մեր շրջաններուն վրայ իմ մեկ-  
նումիս հրամանը. լաւ թէ գէշ կապ սըն էի կառա-  
վարութեան հետ, քանի որ իշխանութիւնները կը  
խուսափէին առաջնորդին հետ քաղաքական կամ  
գինուորական խնդիրներու առթիւ ուէ յարաբերու-  
թիւն պահել: Ռուբէնը լեզուի եւ իր տնհատական  
հակումներու տեսակէտէն, չէր կրնար այդ գերը կա-  
տարել: Մանր մտահոգութեամբ կը մեկնէի: Վերջին  
մեր խորհրդակցութեան մէջ սակայն ինծի թելադրե-  
ցին երթալ Ս. Կարապետ և հոն սպասել. եթէ ձիւնը  
և բուքը ներէ. կրնամ շարունակել, եթէ ոչ՝ պէտք

չէ վտանգի ենթարկուիլ, օրովհետև այդ ամիսներուն  
Կիւնի կամ Օղնուտի ճամբաները անանցանելի կը  
դառնան:

Շխախախ և Ջիարէթի ճամբով, չեմ յիշեր  
որու առաջնորդութեամբ, Դեկտեմբերի վերջի օրե-  
րէն մէկը բարձրացայ Ս. Կարապետ վանքը: Ահագին  
ձիւն էր եկած. արահետէ մը կը յառաջանայինք:

Առաջին անգամ կը տեսնէի Տարօնի համա-  
լուօր Վարդան վարդապետը — յեղափոխական վե-  
թերանը դեռ 90 աւան թուականներէն: 60ի սօտ այդ  
սասունցին (Ահարօնքէն), ընկոյղէ կօճղի կը նսանէր  
— հաստատուն և ամրակազմ. ճերմակ մորուքի սա-  
ղերը անիշխանական փութկոտութեամբ բուսած էին  
չ'ը թուշերէն և կղակէն. սանր, առոյգ ու թափանցող  
հայեացք, օր շարունակ վրայէդ կ'անցնէր թափով:  
Դժուար է տալ անոր բարդ բնութագրի՞ք: Սասունն  
ու Տարօնը անոր մէջ էին խտացած. Գեղամ և նա  
խիտ շատ ընդհանուր գիծեր ունէին:

Ջերմութեամբ ողջագուրուեցաւ հետս և մէջ-  
քէս գրկած առաջնորդեց զիս իր հիւրասենեակը: Գը-  
լուխ գլխի այդ ժողովրդական իմաստուն մարդուն  
հետ երկար խօսեցանք երկրի վիճակէն, պատերազ-  
մէն, սուտական բտնակի կամաւորութեան մասին:  
Այնքան երջանիկ հեռանկար էր անոր համար վեր-  
ջիններու կողմէ Տարօնը նուաճելու միտքը, որ չէր  
ուղեր հաւատալ ու կը կրկնէր տնընդհատ՝ «վախ՛նամ  
չտեսնենք...»:

Դեռ հազիւ հանգստացած, լուր բերին թէ  
Ջիարէթի միւտիւրը ձորէն կուգայ:

Վարդապետը խոր հառաչ մը արձակեց, կատա-  
ղութիւնով լեցուած հայեացքը երկինք ուղղեց ու  
օրտի խորքէն արմընց՝ «ունի՞ծեալ ինիս» Ձէր ուղեր  
օր միւտիւրը տեսնէ զիս. Թովի սենեակը անցայ:

ուրկէ կրնայի դիտել հիւրասննեակը :

Միւտիւրը լակոտ մըն էր — երկայնատէսակ և նիհար: Ելած էր քննելու շրջանի պաշարի հաւաքման գործը, և իր ըսելով, զդիտարէթի եկած էր վանքին և մուրախաս էֆէնաբին: Ամբարտաւան ու լիտի այդ սորիկան խօսակցութեան ընթացքին լրբօրէն և հոնրաւով կը պատմէր վարդապետին իր բանութիւնները. վարդապետը ձեռքերը միացուցած, գլուխը մէկ կողմ հակած և գետին նայելով «է՛հ, երբեմն պէտք է խիտ ըլլալ էֆէնոսի, բայց շատ անգամ քաղցրութեամբ աւելի լաւ արդիւնքի մը կարելի է հասնիլ» ու նման զգոյշ և ընդհանուր դիտողութիւններով կը բաւականանար: Այդ միջոցին էր որ իր օտարիկաններէն երկուքը ներս բերին հայ մը, ոչոն էր դիւղի մը: Էսեցի միտայ միտերին անոր ուղղած հարցերը, ապա կրակ կտորով վեր թաւ և ձեռքի մտրակով անխնայ հարուածներ կը տեղար դէմքին ու մարմնին: Սոսկալի ցուերէն ոչոն կ'ոտնոր, կը պաղատէր...: Վարդապետը մանու չափ տօգոյն, բեւեռուած էր դեռնին ու իր ձեռքերը կը կտարաէր յուղմունքէն ու զայրօյթէն, միւսնօյն ատեն անհանչիտա ու պաղատական հայեացք կը նետէր իմ սենեակի կողմը, կը վախնար թէ դուրս գայի սենեակէն՝ չհանդուրժելով այդ վայրենի տեսարանին: Սակայն պէտք էր դիմանալ: Իրչ յետոյ, երբ սիւտիւրը իր ճաշը լափելով կը հեռանար, լարուած ճիգերէն թուլցած ու գունատած վարդապետը, ինկաւ իր բազմօցին վրայ ու կերկարուն ձայնով «ը կրկնեց ճշգրտուած իմեր, Ստաւա՞մ ալ չկայ. մեղօյ քեզ Տէ՛ր, չե՞ս տեսնար մեր քաշածները...»: Ապա երկարօրէն բացատրեց իր քաղաքական հարեացքը և հարկադրական վարուելաւոր կերպը թիւրքերուն հետ: «Բանի որ ուժ չունինք ձեզմէն կա՞մ զաւազրօրէն զարնելու իմերուն, պէտք

չկայ սուր և յախուան քայլեր ընել. պէտք են հանդուրժել, ժպտիլ անոնց. խաբել՝ ցոյց տալով թէ երբեք չենք խորհիր դաւել իրենց, թէ ըստ ամենայնի հաւատարիմ կը մնանք. Պէ՛տք է այս, որպէս զմեր պատրաստութիւններու ատեն չխանդարեն մեզի, քանի որ զօրաւոր են և ձեռքերնին երկար է:

Կորստաբեր է մեր գանգաւաները ցուցական և ըմբոստութեան ձևով արտայայտել. համբերել ու պտորաստուիլ. տալ ինչ որ կ'ուզեն ու սպասել պէտք է դուրսի օգնութեան...»:

Վարդան վարդապետի բերնով կը խօսէր դառն դասեր տալով ու սաղմունք հայ ժողովուրդը: Այսպիսի տեսակէտներ արտայայտող այդ մարդը սակայն, կը պատմէին ինձ, թէ երբ կը լսէր հայ ֆէտայա՛ան խումբերու յաջթական կոխները, ուրախութենէն կ'արտասուէր և կը կշտամբէր մօրեռանչօրէն մեր աղաներն՝ «Ձկրցա՞ք այդ նղովից արմատներու ճէօքը կտրել»:

Սոսկալի ձիւնախառն փոթօրիկը կ'ոտնար պարիսպներու երկայնքին. ճաւբաները կանգուններով ձիւն էր նստած. բացարձակ անկարելի էր առաջ դնալ. կը մնար վերադառնալ Մուշ:

Քանի մը օրէն սե՛ծ դժուարութեամբ, վերադարձայ Մուշ. այցելեցի միւթէտարըֆին. զիտէր արօղէն թէ ժամանակ մը անհնար էր ճամբայ ելլել: Ի պտտասխան ստացած հեռագրին, յայտնեցի ճամբաներու փակուած լինելը և աւելցուցի թէ պատերազմի այս դժուար օրերուն պիտի մնամ հոն:

1915ի նոր տարին կը սկսէր սև նշաններով, որոնք ծա՛ր մտահոգութիւն կը պատճառէին Տարօնի աղջային և յեղափոխական զեկավարներուն:

Ե.

# ԶԱՐԴԵՐՈՒ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

1915ի Նոր Տարուան առաջին օրը, ընդունեցինք Մշոյ թիւրք պաշտօնական և անպաշտօն լեզուներու շնորհաւորական խմբական այցելութիւնները: Միւթէսարըֆը, վարչական, պատական եւ զինուորական ղեկավարները իրար կը յաջորդէին, կլիելով կօնեակը և շաքարեղէնները:

Կրօնականութիւնը կը նկատէինք իրենց շարժումներու և խօսակցութիւններու մէջ — քաղաքափարութեամբ քանի մը խօսքերու փոխանակութիւն: Հիւրերը կ'ընդունէր զլիւսաւորապէս Ռուբէնը իբր ասնաէր. ես հիւր կը նկատուէի. հօն կը գօնուէին տեղացիներէն նաև Մճօն, Կորիւնը, Տիգրանը և այլ ընկերներ:

Միւթէսարըֆը առանձնապէս ուշադիր էր դէպի Կորիւնը, որ քիչ մը թիւրքերէն դիտէր, բայց իր ծայրայեղ քաշուող բնաւորութեամբը կից—կաուր ու կարճ պատասխաններ կուտար՝ կարմրած ու յարզանքով:

Տարօնի բացասիկ ու հազուադիւր տիպերէն մէկն էր Կորիւնը: Կարճահասակ, բայց պիրկ ու սմբակուս. խիստ սահաւախօս էր, չէր խնդար գրեթէ, քաղցր ու հաճելի կը ժպտէր երբեմն բերանի մէկ կողմովը, սքանչելի էր իր աչքերու մեղմ արտայայտութիւնը. կանացի փուխր սիրտ մը, բայց իրական կորիւնի կաաաղութիւն՝ երբ հարկադրուած էր դըրսուորել — անխնայ էր այդ վայրկեաններուն. ա-

աասպելական լանդշուլթեամբ, քաջութեամբ ու պաղարիւնութեամբ օժտուած այդ երիտասարդը ե՛ւ մանուկ էր իր անարատ սիրտով. հ՛ւ ծերունի փրկուփայ՝ իր հարուստ հոգիովը և զգացողութեամբ: Համեստ էր ու խոնահ բոլորի հանդէպ, կարգապահ ու բնօրէն իր պարտականութիւններուն մէջ, բայց իր մէջ թաղնուած ամենի ուժին ու կամքին կ'ենթարկէր ակամայ իրեն շրջապատողները և ակնածանք կը ներշնչէր իրմէ մեծերուն:

Տօներէն վերջն էր, երբ օր մը միւթէսարըֆը Ռուբէնի միջոցաւ կ'առաջարկէր Կորիւնին սաանձնելու դաշտային միլիտի պետի պաշտօնը:

Այս, պատասխանն էր երևի բողոքներուն՝ հայ զինուոր մէջ տեղի ռւնեցող առպտտակութիւններու մասին: Առաջարկը մեզի շատ ձեռնու երեցաւ. Կորիւնը այսպիսով զինուած հայկական ուժեր կ'ուսնեմար իր արամադրութեան տակ և հարստահարութիւններուն վերջ կուտար:

Այն ատեն դժուար էր հասկնալ անոր միտումները. հիմա միայն բոլորովին պարզ էր ինձի, որ զեռ ջարդերէն առաջ, կառավարութիւնը նպատակ դրած էր երկրի հայ մարտական ղեկավարները ոչընծա չացնել (Կովկասի հայ կաթաւորական շուկերու կողմութեան հետեան ջնջերն էին կարծես) ապահովուելու համար թիկունքի հայ ուժերու վասնդին դէմ...:

Կորիւնը լսեց Ռուբէնէն միւթէսարըֆի առաջարկը և առկէ առաջ դալիք մեզ նպատաւոր եղող հետեանքները: Առերևոյթ համակիր երեցաւ եղած առաջարկին, բայց հնարաւոր չէր գտներ հայ—քիւրախան միլիտներու կազմութիւնը. խնդրեց որ առաջարկները զուտ հայ միլիտներով բաւականանալ, որոնք զինուէին պետական հրացաններով:

Միւթէսարըֆը ուղղակի չէր մերժած. խօստա-

ցած էր Բաղէշի կուսակալի հետ բանակցել այդ մասին. իսկ կորիւնը վերադարձած էր գիւղը իր սեփական գործերու կարգադրութեան համար:

Միւս կողմէ սակայն շրջաններու մեր կարևոր գործիչները իրար ետեւէ քաղաք կուգային բողոքելու իրենց շրջաններու անապահով կացութեան, կառավարութեան ճնշումներու և օրինականացուած թաւանի դէմ, ինչպէս նաև քրտական չէթաներու կազմակերպութեան մասին:

Գարբերաբար կուգային Դաւեննու Մկրտիչը, Բաղլուա Յովօն — ծերունի հին յեղափոխականներ, Զրեց Տէր—Մուշեղը, Մոկուսքէն կարապետը, Բերդակալ Օսկիանը, Վարդենիտէն Մարտիրոսը — աչքի ինկած յեղափոխական մարտիկները, որոնք, ի միջիայլոց, կը յայանէին, թէ ոստիկանները լսելեայն կը հետապնդէին զիրենց:

Այդ միջոցին հին և կարևոր ընկե ներու հաւաքական լայն խորհրդակցութիւններ կ'ուենայինք: Մասունէն ևս պարբերաբար սկսան երևալ փոքր խումբեր, որոնք կուգային պատերազմէն լուրեր առնելու և իրենց բանակիք դիրքի մասին թելադրութիւններ ստանալու, քանի որ հոն ևս զինուորազորման խնդիրը առօրեայ շարիքներէն էր: Լիյանդերը ևս աշիրէթներու շարժումներ և թշնամական արածադրութիւններ նկատած էին: Թէև ձիւնը հաստ չերածերով բռներ էր Սասնոյ լեռները, բայց այդ կրակէ սարդկանց հոյար չէր. Վաքանները ոտքերուն, կուրծքերնին բաց, կուգային քաղաքէն ադրցորեն, հազուադեպէն և մանաւանդ վառօդի պատրաստութեան և ազմութեան պարազանները գնելու, ինչպէս ծծուճք, բորակ և կապար ու գիշերով ծանր շաւկներով կը վերադառնային եղնիկներու արագութեամբ:

Յոռեանս էին ամենքը, բայց ոչ յուսահատ. իրենց ունեցած զինամթերքը, կ'ըսէին, պիտի բաւէր քրդական հորդաներու և չէթաներու կռիւններուն, չէին կրնար երևակայել, որ զօրքը ևս պիտի մասնակցէր ապստամբութիւններուն, խորհելով որ պատերազմի ճակատէն կառավարութիւնը անկարելի է որ զօրքը գործածէ ներսի կարիքներուն:

Անոնցմէ մէկ քանին, ինչպէս Մձօն, Բերդակալ Օսկիանը և ուրիշներ, կ'առաջարկէին նախարարական լինել պետական զօրանոցներու վրայ. Ռաբէնը նպատակայարմար կը գտնէր Սասունի Տափլըկ գիւղի պահականօցի վրայ յարձակել և ազատիլ այսպիսով Սասունի ներքին թշնամիներէն:

Ամենքս կը զգայինք անշուշտ որ ծանր օրերը կը մօտենային, ընդհարումները անխուսափելի էին, բայց շատ ընկերներ — որոնց թուին և ես — կ'առարկէինք թէ մեր ազմական ուժերը շատ սակաւ էին և անկազմակ'րպ' յարձակողական կռիւններու համար:

Սասունի ժողովուրդը խիստ թերի զինուած էր. 7-8 հարիւր շեշխանայ և օրսօրդական հրացաններու հետ թերևս 150-200 քիչ շատ կանոնաւոր զէնք դասուէր, որոնք սակայն փամփօշտի չնչին պաշար ունէին: Դաշու աւելի իրզճալի վիճակ մը կը ներկայացնէր. կանոնաւոր զէնք, կարելի է ըսել, բացառապէս միայն մեր նախկին մարտիկներու ձեռքը կը գտնուէր. դաշտի 90 գիւղերը հազիւ 200 քիչ շատ կանոնաւոր հրացան ունենային, փափիւ շտի նայն թերիներով:

Հասեմատաբար լաւ զինուած էր քաղաքը, ուր կուսակցութիւնն ևս ունէր պզտիկ պահեստ մը աւարդանանկներու և 2-3 տասնեակ զէնքերու: Տրտ-

մադրելի այս ուժերով թերևս ժամանակ մը հնարա-  
ւոր ըլլար հաւաքական ինքնապաշտպանութեան :  
Տարօնի վիճակի մասին պարբերաբար տեղեկագիրներ  
կը ղրկէինք Պոլիս՝ կուսակցական բերքոյին . կանո-  
նաւոր թղթակցութիւն կը պահէինք Վասպուրականի  
և Էջմուծի կուսակցական մարմիններուն հետ :

Պոլսէն հանգստացուցիչ տեղեկութիւններ կու-  
տային, շեշտելով միանգամայն ինքնապաշտպանու-  
թեան զօրեղացման անհրաժեշտութիւնը :

Փետրուարի մէջ էինք, երբ Ռուսէնը սրուցեց  
անձամբ շրջան ելնել եւ կորիւնի հետ զբաղիլ ինքնա-  
պաշտպանութեան վերակազմութեամբ . վերադարձին  
կորիւն հետք պիտի բերէր մէլիսի կազմութեան նա-  
խապատրաստութիւններու համար :

Դեռ նոր Ռուսէնը հասած էր Գոմս, երբ Աղ-  
ջանէն լուր առինք, որ տեղի 7—8 քիւրտ ժանտար-  
մաներ Ֆախի Մուսթաֆա տասնապետի առաջնորդու-  
թեամբ սեկներ է Գոմս, կորիւնի դիւղը : Զարագու-  
շակ կասկած ծագեցաւ բոլորին մէջ . պիտի ձերբա-  
կալէին թէ դաւադրութիւն մը պատրաստուած էր  
կորիւնի և Ռուսէնի դէմ :

Նրկորդը օրը արևծագին, միւթէտարըֆը յա-  
տուկ ոստիկան ղրկած էր Սարախանեան եպիսկոփն և  
ինծի իր քովը հրաւիրելու . . . :

Անոր ղէմքէն մաղձ կը թափէր, աչքերը հի-  
ւանդագին կը փայլէին, ձեռքերը կը դողային և  
ղէմքը հողի զօյն էր առած : Զսպուած զայրոյթով  
և խօսքերը շեշտելով յայտնեց թէ առաջին իրիկունը  
Խարօն (կորիւնը) և Ռուսէնը գոսի մէջ վառած են  
ժանտարմտ տասնապետ Ֆախի Մուսթաֆան և քա-  
նի սը ժանտարմտներ ու փախած . միւթէտարըֆը  
է՛աւելցնէր օր իր համարութեան բաժակը լեցուած  
հարդէն . պիտի հրամայէ քանդել դիւղը, անխնայ

ըլլալ դաւադրութիւն կազմակերպողներու հանդէպ և  
կը պահանջէր օր Ռուսէնը և կորիւնը անմիջապէս  
ներկայանալին իրեն . իսկ մինչ այդ նա ինծի կը  
յայտարարէր ազատութենէ ղրկուած և իր բնակարա-  
նին մէջ վար կը դնէր զիս :

Սարախանեանը յանկարծակիի եկած՝ ասէն  
միջոց գործ դրաւ զիս ազատելու . անհնար եղաւ  
«Հիւր» էի միւթէտարըֆին . . . : Սրբազանը յուսահա-  
ււ լքուած մեկնեցաւ : Ճաշեցինք միտանդ . իր բա-  
ցակայութեան սենեակին մէջ նստած էր օստիկանա-  
պետն, իսկ իրիկունը բաւական երկար այս ու այն  
կողմէ խօսելէ վերջ, յանկարծ մտածեցի պահանջել  
խիտ քննութիւն, յայտնեցի անոր առաջարկս, ըսի  
օր ընկերացնէ ինծի զօրքերու հրամանատար Վասըֆ  
պէյը տեղի վրայ քննութիւն բանալու :

Միւթէտարըֆը քանի սը ժամ բաց-կայելէ  
վերջ վերադարձաւ բսելով թէ կ'ընդունի առաջար-  
կս . Մեզի պիտի ընկերանային նաև Պուլանըխի  
գայմազամ հարիւրապետ Էւադ պէյը և Հազսի միւ-  
տիւր Սիւլէյման ասուևով զազրելի թրջացած քիւրտ  
սը, արտաքինով աղուէտի նմանող : Հանգիստ չէի  
կեանքիս նկատմամբ . Սիւլէյմանի դէմքը վստահու-  
թիւն չէր ներշնչէր ինծի . բայց Էւադի և մանաւանդ  
Վասըֆ պէյի ուղեկցութիւնը քիչ մը կը հանգստա-  
ցընէր չիղբաւ : Երբ ձիերը հեծած 7—8 ոստիկաններու  
ջոկատով մը հետ ճամբաւ պիտի ելնէինք, միւթէտա-  
րըֆը իր խօսքերը Վասըֆին ուղղելով ըսաւ . «Փա-  
փազեան էֆէնտին ձեզի կը յանձնեմ . ողջ առողջ  
ինծի պիտի վերադարձնէք» . . . : Այս խօսքերը փա-  
խանակ հանգստացնելու, աւելի մտալ արամադրեցին  
ինծի :

Հրամանատարը վստահ եմ թէ բարեմտօրէն  
ընդունելով այդ հրաւերը, պատասխանեց . «Անհոգ

եղէք. եղբօրս պէս պիտի պահեմ: Եւ այդպէս ալ  
 ըրաւ. անբաժան էր ինձմէ քրդական հորդաններուն  
 մէջ, որոնք գիշատիչ ազաւաններու նմաւ, թափած  
 էին անպաշտպան Գօթա գիւղին վրայ: Ձիւնի մէջ  
 բացած արահետէն, իրար հետեւելով կը յառաջանա-  
 ին մեր ձիերը: Հազիւ իրիկուան մթնշաղին հասանք  
 գիւղը: Գօթսի բնակչութիւնը փախած էր խաղալատդ  
 — Օփրատի միւս ափը. գիւղին մէջ տղը պղտիկ  
 բարձրութեան մը վրայ Կորիւնի տունն էր, իսկ ա-  
 նոր օտորատը ախոռն էր որ դեռ կը ծխար. պատերը  
 անդ անդ ջանդուած էին և գերանները թափթփած.  
 արձա՛ն դուռին ջով և քիչ սը անդին տարածուած  
 էին կիսովին այրուած քանի մը յարդկանց դիակներ  
 և բազմաթիւ դիակներ գոմէշներու ու եղններու. շըր-  
 ջականերէն գիւղ էին թափեր հարիւրաւոր քիւրտեր  
 իրենց կանանցով և բռնուտաբ եղներով ու էշերով.  
 արդէն յաջրած էին բոլոր տունները իրենց կարասի-  
 քէն և կենդանիներէն. քանի մը շուներ երդիքներէն  
 զունչերը գէպի երկինք ցցած կ'ոսնային:

Կորիւնի տունը հոպէ յատակով սենեակ մը ու-  
 նէր որու երկու պատուհանները ախոռին կը նայէին.  
 մակին մէջ մեծ թոնրատուն մը կար ուր քիւրա չէ-  
 թաւերը նախապէս յաջողած էին ձերբակալել 50ի  
 սօտ կին և տղամարդ ու ոչխարներու պէս լեցուցած  
 էին հօն իրօր վրայ. սպաննութիւններ չէին եղած,  
 բացի կոյր տղամարդէ մը, որ սպաննած էին ճամբուն  
 վրայ:

Հարցաքննութեան կանչուեցան շարքի մը:  
 Իմ ներկայութիւնս կը քաջալերէր անոնց: Պարզուե-  
 ցաւ հետեւեալ իրողութիւնը, որ կ'արձանագրուէր  
 Սիւլէյման էֆ.ի կողմէ:

Յախկի Մուսթաֆան ժամտարմաներու խուս-  
 թով կուգայ զիւղը իրիկնաղէմին, հարկերու հաւաք-

ման դործով. Կորիւնը կը կարգադրէ որ տեղաւորեն  
 ախոռի սենեակին մէջ և կերակրեն. քիչ մը վերջ  
 Կորիւնի սենեակը կը մտնէ անոր հինաւուրց բարե-  
 կաս քիւրա ժանտարմա մը և կ'ըսէ թէ Յախկի  
 սիւքը դէշ է. գիշերը ծրագրած է պատուհանէն ըս-  
 պաննել Կորիւնը (և Ռուբէնը ի հարկէ) և թէ այս  
 մասին հրահանդուած է Մուշի իթթիհատի քլիւպէն:  
 Կորիւնը առանց ժամանակ թողնելու որ ժամտարմա-  
 ները իրննց ոճիրը գործադրեն, անմիջապէս ծակեր  
 կը բանայ պատուհանէն դուրս, ուշ առնել իր կտոր  
 դէզերէն խորձեր կը փութադրէ ախոռի դրան առջև,  
 դուռը դուրսէն կը դոցէ և կրակ կուտայ. քանի մը  
 հողի կը յաջողին երդիքէն փսխել, մէկ քանին կը  
 փորձեն դուրս նետուել և կը զնդակահարուին, իսկ  
 մէկ երկու հօգի կ'այրին:

Կալանաւորներու մէջ գոնաւոր տեղացի մեր  
 ընկերներէն մէկը առանձինն ըսաւ ինծի թէ անոնք  
 Ս. Կարապետ անցած են:

Հետեւեալ օրը կալանաւորները արձակել տուի-  
 հրամանաւորը համոզուեցաւ դաւադրութեան մը  
 գոյութեանը. էտդ պէյը կը թուէր թէ կը տատանի.  
 ձէթի աղօտ ճագին ջովիկը և սենեակի մէջտեղը  
 վառած փայտերու ջերմութեան ու սենեակին մէջ  
 խոնուած քիւրտերու դաժան հայեացքներուն առկ  
 միաքս տեսիլօրէն կ'աշխատէր. կը զգայի որ տեւոր  
 ոճիր մը կը պատրաստուի. այլևս չէր կարելի խաղա-  
 դութիւն յուտալ. Ռուբէնը և Կորիւնը ակամայ զրկե-  
 ւեցան դաշտը կազմակերպելու հնարաւորութենէն  
 ու փախստական դարձան:

Ես, շատ այժի եմ ինկած ինքնապաշտպանու-  
 թեան գործի կազմակերպման համար և դեռ ո՛վ գիտէ  
 վերադարձիս ազատ պիտի թողուն, իսկ տեղացի

ընկերներէն ամէն մէկը իր գիւղին և վայրին մէջ միայն կրնային լինել: Վերադարձի ճասթառն կը խորհէի. որ կառավարութիւնը անմիջապէս ամենախիստ հալածանքի պիտի սկսի:

Մեր տեղեկութիւնները և արձանագրութիւնը լոնց միւթէտարըֆը. իմ դիրքս ուժեղ էր. չյամեցայ խիստ խօսքերով օրակելու մութ ուժերու ղեկավարներու ընթացքը:

Միւթէտարըֆը ի զարմանս իմ, անմիջապէս համաձայնեցաւ ինձ հետ, որ մերչնները մեղաւոր չեն: Ես ազատ էի վերադառնալու. առաջնորդարան: Սրբազանին ուրախութեան չափ չկար: Զարմացած էինք որ կառավարութիւնը այս տեղամ առդարձ գտնուեցաւ: Յետոյ, ի հարկէ, միայն գլխի եկանք, որ այդ բոլորը խողեր էին կօրիւնն ու Ռուբէնը օրսայու համար...:

Յետոյ լսեցինք որ փախստականները ձիւներու շատութեան պատճառաւ սպաննած են իրենց ձիերը և ֆէթարի գծով Սասուն եւ անցեր:

Քանի մը օր յետոյ, յանկարծ, լուր բերին օր կուսակցական ակումբը պիտի խուզորկուի: Ես ու սպասուոր Պօղոսն էինք հոն. հազիւ կրցանք մեր մօտ գտնուող զէնքօրը և արխիւը ետեի դռնէն փախցընել: Ոստիկանապետը և երկու օստիկաններ մտան, յարգանքով բարեկեցին ու ըսին թէ հրաման ունին փակելու մեր ակումբը: Ժամանակ կուտային մեր անձնական իրերը առնելու. ապա փակեցին ու կնքեցին զուռները և հեռացան: Ես զուրս մնացի: Ատոնք և մէնը, ի հարկէ, բարենշան չէին կրնար համարուիլ: Դրութիւնը աւելի ու աւելի կը ծանրանար: Հակառակ ասօր սրբազանը եւ ես կը շարունակէինք պահել մեր սովորական յարաբերութիւնները կառավարչի հետ՝ սեղմելով մեր տառամները և զսպելով մեր յուսահտ:

տութիւնը և վրդօվուսը օր օրին բազմապատկուող ակնյայտնի դէպքերու հանդէպ:

Փետրուարի ընթացքին ամէլիա թաղուրնեբէն» (չալփկներով պաշար փոխադրող հայեր) սկսան անհետանալ նախ անհատապէս ու ապա անհետ կօրչիլ խուսքերով: Մեր գիմումներուն կը պատասխանէին թէ ճասթառնը դոցուած են ձիւնէն կամ հաւանաբար ստիպուած են աւելի հեռուներ տանիլ պաշարը, քանի որ բանակը յառաջացած է, (մինչցեալ տանները թուրքերը նտնանջած էին շատ կէտերէ և մենք անշուշտ կ'անդրառնայինք):

Միւս կողմէ զինուորութենէ կամ հարկերէ լուսափելու, բանակին մթերք չալու և այլն շինծու ամբաստանութիւններով գիւղերէ կը հաւաքէին ազդեցիկ անձեր և երիտասարդներ և կը լեցնէին Մուշի բանալ: Ինձմէ առաջ — մտացած եմ պատճառը — բանաարկուած էր նաև էրզրուսի մեր շատ յուսատու ընկերներէն Գեղամ Աստուրեանը, որին ոչ մէկ կերպ յաջողեցանք ազատել ալ, վերջ ի վերջոյ զայն ևս Բաղէշ տարին և միւսներուն հետ շարքեցին հոն:

Միւթէտարըֆը միշտ օրալիւր ու հաճոյակատար էր. մեր բողոքներուն կը պատասխանէր թէ բուսկանաչափ օւժ չունի զսպելու, թէ երկիրը անխիտնութեան մտան ւած է, պէտք է հալքերել և օգնել իրեն, թէ Ռուբէնի փախուստը շատ գրգռած է մահմետական տարրը, և քանի որ ճշմարտութիւնը արուածն եկաւ, պէտք չէ որ ան լեռներ թափափ հասարակ աւազակի պէս...:

Այս նպատակին շատ կտուցած էին: Էստղ պէլը յարմար վայրկեան չէր կօրսնցներ Վանքմօրէս» խնդրելու որ ամբողջ ազդեցութիւնս և միջոցներս ի գործ դնեա զայն վար բերելու լեռներ ն:

Մարտի սկիզբն էր արգէն, երբ օր մը լուր

բերին թէ թլա Նէյխը կամ Մուսա բէգը յարձակած են Մուշախչնի վրայ, սպաննած յայտ է ընտանիք սը և բազմաթիւ մարդիկ ու աւերած են գիւղը:

Մեր շրջաններուն մէջ զայրոյթը իր գագաթնակէտին հասաւ. մեր հին մարտիկները կը պահանջէին այլ:ս լեռ բարձրանալ... Եւ որ սը այդ օրերէն Տէրկէւանի ոչս Սէթօն նսմակ սը բերաւ ինծի: (Սհնեակ սը առած էի Ջօլօյի Գասպարի տունը՝ առաջնորդարանի ձիշտ դիմացը, իսկ ա՛մբողջ օրը սըրբաղանի հետ կ'անցընէի):

Նսմակը Մճօնէն էր: Կը գրէր թէ այլևս չը հանդուրժելով ստեղծուած կացութեան, մօտ երեսուն ընկերներով Առաքելոց վանքը կը դանուի իբր բողոքի ցոյց, կը յանձնարարէր մեզ պահանջել կոստ վարութենէն վերջ ալ անիշխանութեան, եթէ ոչ իբր ըստուաներ աղատ պիտի համարեն ինքզինքնին: Նախակէս ոչինչ յայտնած էին մեզ, երևի վախաւով օր արգելք կը լինենք. Սրբազանը և ես անակնկալի եկանք և կը խորհէինք թէ լադրել հրատարիլ այդ ցուցական քարտէսը: Միւթէսարը՛քը չգիտեմ ինչ ազդիւրէ, բայց մեզս առաջ իմացած էր այդ քայլի մասին և արդէն միջոցներ ձեռք առած էր: Իր սիրելի և վստահելի չէրքէզ հարիւրապետ Ահմէտ պէյին տալով քանի մը տասնեակ ձիաւորներ զրկած էր Առաքելոց վանքը ձերբակալելու ըմբօստները: Երբ այդ խումբը կը բարձրանայ Առաջ գիւղէն դէպի վանք, առաջին իսկ գնդակէն ձիէն կը գլորին չէրքէզ սպան և երկու օստիկաններ. միւսները ցրուած կը վերսօդանան: Այդ բոլորը այնքան արագ կատարուեցաւ, որ ես իրմէ սիտյն տեղեկացայ, երբ պարենաւորման յանձնաժողովի մէջ էի: Միւթէսարը՛քը մեռելի աղժգունութեամբ, սմբած, չուխը կորսնցուցած թևա

մանելով տարաւ փողոց մը և գրեթէ աղաչական եղանակով խնդրեց ժամ առաջ հեռացնել առ Մճօն վանքէն:

Պատմեց դէպքը յսուգուած և սպաննութիւնը իր «դանրման» (հերոս) սպային:

Յարմար բոպէն էր օգտագործելու այդ դէպքը և պահանջելու իրմէ կտրուկ միջոցներ ձեռք առնելու Տարօնը ասպատակողներուն դէմ. ամէն բան խստացաւ, ի հարկէ...:

Մճօն նոյն գիշեր Յօղոց վանքը և Սասուն քաղաքացաւ: Մճօյի այդ ձևով լեռ երթալը վարակիչ դարձաւ գիւղերու մէջ ամէն բոպէն զաւարթնելու սպաննուելու վտանգին ենթակայ մեր մարտիկներուն համար. անոնց մէ ոմանք նոյնպէս աննշմարելի գնացին սիանալու ըմբօստներուն:

Սարախանեան Սրբազանին հետ առանձնացած իր սենեակին մէջ՝ ամբողջ օրերով նսմակային կապ կը պահէի Պոլսոյ, Վանի և Կարնոյ հետ մէկ կողմէ, միւս կողմէ Տարօնի և Սասնոյ ընկերներուն հետ. կը պատասխանէին անպտճոյճ, յուզիչ լեզուով. կը պատմէին իրենց հետզհետէ անհանդուրժելի դարձող կացութիւնը, հրահանգ և միջնորդութիւն կը խնդրէին...:

Անտէր և անգլուի էր մնացեր ժողովուրդը. Սասուն բարձրացած ընկերները այլևս կտրուեցան դաշտէն, թէև կրնային հարկաւ, հին օրերու պէս, իջնել, շրջագայիլ, կազմակերպել ու օգի ներշնչել: Ռազմաճակատէն, ըստ երևութիւն, շատ մխիթարական լուրեր կուգային թիւրքերուն համար. միւթէսարը՛քը արտաքինէն դժուար է բան հասկնալ — վարպետ էր իր ներքինը չմտնելու համար, բայց իր ստորազըրեալները այնքան ալ վերապահ չէին:

Մարտի վերջերուն, միւթասարճը Բաղէշ հրա-  
ւիրուեցաւ կուսակալին կողմէ. այժմ գաղտնիք չէ, ի  
շարկէ, որ հայերու տարագրութեան և հայ ղեկա-  
վարներու ձերբակալման ու շարդի հրահանգներ տալ  
լու համար էր. Իրեն փոխանորդ նշանակեց մալ միւ-  
տիւրին, միամիտ ու բարի ծերուկ մըն էր, որ այ-  
ցելեց առաջնորդարան և իր կարծիքով պետութեան  
օգտակար ծառայութիւն կատարելու նկատուածով երևի,  
մեր չգիտցած շատ բաներ հասկցուց մեզի:

Անկէ լսեցինք, որ սվաղցի Մուրազը լեռ բարձ-  
րացած է և հեռագիր էին ստացած թէ անցեր է  
Սասուն. կ'ուզէր մենէ ստուգել...: Ըսաւ թէ Վաս-  
պուրականի լեռափոխականներուն մէջ ևս խլրաւու-  
ներ կան, ու ի հարկէ, յօրդորեց որ կառավարու-  
թեան հաւատարիս մնանք և պատերազմի այս ծանր  
օրերուն թեթևցանք բեռը, և ասոր նման խօսքեր:  
Ինք հակաթիթիհատ էր, ասելով կ'ատէր միւթէսա-  
րըջին, — «Երէկուան լեկոտներու յանձնած են երկ-  
րին ղեկը, ափսոս այս երկրին...», կ'ըսէր:

Գարդ էր մեր ճակատաւիրը ուրեմն, կը կար-  
ծէինք թէ հալածանքը սիտն հայ հասարակական և  
լեռափոխական ղեկավարութեան դէմ է. պէտք էր  
զգուշանալին ուրեմն անոնք, առջին հարուածը յե-  
զափոխական ղեկավարութեան պիտի տային:

Այս ամէնը հաղորդեցի Սասուն ապաստանող-  
ներուն, պատասխանը եղաւ, որ մտաւօրականները  
պէտք է թաղցնել, մարտական ուժերը հոն շրկել.  
Ինչ ևս կը կանչէին իրենց քով: Անհնար էր այդ  
մասին մտածելն իսկ, էրդրումէն ալ Փրլոսը և Միւ-  
րան թէրլէմեզանը թախանձագին կը խնդրէին հոն  
երթալ, կառավարութեան հետ կապ պահելու համար.  
բայց Վանէն կրնային ուղծ մէկը և այդպէս ալ զրոյցի  
անոնց:

Սասունէն ալ մտահոգիչ լուրեր սկսան գալ:  
Աշիրէթներու կեդրոնացում կը կատարուէր  
հարուէն և արեւուտքէն իբր թէ պատերազմի եր-  
թալու համար, բայց բոլոր իրենց շարժումներէն եւ  
սպասնալի կեցուածքէն պարզ էր, որ Սասունի գըլ-  
խուն փորձանք մը կը պատրաստուէր:

Անոնք անկէ միշտ կը հաւատացնէին մեզի թէ  
Ռուբէնի և Կօրիւնի հոն երթալէն վերջը Սա-  
սունը ընդդիմութեան և միանգամայն ըսբոսութեան  
կը պատրաստուէր:  
Սասունի դէմ պիտի ուղղուի նախ թիւրքերու հար-  
ուածը և անոր դիմադրութեան յաջողութենէն կախ-  
ուած է Դուրանի ' ջաղաքի փրկութիւնը. հետեւա-  
բար մարտական փորձառու ուժերը և ազգամիւթը  
հոն պէտք է կեդրոնացնել:

Բնաղդօրէն սխալ և միակողմանի կը թուէր  
անոնց այդ տեսակէտը. շիշա Ռուբէնի պէս կը մտա-  
ծէր նաև Վանի իշխանը, կարծելով թէ լեռներու  
մէջ է փրկութիւնը, իսկ ջաղաքը անյուսալի յենա-  
րան է և ջաղաքացիք մեղկ տարր են...:

Շատ ընկճուած էր Սրբազանը լեռ ելնողներու  
այդ դատողութիւններէն. նոյն իսկ անգամ մը խնդ-  
րեց գիշերով անձամբ հոն երթալ և համոզել, որ  
Դուրանը և ջաղաքը ձեռքէ չթողուն:

Մարտի վերջին օրերուն էր, որ մը շատ յու-  
սահատ ու սև միտքերով նստած էինք առաջնորդա-  
բանի սրահին մէջ, երբ սարաջ Յարօն արադ ներս  
մտաւ ու լիտօրդաւոր շարժուածով մը ինձ կուրօ  
կանչեց:

Ռուսական բանակէն սուրհանդակներ էին ե-  
կած... Փրկուած էինք արդեօք — առաջին հարցը  
որ առւի ինձ. անհաւատալի հրաշք կը թաւար, սուր-  
հանգակները Կարօյի առուն էին շքրտական տարազով

երկու քրտախօս երիտասարդներ և մէկ քիւրտի աղջիկ ելան տեղերէն. քօշօղները վար տօխն և ակնածանքով սօսանալով ծունկի եկոն ու համբուրեցին ձեռքս. ըսած էին իրենց թէ ամեծ կամիտան» եմ. սգերդցի հայեր էին այդ սքանչելի հերոսները— Տիգրան եւ Լևելո (դժգախտաբար մոռցած եմ աղջկայ անունը). անսահման խանդաղատանքով գրկեցի հարազատները մեծագոյն այդ հարազատներուն, որոնք եօթ օրերէ ի վեր, գիշեր ու ցորեկ անցած էին մահասփիւռ ճամբաներէ, թրքական և հասիախէի շղթաներէն, փշուր մը յոյսի նշխար հասցնելու Տարօնի անյոյս ժողովուրդին...:

Քրտինքէ դեղնած, թրջուած ու ճերմկուած թուզթի կտոր մըն էր. ստորադրուած էր «Դեւոյ' ա- նի» կողմէ: Անծանօթ էր ինծի թէեւ, բայց կուսակցական ընկեր պէտք է որ լինէր, որովհետեւ Թոստոմի մասին կը խօսէր, որ քսնի մը օրէն իր քովը, բանակաւորը պիտի դար:

Դեւոյեանը կը գրէր թէ ուստական բանակը Պուլանըղ է և շուտով Ս. Կարապետ պիտի հասնի. կը յորդորէր քիչ սըն ալ դիմանալ. կը խնդրէր մանրամասն և ստոյգ տեղեկութիւններ մեր շրջաններու թրքական կանոնաւոր և անկանոն ուժերու մասին: Շաբաթէ մը ըստ կարելոյն լրիւ տեղեկութիւններ հաւաքուեցան, որու համաձայն Ախլաթի կողմերը ոչ սեծաքատակ քրդական ուժերն էին, Մուշը նորակոչներու կեդրոնացման վայր էր, որոնք օրակով արժէք չունէին. Տիգրանակերտէն և Պարբերդէն 4—5000 կանոնաւոր զօրքեր եկած և տեղաւորուած էին դաշտի հարաւային մասերուն մէջ: Այս բոլոր տեղեկութիւնները, ինչպէս նաև Տարօնի և Սասնոյ ժողովուրդի վիճակը, սեր դիւխին կախուած վասնզը չնշտելով բանակի գոնէ հայկական մասի ժամ

անաջ դաշտ մտնելու մասին Սրբսղանին] և ամենքիս անունէն կը թախանձէինք:

Կասկածի տեղի չտալու համար, ինչպէս նաև խուզարկութեան պարագային նամակը և անձեռնմը- լեկի պահելու հոգածութեամբ ձե մը մտածեցի, գաղտնի մելանով գրեցի 8—10 ստանալձփ լայնու- թիւն ունեցող երկար հաստ թուղթի մը վրայ, միւս երեսը հ մ ա յ ի լ ի արարակոն նշանախօսքերով և նշաններով (մեծ մտտասը երևակայական ի հարկ) լեցնել ավել մեք սքանչելի պատանիներէն լաւ թրք- քազէա Լեւոնին: Ապա ետանկիւնի ծալլելով կարե- ցինք հնամաշ կապոյտ լաթի մը մէջ, անկիւնը ամ- րացուցինք երկու կապոյտ ուղունքներ և կտրեցինք ներսէն Տիգրանի թւին ասկ...:

Այսպէս ճամբու դրինք մեր վերջին ոսկէ յոյ- սերը անօնց լաջողութեանը կապելով, Հայ աղջիկը պահեցինք, զնաց Տէրկէվանք գիւղը ' թշուառ ու թանկաբիւն հերոսուհին հետագային զոհ զնաց հաղա- րաւորներու հետ:

Բանակի նամակի պատճէնը ինչպէս նաև մեր պատասխանը, նմիջապէս Սասուն դիկուեցան: Որ- քան ալ աշխատէինք գաղտնիքը պահել, մեր շրջա- նակներուն մէջ տարածուեցաւ լուրը: Բարձրացաւ ժողովուրդի ընկհուած օգին. ինչպէ՛ս չօքեւորուէին, երբ ուստական բանակը Մանազկերտէն Պուլանըղ կը յառաջանար, իսկ ձախ թւը Վասպուրականէն Ախլաթ և Դաասուան: Վարդոյէն և Վարդեսիւրէն լուրեր կը ստանայինք թէ արշալոյսներուն թնդանօթի ձայներ կը լսուէին արդէն...:

Ռուստական յառաջխաղացման իրողութիւնը օտուզեցի նաև պատահական հանդիպման մը մի- ջոցին:

Եւ շատ լաւ յարաբերութեան մէջ էի գերմանացի նախնի միտիոնարական հաստատութիւններու հետ. Օրիորդներ էին, որոնք աղջկանց օրբանոցներ ունէին: Օրիորդներէն մէկը, գերմանացի, միւս երկուքը Սքանախնաւեան թերակղզիէն էին. մասնաւորապէս Շվեսթեր Բրիտին (գերմանուհի) երկար տեւեւ էր վեր վասպուրական և Տարօն գանուելով, աւելի ընտանի էր սեր շրջանակներուն. աչքի կ'ընէ նոր նաև շուէտացի Շվեստեր Պօզլեր, խելացի լուրջ և պատրաստուած միտիոնարուհի մը, որ անգնահատելի հասարակութիւն ըրաւ Մշոյ յոգովուրդին:

Այդ օրերը այցելեցի Շվեսթեր Բրիտինէի օրբանոցը. այցի եկած էր նաև շատ երիտասարդ գերմանացի սպայ մը, որ շրկուած էր Պօլսէն Հեքեարի երթալու համախելեական գունդերու կազմակերպման և գլխաւորելու համար: Բրիտինէն ըսաւ թէ մէկուս ես և անունս շատ առաւելուած և անորոշ արտասանելով, դուրս ելաւ թէյի պատրաստութեան:

Օգտուելով առիթէն հարց ու փորձի սկսայ և ստաջին իսկ խօսքերէն հասկցայ որ թիւրքի տեղ կը դնէ զիս: Աւելի ու աւելի արծարծեցի խօսակցութիւնը և անոր բերնէն լսեցի որ իսկապէս ուսեսերը մօտեցած էին Պուլաճիսի և Ախլաթին. ըսաւ թէ թրջական բանակը կրնաքայքայուած էր և տիֆի համաճարակը օրական հարիւրներ կը հնձէ:

Բանի մը օրէն, այս անգամ յետակապէս հրապիրուած էի օր. Բրիտինէին կողմէ. շերկայացուց ինձ Մուսուլի շերտ. հիւպատոսին: Ի հարկէ, նախապէս օրիորդը ըսած էր իմ մասին. լաւ առիթ էր Տարօնի վիճակը և կատարութեան գիրքը պարզելու իրեն:

Սիրա դժգոհ կ'երևար թիւրքերէն. Քթորչօրոս ժողովուրդ է՝ կ'ըսէր և կը հետաքրքրուէր մասնաւորապէս ազգական թիւուներ աշխատութիւններով:

2.

ԽԱՐԱԽԱՆԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՄԱՅՐ  
ՀԻԻԱՆԴՈՒԹԻԻՆՍ ԵՒ ՓԱՆՈՒՍԱՐ

Ապրիլի սկիզբն էր արդէն: Ռազմադաշտն հասնող լուրերը ըսաւ երևոյթին մտիթարական չէին. թիւրքերու դժգոհութիւն մտղձ կը թափէր և միեւնոյն տանն անորոշ երկիւղ մը կար աչքերուն մէջ. մասնաւորապէս Բոթաննց ընտանիքի անդամներուն արտայայտութիւնը զգայնաչափի դեր կը կատարէր մեղ համար: Լուրեր կը պտտէին թէ անթիւ սպաննուածներ կան, թէ բանակը քայքայուած է համաճարակի և անօթութեան շնորհիւ: Հրամանատար Վասըֆ պէյ ալ ու ձախ հայտնելով, իր սենեակէն կարգադրութիւններ կ'ընէր իբր թէ միւթէսարէֆ: այլանդակ ժանա կերպարանք էր ստացած. ամէնքը ծանրապէս մտահոգ էին:

Միւս կողմէ ժառ առաջ կը ծանրանար հայ զիւղերուն վիճակը: Ակնյայտի կերպով չէթաներ կը կազմուէին քիւրտ աւատապետներոն գլխաւորութեամբ: օրոնք տէր էին դարձած երկրին ու անարգել կ'ապառախէին: Այս առթիւ էր, որ Սրբաշանը այդ օրերուն այցելեց սիւթէսարէֆին:

Ես սերայէն հեռու, ձամբու քով կը զբօսնէի, սպասելով անոր վերադարձին: Վերադարձաւ խիստ

մատնող ու արտում. իսկ արցական հայեացքին, զթի  
տակէն ըսաւ՝ Աստուած հեռու ընէ, թշուառական  
անիծուածը. գայլի չէ՛յք էր ստացած. չարագուշակ  
բան մը կար անոր հայեացքին մէջ...»:

Եւ այդ միջոցին իթթիհապը արգէն որոշած էր  
ջարդը ու տարագրութիւնը և անկասկած գործադ-  
ծադրութեան նրամանը արուած էր ամէն տեղ, ինչ-  
պէ՛ս գայլի չէ՛սք չստանար իժի այդ ծնունդը:

Երկու թէ երեք օր յետոյ, իրիկուան կողմը,  
երբ մթնշաղ փակուած էին բոլոր պետական հիմնար-  
կութիւնները, առաջնորդարան եկաւ միւթէսարմֆի  
հետ պատող օստիկանը. «միւթէսարմֆի պէլը կը  
խնդրէ ձեզ շնորհ բերել սէրայ» լարգանքով դարձաւ  
ան ինծի:

Ոստիկանին զրկեցի ըսելով թէ քիչ մը վերջը  
կուգամ. ճոշինչ, վարը կը սպասեմ», պատասխանեց  
ան և իջաւ...»:

Սրբազանը գոյնը նետած յուզուենքէն կը դո-  
զար, տարակուսանքի մէջ էինք. ի՛նչ կ'ուզէ. ինչօ՛ւ  
այսպէս ուշ, այն ալ սէրային մէջ... ինչօ՛ւ օստի-  
կանը մնաց ուղեկցելու: Բնադրօրէն դաւադրութիւն  
մը կ'ենթադրէինք պատրաստուած: Ատրճանակ կը  
կրէի մ'չտ, փախադրեցի վերարկուիս աջ զրպանը:  
Սրբազանը ըսաւ թէ անմիջապէս լուր պիտի տայ  
աղայօց սէրայի մօտերը գտնուելու:

Ոստիկանը լա ընայն սկսաւ հետեւիլ ինձ:

Միւթէսարմֆը անբնական քաղաքավարու-  
թեամբ մը և չղային շարժումով մը ձեռքս սեղմեց  
ու հրաւիրեց նստելու պատուհանի դիմացի կողմը. ես  
նախըտրեցի պատուհանին առջև նստիլ և զայն թո-  
ղուլ լօյսին դիմաց, կարենալ դիտելու անոր դիմա-  
գիծը և մանաւանդ շարժումները: Սէրայը ամայի էր.  
ջիղերս շատ լարուած էին:

Միւթէսարմֆը նստած չէր, անընդհատ, կործ  
տարածութեան մէջ քովէս կ'երթար կուգար, կից  
կուր բաներ էր կ'ըսէր և յանկարծ առջևս կը ցցուէր  
ձեռքը ետին տանելով:

«Ի՛նչ ունի» կը մտածէի ես և յանկարծ այդ  
միջոցին էր որ նկատեցի ատրճանակի կաթը ետեւի  
զրպանին մէջ՝ սէրայի դրան սուչևի կանխեղի ճառա-  
գայթին շնորհիւ:

Կարծակի արագութեամբ ձախ կողմս իրեն  
դորձուցի և արճանակս գրպանիս մէջ պատրաստեցի:

Միտքս աննդադին արագութեամբ կ'աշխատէր.  
Վիւնայն ատեն, հակառակ զսպուսիս, անբնական  
բարձր ձայն մը եկաւ ներսէս. ընդհատելով իրեն  
պստացի.

«Զեմ հասկնար ձեր դիս հոս կանչելու՞ չնպա-  
տակը. նստեցէք ու այնպէս խօսեցէք, չեմ ըմբռնե-  
ր'նչ ըսել կ'ուզիք»:

Պահ մը քարացաւ, ձեռքը օշին մէջ կախուած  
մնաց ու լռելեայն դիմացս նստեցաւ. ինձմէ անկախ,  
Չղաձորէն ատրճանակս կ'իսով հանած էի գրպանէս.  
Նկատած էր, բաւական մը լուռ մնալէ վերջ, զսղը-  
ուած կիրքով մը, հեւ ի հեւ ու մ իշտ կից կտուր՝  
խօսեցաւ Սասուն փախչողներու մասին. ըսաւ թէ  
անոնք քայքայեցին այս երկրին խաղաղութիւնը, որ  
աղղեցութիւնս պէտք է որ գործ դնել վերադարձը.  
Ննու, թէ վերէն կարուկ նրամանէր կը ստանայ  
ծայրայեղ միջոցներու դիմելու, սակայն ինքը կ'ուզէ  
սպասել բոլոր միջոցները:

Պատասխանեցի թէ այլևս աղղեցութիւնս կոր-  
սընցուցած եմ, քանի որ ոչ մէկ խոստումս չկրնոր  
իրագործել, իսկ իս խոստումներս հիմնուած էին միւ-  
թէսարմֆի հաւատարմներուն վրայ: Ըսի թէ անձ...»

պէս օրքան կրնամ օգտակար լինել իրենց, արածադրելի եմ, բայց ոչ մէկ պատասխանատուութիւն կ'ուզեմ ստանձնել ունէ մէկի համար . . . պատու ասանէն դուրս նայելով աւելցուցի:

«Չեմ ուզեր ձեզի այլևս ձանձրոյթ պատճառել իմ հեռուորդներս դուրսը ինծի կը սպասեն»:

Նայեցաւ դուրսը լապտերի լոյսին մէջ երևցող քանի մը ստուերներուն և ի ձ հետ մինչև սենեակին դուռը գալով կանգնեցաւ: Ելաւ դուրս և դուռը ծածկեցի:

Իրապէս կ'ուզէր անձա՞մը սպաննել զիս թէ ոչ ձերբակալել և զրկնել սպաննելու — կը դժուարանամ ըսել . . .:

Հետևեալ իրիկունը հրամանաւորին գացի, տնկէ կամ անոր արտաքին շարժումներէն բան մը հասկնալու համար, դժբախտաբար հոն չգտայ: Շուկայէն կ'անցնէի, բացարձակ ամայի, երբեմն այս օրայն անկրկններէն երկչտա դէմքեր կ'երևային, օրոնք կը փութային աննշմարելի անհետանալ: Փողոցներու երկայնքին զինուորներու համադրեցածի ցնցոտիներու մէջ աստիճանակ դիակներ ինչև ծ էին ցեխերու մէջ կամ հողի զօյն ստացած կմախքներ, օրոնք մահուան հոնդիւններ կ'արձակէին, բորոտ ու զազրելի շուկերու խումբեր դիակները այս ու այն կողմ կը քաշփրչէին, տեսայ երկու շուկեր, դեռ կենդանի զինուորի մը կոկորդը կը պատռէին . . .:

Դէպի հայոց թաղը իջնելէս վերջ միայն քիչ շատ կեանք ու շարժում նկատեցի: Դիլաւորապէս կանայք դուռներու առջև պաղտագին ու փրկութեան մը օպտոզ հայեացքներ սրտիս մէջ կը մխրձէին, անկարելի էր օրհալ այդ բոլորին:

Ս: բաղանը պատուհանին առջև ինծի կը սպասէր, գրկեց ինձ ու փղձկաց: Ինչո՞ւ կուլար, ես ալ

ինքն ալ չէինք զիտեր, բայց հայր ու խեղդող թախիծ մը ծանրացած էր կուրծքերնուս վրայ:

Տիճուսը մտած էր նաև հայոց թաղը, բայց քիչ դոհեր տարաւ, ատոր փոխարէն սակայն ինչ ճարօնի թանկագին ' իրական հովիւ Խարախանեան եպիսկոպոսին կեանքը:

Ինչպէս ըսած եմ, ցրեկը միշտ իր քովէ էի և մօտէն կը հետևէի իր ժուժկալ կեանքին, զոհարարութիւններուն ու ժողովրդասիրութեան: Իր դուռը և սեղանը ամենքի առջև բաց էր և մասամբ այդ բանի պ' ահառով վարակուած զիւրին էր: Իր ննջարանը օր և եղանատուն էր միաժամանակ, օջիւներու բոյն էր դարձած, խումբերով կը շրջէին անկողնին ու սեղանին վրայ . . .: Ու օր մը ինչպէս անկողին վարակուած էր: Բանակի յոյն բժշկագետը և վանեցի հայ երիտասարդ զինուորական բժիշկ Ներսէս Շահպաղեանը փութացին փրկել իր կեանքը, սիրաբ շատ թօլ էր, ասորիքը 60ը անց, չի կրցաւ տոկալ և օւթերօրդ օրը մեռաւ:

Մահուան վերջին վայրկեաններուն քովը չէի ես ալ վարակուած էի անկէ ու նոյն օրը անկողին ինկալ ձօջօյի սենեակին մէջ, անկէ էր որ լսեցի եկեղեցիներու զանգակներու ախուր ղողանջը՝ մեծ հովիւին մահուան բօթը: Առաջնորդարանը ձորի միւս կողմը, ճիշտ դիմաց էր, տեսայ միայն մահուան թափօրը . . .: Հիմա կը խորհիմ ու երանի կուտամ, որ այն ատեն մտաւ ու չտեսաւ իր ժողովուրդի յօշոտումը և անոր հետ չի կրնց զարհուրելի բանի մահը:

Ապրիլի կէտներուն էր որ հիւանդացայ, ամիս մը կարծեմ բոլորովն զգայազիրի վիճակի մէջ էի, շրջապատուած էի ամենազուրկուրտ խնամքով տեղական ընկերներու, ոչինչ, ոչինչ կը խնայէին կէտ

առ կէտ կատարելու համար յոյն բժշկապետի պատ-  
 ուէրները, բժ. Շահպաղլեանի անմիջապէս հսկողու-  
 թեան տակ: Իսկ Պօղոսն, այդ համակ նուիրուած  
 աղան, պատանի Լեւոնը, Գարեգինը, ամէն օր առ  
 բաղնիք կը պատրաստէին, մայրական սօրովով կը  
 վրցնէին զիս ու կը դնէին, Կարտիկ լեւան ստորո-  
 տէն (3—4 ժամ) աղբիւրի ջուրէն կը բերէին, լեւան  
 սօսունը փռնջերով...:

Իսկ սեր ժողովրդի արտայայտած մտահոգու-  
 թիւնը, յուզմունքն ու վերաբերմունքը — չմտցուիր  
 երբեք. ժամերով հետուներէն սարդիկ կը զրկէին  
 տեղեկութիւն տանելու. եկեղեցիներու մէջ սաղթանք  
 կ'ընէին...: Արժանիքի գնահատութեան մասի՛ն կը  
 խօսիմ — օչ. կ'ազեմ ասով շատերու. ըսել միայն,  
 անոնց, որոնք դժգոհ են սեր ժողովուրդի կարծեցեալ  
 անտարբերութենէն դէպի գործիչը. հասարակական  
 մարդը — թէ սեր անուշ ժողովուրդը անսահման  
 զօհաբերող է իրեն նուիրուածներուն և պաշտամունքի  
 կը հասցնէ իր զգացումները:

Ձերմ ու մարդասիրական վերաբերմունք ցոյց  
 առին ն'ւ միտինարուհիները, մանաւանդ ազաքիւնս  
 ման շրջանիս ասէն օր, երբ կաղաւթիչ սնունդ  
 պէտք էր:

Մեր ժողովուրդը թէև արագըրութեան լուր  
 չէր տաւ, բայց տնոր նախազգացումը արդէն ըսած  
 էր իրեն իր գլխուն գալիքը: Նախ՝ մեզ կորսնցնելէ  
 կը վախաւայիս: Վարդան վարդապետը եկած էր քա-  
 ղաք տաղտորդական պաշտօն կատարելու. նա գիշեր  
 ցերեկ մեր երիտասարդներու հսկողութեան տակ էր:  
 Շատ ընտրոշ էր ինձ վրայ հաստատուած հեկոզութեան  
 ձեւը:

Գիշերները դուրսը և ներսը երեքական ընկեր  
 հերթապահութիւն կ'ընէին. իսկ ցերեկը արհեստաւոր

ընկերները կ'աշխատէին բանակի համար: Բնակած  
 առնէս վեր կօնաուրաջի Արևնակի առնն էր. տառ-  
 ւօտէն մինչև իրիկուն անոնց տան երդիքին ցցուած  
 էր իր սօր (60ի մօտ կին մը) սէգ հասալք. տանիքի  
 եզրին կանգնած, նա արչնական թել կը մանէր եւ  
 արծւի պէս կը դիտէր թիւրքերու կառավարական  
 շէնքերու կողմէ եղած շարժումները, կամ դէպի իմ  
 տունը յառաջացող ուէ անձանօթ կամ կասկածելի  
 անձեր, ուէ բան նկատած պարագային իր քով  
 խաղցող 12—13 տարեկան աղաներու միջոցով լուր  
 պիտի տար մերոնց...:

Հիւանդութեանս ծանր շրջանին արդէլած էին  
 այցելութիւնները, բայց մայիսի մէջ հնարաւորու-  
 թիւն ունէի մօտա մարդիկ ընդունելու: Վարդան վար-  
 դապետն էր, օր կուգար դարձէն տեղեկութիւններ  
 հաղորդելու:

Օր մը յանկարծ, միւթէտարըքը եկաւ աստի.  
 կանապետին և ստաիկանի մը հետ: Լուրը զայցած էր  
 ընկերներուն. առն լեցուեցան 8—10 ընկերներ:  
 Միւթէտարըքը շատ սրտցաւ հարց ու փորձ ընելով,  
 հետացաւ:

Հետեւեալ օրը եկաւ փոստի միւտիւրը, իմ  
 հայրենակիցը, մտածկօտ էր և լուա: Կանեակի քանի  
 մը դաւաթ պարպելէ վերջ սկսաւ շուրջը նայել.  
 ընկերները հասկցան օր կ'ազէ մինակ մնալ ինձ հետ  
 (անկէ չէին կասկածեր), հետացան: Միւտիւրը քիչ սը  
 հազալէ վերջ, զլուխը մօտեցուց անկողնիս ու շըն-  
 չաց.

«Ձղարջ եղիր. Աստուած ազատէ ճիշդ ու հա-  
 յերուն. իթէ օրնիսկ ի վիճակի լինես անկողնէն ելլելի.  
 մի՛ ելներ, ծանր հիւանդ ձեացիր. մինակդ չմնա-  
 այս խնջիրը (անհուատը — միւթէտարըքին կ'ալ-

նարկէր) չարիք պիտի բերէ երկրին... ես կուզամ զարձաւ և պէտք եղած ժամանակ ինչ որ պէտք է կ'ըսեմ քեզի...»:

Ու անմիջապէս ելաւ ու մեկնեց:

Անկէ քանի մը օր վերջը միւթէտարըֆը Երկրորդ անգամ Բաղէշ գնաց: Նոյն ատեն միւտիւրը Թուրքերէն գրուած փոստքարթ մը ղրկեց ինձի: Էնկիւրիկն էր եկած, իմ հասցէին և եղբորս ստորագրութիւնը կը կրէր, իսկ ձեռագիրը Շահրիկեանինն էր. կը ճանչնայի (պատրիարքարանի շատ մը թագրիւնները իր ձեռքով էին գրուած):

Կը գրէր թէ շատ մը ընկերներու հետ (մէկ քան իններուն անունները կուտայ) հոն են և կ'աժ, զրամ կ'ուզէր և պայմանական խօսքերու շարան մը, որմէ ղմբախաբար բան չհասկցայ, ու ջաւ եղած է ինձ: Հասկցանք միայն որ աքսորուած են Պոլսէն...: Վարդան վարդապետի հետ խորհրդակցելով՝ օւզեցինք անշեկանալ նաև Կիլիկիոյ ժողովուրդի վիճակը: Հո՛ւ պիտի դառնաւ լինէին իբր օւսուցչուհի, իմ լաւ ընկերներէն օրիորդ Տրքուհի Ազարեանը (ներկայիս Տիկ. Միտքեանը) և Չարուհի Փէչախալճեանը: Հեռագրեցի իմ անունով, խնդրելով որ նարինջ եւ կիտրոն ղրկեն ինձ: Պատասխանը եկաւ 5-6 օրէն. կ'ըսէին թէ ժողովուրդը հեռացած բլլալուն համար, նարինջները փճացած են... քիչ մը. ձիւքով փակցուած հեռագիր էր, բայց շատ բան ըսաւ սեղ:

Յոյն բժշկապետէն լուրեր կ'առնէինք Տարաուէի կալուներէն. անոր կարծիքով օրերու խնդիր է. Պոլսը պիտի գրաւեն եւ պատերազմը պիտի վերջանայ:

Բաղէշէն վերադարձին, միւթէտարըֆը նորէն պատուեց ղիս իր այցելութեամբ: Շատ լաւ արամադրութեան մէջ էր: Սո, որ ելած էի անկողնէն և

աննեակի մէջ օւժերս կը փորձէի, անմիջապէս մտայ անկողին և դեռ շատ թոյլ ձևացայ:

Միւթէտարըֆը ըսաւ թէ Բաղէշի մէջ անսած է Վասմեանին, որ Պոլս կը վերադառնար.

«Շատ խելացի և զիտուն մարդ է, աւելցուց, ձամբու դրինք. բարև ըրաւ. ինչալլած, դուք ալ քանի մը օրէն կ'ելլաք անկողնէն, ձեզի հետ երկու երեք շաբաթ կ'երթանք վերի այլիները օդ առնելու, կը կաղաւթուիք ու անկէ յետոյ կը մեկնիք... զէ՛ շուտ ըրէք շուտ» կատակով վերմակը ձեռքէ զանի մը անգամ:

Չգիտեմ ինչ մղումով (տիֆուս հիւանդութիւնը նման տարականոն արամադրութիւններ կը ստեղծէ) վայրկեան մը բարձիս տակէն ատրճանակս հանել եւ կրակել վրան — երանի ըրած լինէ՛ն: Սլաւ ու սեկնեցաւ:

Ընկերները զինուած, լարուած հեռաքրքուսթեամբ կը հետեւէին անոնց: Եւ երբ փառի միւտիւրը այցիկաւ, հաստատոց Վասմեանի անցքը Բաղէշէն, ինքն ալ, ի հարկէ, չէր գիտեր, որ գաղաններու պէս պիտի յօշոտէին զայն Պաթման Սաւի կամուրջին քովը: Միւտիւրի յայտնեց նաև թէ միւթէտարըֆը անձամբ ստուգելու կուգայ. եթէ տասջլ տեսնէ պիտի ձերբակալէ...:

Սասուն գոտուող մեր ընկերները օրէ օր անգեակ էին անցուղարձէն. Վարդան վարդապետը և ընկերները պարբերաբար լուր կուտային: Սասունի ընկերները խիստ անհանգիստ էին իմ վիճակի նկատմամբ: Յունիտի սկիզբն էր, երկու անգամ լուր ղուլեցին որ պահուիմ կամ Սասուն բարձրանամ. անհնար գոսայ վարդապետը սխալ թողուլ: Անշա՛մ մը լուր էր ստացած որ Մուշի մէջ ձերբակալութիւններ կը կատարուէին. Մճոն իր խուժրով իջած էր կուրտիկէն:

Ես և շրջապատիս ընկերները կը զգայինք որ սուրը կտխուած է մեր գլխուն. մէկ օրէն միւսը ինձ և աչքի ինկած ընկերները ձերբակալել: Մանաւանդ անկողնէն ելլելէն վերջը պէտք էր ինձ թարս օդ և քաղիւր: վարժութիւն: Յօրեկին երբեմն սկսայ դուրս գալ առօրի եզերքով. առջևէս եւ ետևէս աղաք կ'ուղղեկցէին:

Յունիսի երկրորդ կէտին էր, երբ միւսիւրը հեռադրատան պաշտօնեայ մեր երիտասարդ ընկերը զըրկած էր ինձի ընելու, թէ զգոյշ ըլլա՞մ, առնս փոխեմ...:

Այդ թելադրութեան վրայ, գիշերները ճրագս վտա կը ձգէի, իսկ ինքս Պօղոսի հետ կ'երթայի ուրիշ տեղ գիշերելու:

Այդ օրերէն մէկը, յանկարծ Սասունէն վանի իմ զինակիցներէն Մաթթէսը իջաւ 5-6 զինուորներով, եկած էր զիս բռնի ընտանեկու այլևս, Վիտք չունինք իշի նահատակ դարձնելու քեզ ըստեան խտորէն: Նոյն օրը խնդրած էի Կասոյի Հաջիին գալ խորհրդակցելու դաշտի և քաղաքի ինքնապաշտպանութեան կազմակերպութեան մասին: Հայկ Միւրիջանեանի տանը հաւաքուած էին. նաև տեղացի ընկերներէն քանի մը կտրեւոր եղողները:

Ներկաները, ինչպէս և Մաթթէսը, համաձայն էին որ Տարօնի ամբողջ ժողովրդի փրկութեան խընդիրն է որ պիտի շոյափուրի Սասունը չի կրնար ապաստան դառնալ հարիւր հազարէ անց ժողովրդին, ուրեմն պէտք է ջանալ վարրերուն մէջ ինքնապաշտպանութիւնը կազմելու: Ափսո՛ս, ըրչ մը ուշ, բայց պատրաստուեցաւ Դրագիր մը, որուն համաձայն դաշտը կը բաժնէր հինգ ինքնապաշտպանութեան շրջանակներու, իրենց շրջապատներով: Կը կազմուէին պաշտպանողական և թուուցիկ խումբեր, կ'արձանագրուէին զէնքերն ու փամփոշոնները. կը նշանակ-

ուէին համապատասխան վարիչներ, կ'որոշուէին կարգերը, դիրքերը, նշաններ, պահեստներ ևն.:

Նոյնը պէտք էր գործադրել եւ քաղաքին մէջ: Այս միջոցով շրջանակները փոխադարձաբար միմեանց օգնութեան կրնային երթալ և պաշտպանուիլ հաւաքաբար:

Կասոյի Հաջին, Տիգրանը, դերձակ Յակօն և այլ ընկերներ շրջան պիտի ելնէին այս նպատակով և նախ պիտի օգտագործէին հին մարտիկներու փորձառութիւնը՝ անոնց, անձնելով ղեկավարութիւնը շրջանակներու: Սասունի ընկերները, ըստ երևոյթի կլանուած էին Սասունի պատրաստութեամբ. կենդանութեան նշոյլ թոյց չէին տար դաշտի պատրաստութեան մասին: Ի՞նչ կը խորհէին. սիթէ՞ իրենց ձապաագրին պիտի ձգէին, թէ՞ ուրիշներ ունէին — ինձ անյայտ էր. քաղաքի ղեկավար ընկերներ շատ վշտացած էին և զայրացած:

Այլևս բնակարանս չվերադարձայ. սկսեցի ապրիլ ընկերներու առունը փախստական վիճակով: Մաթթէսի խումբն ալ միշտ ապրած տունիս դիմացը՝ ձորին սիւս կողմը կը տեղաւորուէր:

Չորս—հինգ օր անցեր էր այս կացութեան մէջ, երբ առաւօտ մը կանուխ լուսածուօէս նկատեցի, որ պէպի ձօճօրի Գասպարի տունը կը բարձրանան 10—15 զինուած աստիկաններ. առնը շրջապատած են, ներս մտան, բայց 15—20 թուղէն թողնու արագութեամբ իջան Առաջնորդարան. զիս կը փնտռէին անշուշտ: Վարագոյրը պատուած էր: Երկար մնացին հոն. հարցուցած էին վարդապետին իմ մասին: Պատասխանած էր թէ հիւանդ եմ և Գասպարի առնը պառկած: Զկրնալով բան մը հասկընալ, մեկնած էին:

Կը սպասէինք ընդհանուր խուզարկութեան և, ուրեմն, ընդհարումներու: Եթէ այս օրերուն պայթ էր կտրուր, կրնամ հաստատապէս ըսել, որ Տարօնը փրկուած էր, զորք գրեթէ չկար. կտրուր պիտի ընդլայնէր. մերինները լեռներէն կը կանչէինք, քաղաքը կը գրաւէինք և կը կապուէինք սուսական յառաջացող բանակին:

Կառավարութիւնը այլեւս ձայն չհանեց. ըստ երևայթին զօրք էր ուղած և կը վախնար ժամանակէն աստղ սկսիլ:

Ամէն կողմէ հարկադրանքը սկսու: Մանաւանդ վարդան վարդապետը և Մատթէոսը կը պընդէին օր հեռանամ քաղաքէն գոնէ ժամանակաւորապէս: Երթալէս աստղ շատ պնդեցինք, որ Միրիջանեան Արշակը, Տօքթ. Շահպաղեանը, Վժիռարի Հաջին» ինձ հետ դան, բայց չհամաձայնեցան ըսելով թէ իրենք կրնան անդուսյն վրայ պահուիլ:

Յունիսի վերջն էր. դեռ բոլորովին չտպաքրեամ ծանր հիւանդութենէն, խուժբին հետ սաքովինկայ ճամբայ: Զորս ժամ անընդհատ քալեցինք ու լուսածաղէն քիչ մը առաջ բարձրացանք Բերդակ գիւղին լեռը:

Ի.

## ԲԵՐԴԱԿԱ ՍԱՐԸ ԵՒ ՍԱՍՈՒՆԸ

Արշալոյսը բացուած էր, երբ հեւ ի հեւ հազիւ մեզ ձգեցինք Բերդակա սարը ու անդաւորուեցանք հեղեղատի մը մէջ: Հոն զգացի որ դեռ հիւանդ եմ — բոլորովին ուժէ ինկած էի:

Մշոյ սքանչելի դաշաք մանիշակ մշուշով պարուրուած՝ կը ընտնար կայծեռ: Մեղրագեղաց և աւելի հեռուն Սփրաւը՝ պսպղուն երկու երիզներու նման, մանիշակէ ֆոնի վրայ, ձգուած էին դաշտի մէջ ծայրէն միւսը: Դուրանի գիւղերը կ'ապրէին դեռ... իրենց վերջին սև օրերը:

Կէսօր էր, երբ ընթան սաօրօտէն դէպի մեզ սկսան բարձրանալ քանի մը հօգի: Շալակաւորներ էին որ ճաշ էին բերած: Բերդակցի Օսկիաննն էր անոնց աստղնորդը: Իր կան ուխտեաններէն էր հնաւուրց այդ մարդիկը դեռ Արապոյի, Սերսբ—Աղբիւրի օրերէն: Կարճահասակ քիչ մը կաղիկ, նիհար, սուր պսպղուն աչքերով 40ի մօտ սարդ մըն էր, որ անցած էր շատ կրակներէ ու գնդակներէ և այժմ ամէն ինչի վրայ փիլիսոփայօրէն կը նայէր: Բինչ որ գրած է զմեր ճակատին, զէն կ'եղնի» — այս էր անոր դաւանանքը ամենածանր վայրկեաններուն:

Կարծես մեր խուժբը աստ հօգիէ էր բազկացած: Մատթէոսն էր անոր ղեկավարը: Մեր յեղափոխական տառամութիւնը, բազմաթիւ այլ հազուադիւրս դէմքերու հետ, շատ քիչ բան արձանագրած է անոր ստսին:

Յաղթանդամ մարդ մըն էր, բայց սանուկ սը: Թուսական զինուորութիւն էր ըրած, իսկ յետագային Բրիտանափորի տշակերտը դարձաւ և կառարեց անարկուծ մը «Փոթօրիկ»ի հրամանով: Ասկից ետքը քաղաքուեցաւ Սիպիր, ուրիչ փախաւ և եկաւ վասպուրական՝ ծառայելու յեղափոխութեան: «Օսմանեան Սահմանադրութեան» չհուսաց. Զուարեանին հեռակեցաւ դէպի Տարօն և հոն մնաց, իբր համեստ զինուոր ու գործիչ. վերին աստիճանի բարեկիրթ, մեղս ու գիւրարեկ իր զգացումներուն մէջ՝ սոյեաւազօրէն նուիրուած էր Դաշնակցութեան: Դոժան էր

ու անգիջող մեր աւանդութիւններու և սկզբունքն օրու պաշտպանութեան մէջ, միամտի ու բիւրեղ՝ իր նկարագրով:

Փախուստի լուրը անմիջապէս տարածուեցաւ դաշտի և լեռներու մէջ ու թողեց բարոյալքիչ աղքեցութիւն մեր ժողովուրդին վրայ: «Կացութիւնը յուսահատական է ուշեմն, որ պահուեցաւ», — կը հետևեցնէր ժողովուրդը իրաւացիօրէն, օրովհետև այլևս ոչ ոք կը մնար, գէթ երևոյթները փրկեցու համար: Բացառապէս թշնամական վերաբերմունք ստեղծուեցաւ մանկատաններու և կտուրուրութեան միջև: Այս հոգեբանութիւնը վարակեց մասնաւոր լեզուաբանական մարտիկները, որոնցմէ շատերը զէնքերնին առած լեռը եկան: Մաս մը անոնցմէ յաջողեցանք վերադարձնել, իսկ շատերը մնացին և յետագային Սասուն կանչուեցան:

Մուշէն հեռանալէս յետոյ, Կօտայի Հաջին, Տիգրանը և ուրիշ ընկերներ, հաղիւ ժամանակ ունեցեր էին քաղաքի զինական ուժերը քիչ շատ կարգի բերելու: Դաշտի գիւղերը ձգուած էին իրենց ճակատագրին: Կապուրուելէս վերջը միայն զգացի թէ ինչ տհաւոր ստալ գործած էի՝ ձգելով քաղաքը այդ ծանր օրերուն և քաջուելու լեռներու ծերպերը: Ի հարկէ միտքէս չէր Ենցած երբեք կեանքս փշկել (ինչ որ երբեմն կը գրուի): Տեղական ընկերներուս մասնօրուրնն եղած էր թոյլ չտալ որ ձերբակալեն զիս և յուսալքեն ժողովուրդը, միջգեռ լեռ բարձրանալովս բողբոջի ցոյց մը ըրած «Կ'ըլլաի կառավարութեան դէս և նախագգուշացում մը՝ մեր ժողովուրդին համար: Այս մասնօրութեամբ կը պնդէին որ հեռանամ: Պլլուած հնամաջ անձրևանոցիս մէջ (միակ իրը որ դուրս բերի Մուշէն և օրը սակայն աւերաներու ընթացքին փրկեց զիս ցուրտէս ու անձ-

րևներէն, քարերու ու հողերու մէջ) հոգեպէս կը առնայի, խղճիս առջ ցաւա իօրէն յանցաւոր:

Հաղիւ 10-15 օր էր անցեր փախուստէս, երբ Օսկիան օր մը նամակ սը յանձնեց ինձի, զոր հայ կրն մը բերած էր Մուշէն: Մուշի քիւրա մէպուս Հաջի Իլիասն էր, մտաւորապէս հետևեալ բովանդակութեամբ.

«Այս ծանր օրերուն, երբ հայրենիքը վտանգի մէջ է, պէտք է օր ինձի ու քեզի պէս նուիրուած սարդիկ, ձեռք ձեռքի տուած, աշխատին. ամօթ է փխչիլ ու լեռ երես աւազակի մը պէս. գիտեմ, գէշ մարդիկ միտք պղտորած են. վերագարծիր անմիջապէս. մի կասկածիր երբեք, զլիսովս կ'երաշխատուրեմ. միւթէսարքիք իր յարգանքը միշտ կը պահէ քեզի հանդէպ...»

Հօջի Իլիասին, նոյն ձամբով պատասխանեցի. գրեցի իրեն թէ՛ միւթէսարքի և իրեն պատրաստած դաւադրութիւններու մասին տեղեկութիւններ ունինք և թէ Օսմանեան Պարլամենտը արժանի է իլիասի նման սէպուսներ ունենալու: Աւելցուցի նաև թէ՛ օր մը, եթէ արդարութիւն կայ այս աշխարհին մէջ, պիտի հանդիպինք միմիանց... Արդարութիւն ո՞ր կայ սակայն.

Առկէ քանի մը օր յետոյ դարձեալ առմա մը ստացայ: Այս անգամ փոստի միւրաբէն էր, որ «խիստ կարևոր խնդրոյ մը առթիւ», կ'օղբէր հանդիպիլ ինձի: Ինքը պիտի գար Մոկուսքի այգիներէն մէկը ու հոն պիտի անոնուէինք: Ընկերներս սակայն կարուկ հակառակեցան Բաւատացած, որ նամակը կեղծ էր և պատրաստուած զիս թակալող ձգելու համար:

Այդ վայրկեանին յօռեառն էինք դարձեր որևէ

թիւրքի նկատմամբ, խնւագորութիւն կը համարուէր հաւատ ընծայել նսան գրութեանց. ու չգացի: Զոր- գերէն վերջը Դմիտրի կը մեղադրէի ինքզինքս՝ որ գացած չէի. թերևս իրապէս մ/ւաիւրէն էր գիրը, և ո՛վ գիտէ, գուցէ շարդերէն էր որ կը զգուշացնէր: Ափսոս որ յետին թուով էին այս մտածումներս: Նսան վարկեաններուն ըրտկը և վճռական քայլերը օգտակար են եղած, ես, դժբախտաբար բաւականա- չափ չեմ օւնեցած այդ յատկութիւնէն: Եղած եմ քիչ մը տատանող եւ ճեթէճներով ինքզինքս անգոտա- լուծող:

Աւիսը անցած էր, մինչ մենք այդպէս անի- ստատ ու աննըպատակ կը թափուէինք լեռներու գագաթները: Գոնէ՛ կրնայինք երբեմն դաշտ իջնալ և օգտակար ըլլալ ժողովուրդին, յուսահատ այդ օրե- րուն՝ ուժ ներշնչելով և քիչ թէ շատ կազմակերպե- լով. հոն բանի մը կը սպասէինք կարծես. ինչի՞, ես ալ չեմ գիտեր. կը յիշեմ Վիայն, որ թէև ընդհանուր կազմակերպուած շտրղը մեր միտքէն չէր անցներ, բայց զօրեղ ինքնապաշտպանութեան կազմակերպումը կենսական կը համարէինք: Կը սպասէինք քրտական լայն ասպատակութիւններու, անիշխանութեան տկա- նաւոր անձերու և սարաիկներու դէմ դաւերու — այս բոլորին կը հաւատայինք:

Ամիսէ մը յետոյ միայն Սասունէն լուռ ա- օինք, Կորիւնն էր, որ օր մը պզակի խուճրով մը եկաւ մեր քով:

Սասնոյ ղեկավարները կարեօր էին համարած խորհրդակցութիւն մը օւնենալ ինծի հետ և վեր- ջապէս կ'ուզէին որ ես ալ հոն բարձրանամ եւ մնամ իրենց քով:

Մտթէճոսին յանձնելով զինուած ուժերը, հե- տեկեցայ Կորիւնին: Մահուան չափ ավաւր էր այդ

լուսկեաց ու խորհրդը. Լօր հայդուկը. խօսելիք չէր մնացած այլևս. յօռեանս էր միշտ ու իմ քաջաշերտ- կան բանազբօսիկ լաւատեսութեանս կը պատասխա- նէր բերանի մէկ կողմի թախծօտ ժպիտով մը. իբ միտկ յոյսը ռուսական բանակը և մեր համաւորական գունդերն էին:

Կուրաիկի արևելեան թևերէն կը բարձրանա- յինք գիշերուան լուսթեան մէջ. զազաթը հասանք երբ արշալոյսը կը բացուէր. հոն Սասունցի պահակ- ներ կը հսկէին: Կարևոր դիրք մըն էր, որ կ'իշխէր Մուշ քաղաքին վրայ. արշալոյսի վարդազօյն լոյսին մէջ, աւաջին անգամ անտայ Անաօքի և Մովսօսարի գագաթները, Կէլիէ — Գուզանը և Տալուրիկը պատնէ- շոյ լեռնաշղթաները, իսկ աւելի մօտ՝ նեղ, երկաթ հովիտ մը, որուն գոգին մէջ փարած էին Շէնըկ և Սէմալ գիւղերը:

Մեր ընկերները Սէմալ էին եկած ու մենք ալ հոն կ'արթայինք. Արազ կ'իջնէինք լեռնէն: Սէմալի և Շէնըկի գիւղացիները իրենց կանանց հետ կ'իջի արաբերը կը մաքրէին, անդ անդ կը ջրէին, կարծես ոչինչ պատահած էր աշխարհիս վրայ... Կը դիտէի զանոնք յուզումով ու դառնութեամբ և կը խորհէի որ ժողովուրդի բնագոյր չի խաբեր իրեն — թերևս վառելիք անցնի առանց ցնցուծի:

— Կ'իջ կը ջրե՞ս, Գա՛լօ, բարի լուս, ձայնեց Կորիւնը, կտրծես արատայտելով մեր ցաւատանջ մտածումները:

Յաղթանդամ ջրվարը, որին օղլուած էին այս խօսքերը, զանդադրէն զլուխը բարձրացուց, արագ հայեացք մը նետեց մեր կողմ ու շարունակեց թու՛մ բերը ուղղել:

— Զրէ՛, ջրէ՛, որ Մուսաբէգը գայ, ըզբզի Երհնայ ու ուտէ. քաղցր հեզնանքով մը աւելցուց

Կորիւնը:

— Այ, Աստու բարին վեր քրդի էղնի, պա-  
րոն կորիւն, Մուսարէգը չուր սըգի գայ, զըմէն կը  
լմնցունք ու զէնոր լէ մըրք... կը թորգենք, պա-  
տասխանեց Գալուն բամբ ձայնով մը ու խնդաց:

Պզօրիկ գրեղ մըն էր Ումալը, Շէնըկէն քիչ  
մը հեռու: Յերափոխական փալլուն տնցեալ ունէր և  
անոր ամէն քարն ու թուփը՝ իր դըրցազներգութիւ-  
նը: Խորհրդաւոր ու նուիրական էին այդ բուրբը:

Գիւղին եղրին, խոշոր ծառի մը տակ, հաւաք-  
ուած էին Կէլիէկուզանցի Կիրալուրը, Ժողովորդի հե-  
րոսներէն, բարձրահասակ, ջղուտ, նիհար ու շիկա-  
հեր մարդ մը, 45ի մօտ որ գլխին դրած էր բարձր  
քօլը մը ապօքոյով փաթթած, հազած փոշոտ քեա-  
զահին: Սէմալա «Քաթիպ» Մանուկը՝ նոյն հասակով  
բայց աւելի կիրթ ու նահուն դիմազծերով: Մճօն և  
Ռուբէնը:

Այդ միջոցին արդէն իսկ այգառնալան շար-  
ժումներ կը նկատուին Սասնոյ դէմ: Գինջի, Հազոյի,  
Մօտկանի, Իշխընձորի և այլ կողմերու աշիբէթները  
չարժաման սէջ էին դրուած: Սասնոյ ժողովուրդը և  
յեղափոխական ղեկավարութիւնը կը զգուշային ան-  
չուշտ իմաստը այս շարժումներուն և իրենց կողմէ,  
որքան հնարաւոր էր, պաշտօնի ու ազգամեծի կեդ-  
րոնացման պատրաստութիւններ կը տեսնէին:

Մերինները ըսին, թէ կուրի կեդրոն պիտի դառ-  
նայ Տաւրօրիկը ու Կէլիէկուզանը, իսկ իբր վերջին  
դիմադրութեան կեդրոն՝ Անաօք լեռը, որ ամէն  
յարմարութիւններ ունի վերջին դիմադրութիւններու  
համար: Իսկ մինչ այդ, բոլորին յոյսն էր բուռնացն  
բանակը, որ առնելի կործնելով, չի կրնար ու-  
շանալ: Կարիքը ունէին փորձառու մարտիկ—ղեկա-  
վարներու և մթերքի: Բայց որովհետև հ ա մ ո ղ -

ն ւ ա ծ է ի ն թէ՛ կառավարութիւնը նախ Սա-  
սունը պիտի դարնէ, ապա քաղաքն ու դաշտը, այդ  
պատճառով ալ որոշած էր, որ ամէն ինչ Սասունի  
համար դործածուի: Դաշտէն կարևոր ուժեր պէտք էր  
կանչուէին անսիջապէս, և հնարաւոր եղածին չափ,  
ազգամեծն պարեն կեդրոնացուէր:

Այսքան տարիներ անցնելէ վերջ, անչուշտ,  
դժուար է ճշգրիտ պատկերը ալ մեր խորհրդակցու-  
թիւններուն, բայց աւելորդ չեմ համարեր գոնէ սօ-  
տաւորապէս վերլիչել, յատկապէս տեղակայն զժ'ս-  
վարներու տեսակետները:

Կիրակոսը կը պնդէր, թէ յարձակման նախա-  
ձեռնութիւնը պէտք է որ մենք ստանձնէինք և կ'ա-  
ռաջարկէր յարձակել քաղաքին վրայ:

«Մալ զարկե՛նք, ազգամթերք և պաշար  
ձեռք կը բերենք, կ'ամրանանք և լուռ կուտանք  
ուսու բանակին» — կ'ըսէր ան:

Քեթիպ Մանուկը դէմ էր անոր: Ան կ'ըսէր  
թէ՛ մեր ուժերը ի վիճակի չեն նման դործ մը կա-  
տարելու: Սասունէն ուժերս այլ տեղ ամսիլ, կը  
նշանակէր սկիզբէն իսկ խորտակել մեր միջնա-  
բերդը:

Մճօն ևս յաճախողականի կողմնակից էր, սալայն  
Սասունի չուրջը մաքրելու և լեռները մեր ձեռք պա-  
հելու դիտաւորութեամբ:

Կորիւնն էր սիայն ընկճուած, Լաւառես չէ,  
մեր դործողութիւններու յաջողութեան նկատմամբ:  
Պաշար ու ազգամթերք չունինք — կ'ըսէր ան —  
դաշտը անպատրաստ է ու անկաղսակերպ, քաղաքը  
չի դիմանար առանց դրսի օժանդակութեան: Սասունը  
թերևս քիչ մը կը կուրի, բայց մինչև ե՛րբ որ եւ տնոր  
բովանդակ յոյսը ուսուական բանակը և մեր կա-

մաւորական զօւնդերն էին, եթէ միայն ժամանակին հասնէին:

Այսպէս ծանր մտահոգութիւններով ու առաջնութիւններով անյողթելի դժուարութիւններու հանդէպ, գրեթէ շարաթ մը անցուցինք, երբ Վարդապետի օրը, կէսօրէ առաջ Կուրաիչ լեռան վրայ մեր պահակներէն սուրհանդակ մը եկաւ յայտնելու թէ արշալոյսին թնկանօթի ուժգին օրոտ լսած էին Ս. Կարապետի և Վարդոյի կողմէն: Բոլորի ուրախութիւնը սեծ էր. սուրհանդակն առաջական բանակը մօտեցած է: Հարցերով հեղեղեցի եկողը. քանի՞ հարուած լսած են, շարունակաբար կ'օրոտար, թէ՞ հառ հառ, օրօշ էր օր Ս. Կարապետի կողմէն է ևն. ևն.:

Աւելի սասոյգ հասկնալու համար, կարծեմ Մճօն էր օր մեկնեցաւ Կուրաիչ իր ականջով լսելու այդ աւետարներ օրօտները:

Ան վերադարձաւ ուշ գիշեր և ըսաւ թէ հառ հառ կը լսուէին խուլ օրօտներ, բայց չէր կրնար օրօշ ըսել թէ օր կողմէն է օր կ'ուղայ. երբեմն շատ մօտիկէն է, երբեմն հեռուէն: Մճօն բերած էր նաև ուրիշ լուր՝ կառավարական և քրտական ուժերը հիւսիսէն կիսակամարած և պաշարած էին Սասունը, Աղձաղէտուկէն մինչև Կոընկի գետը. Միայն Կուրաիչի գաղաթը և մօտիկ շղթաները սեր ձեռքն կը մնային:

Ռուսական բանակի մերձեցումը եռանդ ու կօրով ներշնչեց ամենուն: Նախայարձակ ըլլալու տեսակէտը կ'ընդհանրաբար և հաւանաբար գործադրութեան ևս դրուէր, եթէ անակնկալ ու չորհուրդ լուր մը չի գար աակն ու վրայ ընելու մեր բոլոր հօշիւները:

Քանի մը օր յետոյ, կիսախելագարն մը երեսօթով, հիսամերկ ու չորեթէ կիսամեռ, սեղ մօտ

հասաւ գուժկանը: Մօտեցաւ. կըքցաւ գետին ու անմարդկային օսնոցով մը գրագ. «Ի՞նչ էք նստեր, Դուրանը զմէն կօտորան, հայութիւն չմնաց...»:

Քարացանք: Հեկեկանքէն ցնցուելով, պատանց մանրամասնութիւնները: Բրտակա՛ լրագրաթիւ չէթաներ, նախապէս կարելով գիւղամիջիտան յարարութիւնները, երեք օրուա՛ մէջ, աւանձին առանձին ջարգած, աւրած, կողոպտած ու վառած են ժողովուրդը, անոր ինչքը ու տունը: Պատանց օր կը պաշարէին գիւղ մը ու խուժելով կը հրամայէին օր, բոլոր աղամարդիչ հաւաքուին, ապա, իրար կօզելով, գիւղէն կը հանէին ու յարմար վայրէ մը մէջ կը գնդակահարէին: Երբեքսօրք կանայք, աղաքն ու աղլիկները առևանդած, իսկ տարիքօտ մասը հաւաքած մարտգի մը մէջ՝ կենդանի այրած են:

Այդ դժօրքէն օվ օր կրցած է իր հօշին ազատել, ապաստանած է Հաւաաուրիչ և Քանա սարերը, աշխեղերէն Սասուն բարձրանալու համար: Բայց աիւշմանը ճամբաները փակեր է ամէն կողմէ, եւ ներկայիս անոնք ամփոփ կը մնան այդ լեռներուն վրայ, սպանելով ճար մը Սասունէն կամ հայ կամաւորական զօւնդերուն...:

Լսած էր նաև, օր քաղաքի հայոց թաղերը թնդանօթի են բռնած ու ժողովուրդը ջարդած են: Իր ըսելով լեռներն են չփախած աւելի քան քսան հազար հոգի: Կուրաիչէն լսուած օրօտը այս է եղած ուրեմն...:

Ահա թէ ինչպէս զօն գացինք մենք մեր ռազմական նախախնուութեան, կարծելով թէ կօռովութիւնը, առանց քաղքին և դաշտին ձեռք դպցնելու, նախ Սասունը պիտի զտրնէ. թշնամին թողուց օր դաշտի գինուած ուժերը դուրս հանենք ու կեդրոնանանք Սասնոյ կղզիացած պղտիկ տարածութեան

վրայ, որուն երեք կողմերը քիւրա բնակչութիւնն էր և միայն դաշտի կողմը բաց էր սեղ համար. թըշնամին օգտուելով ուրեմն այս պայմաններէն բնօրէն զննչեց ժողովուրդը :

Այս զօրհուրելի սխալը գործեցինք սենք՝ դեկտեմբար իւր պատասխանատու ընկերներս, ա նշուշա առանց ուէ անձնական նկատուածի, բայց ենթարկը ուելով քարացած աւանդութիւններուն, յամառ անհեռաւանութեան և խարուելով արիւնք արեւ Սասունի նկատմամբ թիւրքերու կիտարած սաղմական գործելակերպէն . . . :

Գէտք էր գօնէ պաշտպանել ու պահպանել ժահէ ազատուած բեկօրները, Սահայն ինչպէ՞ս, Սասունը հաղիւ կրնար ամիս սը կերակրել բնիկ ժողովուրդը, Ասկէ դատ, եթէ կօիւր սկսէր, գուրսէն եկած ժողովուրդի բաղմութիւնը պիտի կաշկանդէր կասուղները և պիտի խանգարէր յարձակումներէ պաշտպանուելու : Յրուել ժողովուրդը լեռներու մէջ և թօղո՛ւլ իր ճակատադրին : Բայց այդ կը նշանակէր, մասնել զայն բացարայտ օչնչացման, եթէ սիայն աուսական բանակի մեր կամաւորական շոււմբերէն շուտով չհասնէին մեզի : Կենսական էր մեզ համար, որ և է գնով, լուր հասցնել և օչնութիւն ուղել, իսկ սինչ այդ պէտք էր պաշտպանել գօնէ, նեղ շրջագծի մը մէջ ամփոփուած մնացորդները :

Հոգնկան աստապանքս առանց ասոր ալ զարհուրելի էր, որ հեռացած էի Մուշէն : Ասոր վրայ կ'աւելնայր այժմ մէկ կողմէ ջարդը, իսկ միւս կողմէ անարեկ բեկօրներու այս հսկայ խուճի յուսահատական վիճակը . . .

Նոյն օրը, երբ ես և Ռուբէնը ծափն տակ մեր վիշտն ու արտաբութիւնը կ'ապրէինք, նախցայ իրեն ու վճռական ճայնով ըսի, թէ վար՝ ժողովուրդին

քով պիտի երթամ. ի՞նչ ըսելու, եւ ալ չեմ գէտեր, բայց անկարելի էր այլևս մնալ այսպէս հաս :

Ռուբէնը, արցունքոտ աչքերով երկար նայեցաւ ինձի ու շնչաց :

— Երևի մեռնիլ կ'ազն'ս, կ'երթաս մեռնելու . . .

— Զը գիտեմ, ըսի, բայց պէտք է որ երթամ :

Երբ սև գիշերը կ'իջնար Շէնիկ—Սէմալի հովիտին մէջ, ըսնի սը գիտուարներու հետ, դանդաղ ու մտահօգ, բանեցինք անվերադարձ այդ ճասքան :

Ը.

### ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄՆԱՑՈՐԴՆԵՐՈՒՆ ԿՏԵ ԼԵՌՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Արշալոյսը նոր բացուած՝ կանգնած էինք Հաւատարիկի լեռներուն ամենաբարձր կէտին վրայ :

Այգտեղէն, երբ մեր առջև տեսանք մշուշապատ Դուրանը, որ կարծես պատանգուած մեռել ըլլար՝ ը ս բ ո ն ե թ ի ն զ անաւոր աղէտին մեծութիւնը . . .

Անէացած էր մեր ժողովուրդը. դաշտի այս ու այն կողմը, գիւղերուն մէջ կամ եզրերուն, դիտակով կը տեսնէի բարձրացող խիտ քուլաները սև—ղեղին ժուխի : Հայու թռնիբին ծուխը չէր այդ այլևս. կ'այրուէին ըսբոտ գիւղերը կամ տանձին տաները. սալաքներու սէջ կը հրկիզուէր ժողովուրդի օոջ—պիտանի ճասը, որ չէր կրնար յագեցնել ճիւղներու

կիրքերը:

Ահա և մնացորդը մեր արարած ժողովուրդի: Մեր կեցած ընթաց վարի լա՛ ջերուն վրայ, Առաքելոց վանքին դիմաց, կը վխտան անոնք, բոյններնին քանդուած անաբեկ մըջիւններու պէս և այդ բազմու- թեան աղմուկը խուլ և անորոշ, կը հասնի մեր ա- կանջներուն. վանքի սը ուխտի գացած բազմութեան եռուղեոն ալ կը նմանի հեռուէն: Սխալ չէր գուժ- կա՛նի ըսածը, քսան հազարէ ոչ պակաս պէտք է որ ըլլային:

Մղձաւանջային երազ սըն էր կարծես. ուղեղս կ'այրուէր, պայթելու չափ սեղմելով գանկս. միտսս կը գործէր անհելի արագութեամբ, բայց կթկը- ատը . . .

Ի՞նչ պէտք է ընել այժմ, ի՞նչպէս փրկել գոնէ ասոնք, ի՞նչպէս լուր հասցնել ռուս բանակին. ի՞նչ- պէս պաշտպանել. ինչպէ՛ս, ինչպէ՛ս:

Հրանձիւր մը պէս աչքերուս ասջև կը դառնա- յին մարմին առած պատկերները անաւոր ջարդին, քաղաքի, գիւղերու ժողովրդին, ընկերներուն, ան- մեղ մանուկներուն ու աչքերուս ասջև ցցուած այս օտարափելի ուրուականներու ամբոխին: Եւ գրեթէ վազելով, հեւ ի հեւ կ'իջնէինք լեռնէն, խելագար- ներու նման զարնուելով խայտերուն, ինտլով, մագլցելով:

Անոնց սէջ ենք ահա, Մօսէն ոչ մէկ արաակարգ յուզում, կարծես իրաւ ուխտի օր է: Կանանց եռու- ղեռ, օւտելիքի պատրաստութիւն՝ խմոր կը հունցեն, հարիւրաւոր օջախներ չորս կողմ, երեստներ կը խա- ղան ամէն կողմ, աղամարդիկ, խուժբ խուժբ հաւաք- ուած այս ու այն կողմ, կը խօսէին. իսկ ոչխարի ու կովերու հօտերը բազմութենէն դուրս արօտին մէջ էին:

Անտանելի գորշահոտութիւն բանք էր ամէն կողմ. մարդիկ իրենց բնական կարիքը գրեթէ իրենց անդերուն վրայ կը կատարէին: Կենդանիներու ա- րիւնը, աղանգութիւններով լեցուն փորձաքնները, կայտերով տեղին վրայ կը մնային ամառուան այդ ամիսներուն. . .

Ազատուածներու մէջ էին բողոքականներու պատուելի Գրիգորը, միջահասակ, խիստ հաճելի ար- տաքինով, մեղմ ու կիրթ շարժուածներով մէկը: Հոն էր նաև կաթոլիկ ծերունի քահանայ սը, կարծեմ նորչէն գիւղէն. կային նաև աչքի զարնող քանի սը երևելիներ, որոնք քիչ շատ աղքեցութիւն կրնային օւնենալ ժողովուրդին վրայ: Անոնց հետ խորհրդակ- ցաբար էրոչեցինք ժողովուրդը փոխադրել նոր եւ պաշտպանման անսակէտէն վայր սը, օշպէս զի վա- րակիչ հիւանդութիւններէ գոնէ զերծ պահենք:

Քիչ մը աւելի վար, Հաւատաւորիկ գիւղի կըռ- նակը, և Առաքելոց վանքի հաւատար բարձրութեան վրայ լեռնադաշտ սը ընտրեցինք ու մաս առ մաս հոն փոխադրեցինք ժողովուրդը:

Տափարակէն Սասուն ամառը ուղղութեան վրայ շրջապատին անորոշ բլուր մը ընտրեցինք իբր պաշտ- պանութեան յենարան, և Մօսթէօսի շտնքերով ու հրահանգով խրամներ ու դիրքեր պատրաստուեցան, ուր պահակներ դրինք: Պահակներ դրուեցան նաև Հաւատաւորիկի երկու կողմերէն դէպի ձորերը ամառը ճամբաներուն հսկող բարձրութիւններուն վրայ:

Առաջին օրերը, ժողովուրդը և զինուած աղա- ժարդիկ զիւրութեամբ կ'ենթարկուէին մեր կարգադ- րուելիւններուն: Ոմանք քարերէ կամ ճիւղերէ հիւ- ղակներ պատրաստեցին ու հոն պատսպարակեցան, իսկ բազմութիւնը, ընդհանրապէս, բացօդայ էր:

Հետագայի գէժը էր Գրիգոր պատուելին: Ա-

առջին անգամ կը հանդիպէի իրեն: Սովորական օրերուն երևի նա իր ժողովարանի կեանքովը միայն կ'ապրէր, բայց կրած ահաւոր օրերէն վերջ՝ կերպարանափոխուած Յէր: Կը փրկութեան շարժումները կը պարտաւորէր իմաստութեամբ կը վերլուծէր յեղափոխական շարժումներու թերութիւնները. չէր ժխտեր, որ ջարդը անխուսափելի էր, քանի որ թիւրքերու հետ կէս դարէ աւելի թշնամի ենք եղած. դառնութեամբ կը քննադատէր ժողովուրդը, որ վտանգը չնախատեսեց և չպատրաստուեցաւ դիմադրուելու:

Ռուսներու շուտափոյթ հասնելու մասին թերահաւատ էր. կ'առաջարկէր ամբողջ այդ դանդաղածը շարժել դէպի Պուլանըխ կամ Ախլաթ, ուր կը գտնուէի երևի բանակը, բայց նիւթապէս անհարելի կը համարէր այդ և իր սելամազձառ ու խելացի հայեացքը դէպի աւերակ Դուրանը ուղղելով, կ'ըսէր:

— Պիտի ջարդուինք, գրեհս, բայց դոնէ Տէրը մեզի սիջոց և աւժ տայ մեր արիւնին վրէժը լուծելու: Տասնոց տարձանակ մը ունէր, իսկ իր փեսան թերի հրացան մը:

Երկու կենսական ստահագութիւններ ունէինք այդ օրերուն՝ ռուսական բանակին — աւելի շուտ մեր կամուօրական զուռներուն — լուր հասցնել, որ գիշերով մը ձիաւորները իջնան դաշտ (ուր այդ պահին ռուսական բանակին առջևէն փախած քրտառ ու չէրքէզ մահաճիրներ էին թափուած) ու մենք, անոնց պաշտպանութեան տակ, անցնէինք սահմանը: Օթէ անոնք Պուլանըխ և արեւելք կողմէն Ախլաթ են հասած, զժուար չէ նման գործողութիւն մը: Երկրորդ մեր ստահագութիւնը՝ ժողովրդի սնունդն էր և ինքնապաշտպանութիւնը:

Ջարդերէն վերջ, աղաւառած այդ բեկորներուն մէջ, տարօրինակ ծայրայեղութեամբ զարգացած էր ամէն քնով միայն սեփական կեանքը պահպանելու բնազդը:

Ամիս մը անցած էր ջարդէն և այդ ամբողջ ժամանակամիջոցին «կարգադրիչ մարմինը» ամէն միջոց գործ դրաւ սննդամթերքը հաշուառութեան ենթարկելու համայնացնել ու այդ ձևով բաշխումը կանոնաւորել, բայց կարելի չեղաւ: Կային ընտանիքներ, որոնք դեռ ունէին տաւար, ոչխար, իւղ և այլ մթերք, մեր փորձերը բացարձակ ձախողեցան մթերքը բաժնելու: Նախ ահագին աղմուկ ու կռիւ ծագեցաւ, ապա, հետևեալ քիչեր, բոլոր ունեւորները թողին հաւաքատեղին ու անհետացան, երևի ուրիշ վայր ընտրեցին կամ Քան լեռը գացին:

Գալով մեր զինական ուժերուն, առաջին օրէն իսկ ձեռնարկեցինք ցուցադրման, որպէս զի պարզ ըլլայ մեզի հասար՝ թէ ինչ ձևով և միջոցներով մեր դոյութեան ժամանակամիջոցը կրնանք երկտրել ու հաւաքարար պաշտպանուել:

Քանի մը երիտասարդներ ձեռնորկեցին անոր: 170 հատ քիչ շատ զէնք ունէինք՝ պաշտպանելու համար մօտ 20.000 խողովուրդ սր հաւատուած էր այժմ 5-6 քիլոմէթր շրջագծով տարածութեան վրայ:

Իսկ առզմամթերքը, չհաշուելով ժանդոտած ու ձեղքուած փամփուշաներու քանակը (որ բաւական մեծ էր՝ խոնաւ տեղեր պահուած ըլլալով), իւրաքանչիւր հրացանին, միջին թիւով հողիւ 30-35 փամփուշտ կը հասնէր: Ի՛նչ գրեհէնք նաև որ կային սակ օրուան, համար թաղեցնողներ ալ:

Այս ողբերգական արդիւնքէն յետոյ, ջանաւ

ցինք այդ զինուած ուժերը, քոնէ ժամանակ առ ժամաժամ ու փոխն ի փոխ, դիրքերու և գիշերային պահպանութեան յապկացնել. անոնցմէ միայն լիսուն հողի կրցանք եմթարկել մեզի. միւսները զանազան պատրուակներով, տեղերնէն չուզեցին շարժիլ: Այդ յիսուն հողին սակայն, օրակով բարձր և բազմաթիւ արեւի լաւ զինուած էին: Այս էր տհա պատկերը:

Կենդանական այս զարհուրելի անձնապահպանութեան զգացումը երթալով ա՛լ արեւի թափ ստացաւ և վարակեց, զրեթէ անխափր, բոլորին: Տարօրինակ էր նաև, որ յուսահատական այս սոսկալի վիճակին հանդէպ բացարձակապէս անզգար ու անհոգ էր դարձած այդ ամբոխը: Սխալած չեա ջլլար նոյն իսկ եթէ ըսեմ օր ուրախ ալ էին այս սարգիկը, ըստ ելևոթին այն պատճառով, որ հրաշքով մը մահէն ազատուած կը կարծէին ինքզինքներն:

Այսօր երևի դժուար ըմբռնելի է այս հողեկառ զիճակը, բայց այն օրերուն այդպէս էր:

Ասենացնչին բաներու համար — ուտելիքի, երեխաներու կամ թեթև վերաւորական խօսքի մը համար ահագին ու լուրջ ազմուկ կը բարձրանար, յաճախ նոյն իսկ իրար շնծելու աստիճան: Իրենց վիճակին անդիտակ խելագարուածներու բաղմութիւն մըն էր:

Պէտք էր ամէն դէմով կե՛ դանի մեալ ու ազատիլ, մասնաւանդ կենդանի պիտի մնայ տղամարդը, կրնն ու աղլիկը այնքան արժէք չունէին. "տան օջախը, պէտք չէ սր մարի — տհա այս մտահոգութեամբ հեռանալէ վարակուեցան մեր քով մնացած կամ պաշտպանութեան յապկացուած փորձասու մարտիկներն իսկ, ինչ որ պատճառ դարձաւ հետագայ մեր թշուառութիւններուն:

Կառավարական ուժերը և քրդական աշխրէթները հեռանալէ կը սեղմէին իրենց պաշարման օդակը Սասունի շուրջ: Գրեթէ ամբողջ մը ի վեր մեր յարաբերութիւնը ընդհատուած էր հօն եղողներուն հետ: Ժամերով դիտակովս կը զննէի մեր ետեւի լեռները և զաշարն մէջ կտտարուող շարժումները: Օր մը նշմարեցի մեզմէ շատ վերը բարձրացող գագաթի ձովէն շարունակաբար յառաջացող լճարդկանց շարքը, որոնցմէ ստուար խումբ մը տեղուորուեցաւ հօն: Այդ օրերէն մէկն էր, որ լեցնինք հաճազարկերու աղմուկը, երևի Կուրաթիկի դիրքերուն շուրջն էր կռիւը: Մեզ խիստ մտահոգեց մանաւանդ մեր դիրքերուն բարձր գագաթին տիրապետող խումբերուն երևումը. երկու նպատակ կրնային ունենալ — կարել մեր յարաբերութեան գծերը Սասունի հետ (երևի կը կհոյժէին թէ օգնութեան կրնայինք երթալ), կամ յարձակիլ Հաւատարիկի լեռներուն մէջ եղող հայերուն վրայ: Այս հաւաքական վտանգին հանդէպ, զօրեղ խումբ մը կազմուեցաւ արէնէն փորձառու և անվեհեր մեր մարտիկներէն, որոնց յանձնարարուած էր գիշերով անցնիլ Սասունի այդ ճամբան բռնող թշնամիին թիկունքը և, յանկարծակիի բերելով, ջարդել ու հաստատուիլ հօն:

Յաջողութեան պարագային մեր թիկունքն առնուած կ'ըլլար և Սասունի ճամբան ալ բաց մտրաղքը:

Արշալոյսը դեռ բացուած չէր, երբ վերէն մոսխիներու համազարկերուն ձայները լեցնինք, որոնց խառնուեցան քիչ յետոյ թիւրքական սաւզէրներուն աղմուկը:

Այսպէս տակեց սօտ ժամ մը: Կը դիտէի վերի շարժումները. հազիւ այս ու այն կողմ շարժող մարդկանց ստուէրները կ'երևալին. հրացաններու ձայները

հետզհետե նուազեցան ու լսեցին: Բաւական յետոյ նշտարեցի մերիններու արագ իջնել լեռներէն, չէինք յաջողած քել թշնամին ու զոհ աուած էինք Նորչէնցի հայ կաթօլիկ մեր շատ հին հայդուկներէն մէկը՝ Սահակը:

Մեր երկիւղը կրկնապատկուեցաւ. սեղուի փեթակը քրքրած էինք. անկասկած թշնամին պիտի օգտուի իր յաջողութենէն և յարձակի մեր վրայ: Անմիջապէս լսեալ աւելցուցինք մեզմէ շատ հեռու գտնուող փոքրիկ լեռան մեր պահակներուն վրայ, թէև իրև կողմէ, ակներև էր որ չպիտի կարենալինք տեական դիմադրութիւն ցուցնել թշնամիին, որ բաւական սեծ թիւ մը կը կազմէր, և ինչպէս կը նկատէինք, փամփուռ խիստ սեծ պաշար մը ունէր: Պէտք էր, ամէն գնով ուստական բռնակէն օգնութիւն խնդրել:

Մեծ ժայռի սը քով հաւաքուեցան մեր հին մարտիկները և Գրիչօր պատուելին: Մաթէօսը վճապէս կը պնդէր, որ ինքն յանձն պիտի առնէ սուրհանդակի պաշտօնը: Խնայրեց 3-4 հոգի ընկերակցել իրեն և նոյն օրը իրիկնամուտին հեռացաւ մեզմէ:

Մեծ յոյսեր կապեր էինք անոր առջ՝ լուծեան հետ, եթէ միայն յաջողէր հասնիլ բանակին: Դժգոխտաբար, Պուլանըխէն անդին նկատուելով՝ կուտի կը բռնուին և բոլորը կը նահաառուին: Ի հարկէ անտեղեակ էինք այդ անցքէն: Ամբողջ օրերով մեր դիտակը ուղղուած էր Չարպօհօրի լեռնանցքին և վարդենիօի ուղղութեան. կը ուզասէինք...

Մեր թիկունքի վառնալէն անդամալուծուած էինք: Միև կողմէ սաստկացող քաղցէն և աղի պահասէն, որ գրեթէ չունէինք այլևս, հիւանդութիւններ ծագեցան. մարդիկ կը հաւէին, հազագոյն կ'ախարհէին:

ներ էին դալձած: Սեփական տնձի և մերձուորներու պաշապանութեան բնագրը աւելի ևս գորեղ թափ ըստացաւ. շատերը գողանօրէն կը հեռանային մեր զանգուածէն, իրենց զխուսն ճարը տեսնելու համար: Մնացողները գիշերը խուսը խուսը դաշտ կ'իջնէին անտէր մնացած արտերէն խուրճերով գորի ու ցորեն կը բերէին, քարերով կը ծեծէին և սալերու վրայ կ'նիւնէին:

Դաշտ իջնողներէն, շատ յաճախ, քանի մը հոգի մուկածիրներու գնդակներուն զոհ կ'երթային: Բայց այդ ի՞նչ սրմէք ունէր օր...:

Սասնայ լեռանցքը դեռ բռնուած էր թշնամիէն, որ առ այժմ չէր շարժեր: Սասունէն ալ օչինչ չէր լսուեր: Բայց առաւօտ մը, մեր դիմաց գտնուող Ասաքելոց վանքին ամայի շրջապատին մէջ մարդկանց բաղմութիւն տեսնեց: Ի՞նչ ընելու եկեր էին:

Յովհաննէս վարդապետը, այդ առաքելատիպ մարդը, արդէն մօրթեր են սեմին վրայ. Չարդի առաջին օրերուն, թալլեր վանքը: Արդեօք, թնդանօթ են քնշած ոմբակոծելու մեղ: Յանկարծ տեսնեց, որ բազմութենէն քանի մը տասնեակ հոգի, աստիճան ներով սկսան բարձրանալ վանքի պատերու և գմբէթի վրայ, կը քանդէին, ժամերով աշխատեցան, բայց ապարդիւն, դարերու շաղախը քար էր դարձած:

Կէսօրէն վերջ ուժգին պայթիւններ լսեցինք, և գմբէթը տապալեցաւ — հայութեան հետքը կը մաքրէին:

Մեր թիկունքին գտնուող ցէրքը, որ Մաթէօսը նախապէս քիչ շատ յարմարացուցած էր ուղմական պահանջներուն, ուժեղացուցած էինք. նախազգացում ունէինք, որ յարձակումը կրելու էինք այդ կողմէն և արդարև, Ասաքելոց վանքի քանդու-

մէն քանի մը օր լեռայ, թշնամին համադարկերով կ'իջնար մեր դիրքերուն վրայ:

Կօւրը սկսաւ կէսօրին սօս: Մենք մէկ կողմէն ժողովուրդը ձորը կ'իջեցնէինք Քան լեռը անցնելու համար, միւս կողմէն պահեստի մեր ուժերէն սօս 30 հօդին կը ջանայինք տեղաւորել մեր գլխաւոր դիրքին թիկունքը: Մերինները խրամներէն կը պատասխանէին: Թշնամին վերէն շղթայի սը ձեւով բացուած կրակելով կ'իջնէր, զօհեր տալով: Ա՛յ օր մէկ թեւ արդէն կ'իջնար դէպի Հաւատուրիկի ձորը:

Կառւի տաք մէկ վայրկեանին, երբ անդադրին կը հետևէինք կառւի ընթացքին, յանկարծ տեսանք որ քանի մը ասանակներ լեր գլխաւոր դիրքի թիկունքէն հորիզոնական շարքերով կը 'յտաջանային: Մերիններն են արդեօք և ինչօ՞ւ են ելած դիրքերէն: Սակայն շուտով պարզուեցաւ որ թշնամին յանկարծակի բերելով փոփոխուան մէջէն կրակող մեր մարտիկները անօնց թիկունքն է անցեր:

Պէտք էր պահեստի մեր ուժերը առաջ տանիլ և կրակելով:

Հրամաններ, պողատանք, յանդիմանութիւն արժէք չունեցան. այդ ուժը հազիւ հարիւր քայլ մը յառաջանալով կեցաւ. անկարելի եղաւ աւելի առաջ տանիլ. գրեթէ ապարդիւն այդտեղէն կը կրակէին կիսաւեր իրենց հրացաններով. որոնց գնդակները արդէն չէին հասնիր թշնամիին: Կը բողբոջէին տառաջօրէն թէ ալ փայտերով (հրացաններ) ինչպէ՞ս կարելի է առաջ երթալ...:

Ճարահատ, 8-10 հօգիով քիչ սըն ալ յառաջացանք կրակելով, որպէս զի գոնէ մերինները պաշարման շղթայէն հանէինք:

Բարեբախտաբար վերը կառուողները, օդատուելով թշնամիին վայրկեանական շփոթութիւնէն, կրցան դիրք:

քերէն դուրս նետուել և կրակելով քովեւի ձորով վազել դէպի մեզ:

Մինչ ալդ ժողովուրդը չէր մնացած նախկին անդին վրայ. թշնամին դանդաղօրէն կ'իջնէր դիրքերէն մեր ուղղութեամբ: Մենք ալ կրակելով, մաս առ մաս, կ'իջնէինք ձորը, Քան անցնելու համար:

Այդ վայրկեանին էր, որ ձորի ճիշտ դահաճիմին քով տեսայ երիտասարդ կին մը, որ օտքերը տակը ծալած նստած էր և պաշտառազին ձեռքերը մեզի նրկարած աշկուար ճիչեր կ'արձակէր. անդամալոյծ է ըսին: Խնդրեցի մէկ ջանջներուն, որ շալկեն ու ձոր իջեցնեն: Դառն հեղնանքով պատասխանեցին.— «Ողջերը չենք կրնար փրկել. ասիկա պիտի տանինք...»

Ու երբ բաւական մը իջած էինք ձորէն, սարատփելի ճիչ մը հասաւ մեզի, և սև կօյտ մը ջարդ ու փշուր ինկաւ մեր օտքերուն քովը, կիսն էր...

Թ.

### ՓՐԿՈՒԹԵԱՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐՈՒ ԶԱՐՃՈՒՐԱՆՔԸ

Նոյն օրը, երբ սենք ցաք—ցրիւ կը նահանջէինք դէպի Քան լեռան գագաթը, Սասունի յարձակումը սկսած էր: Թնդանօթներու որոտը շատ որոշ կը հասնէր մեզի որ շարունակուեցաւ երկար ատեն մեր Քան եղած միջոցին: Հարց ծագեցաւ շատերուն մէջ թէ՛ կրնայինք սեւ օգնութիւն հասցնել պաշարուողներուն. բայց ինչօ՞վ կամ ինչ ուժերով, որո՞ւ

ձգել մեր շուրջը վրասացող սարսափահար ժողովուրդը. պարզ էր, որ բացարձակ անզոր էինք բան մը ընելու, սակայն կարիքն ունէինք մեր խիղճերու հանգըստութեան համար, բարձրաձայն արտայայտուիլ, մեր պատրաստակամութիւնը յայտնել իրարու...:

Ի հարկէ, եթէ օւնենայինք դէթ 50 հօգի փորձուած ազատ մարտիկներ, կրնայինք անհանգստացնել պաշարող թշնամին՝ անօր թիկունքը վտանգելով. բաց այդ մարտիկներն օւրկէ՞ կրնայինք առնել:

Երկար ատեն ոչ մէկ լուր օւնէինք Սասունի կռիւներէն և անոնց հետևանքներէն. բաւական ժամանակ անցնելէ յետոյ միայն, որ մը լուր հասաւ ժողի, որ Աւրանայ մեր հին հայդուկ Արամը զօրնըսած է, Քանէն դէպի հարաւ, լեռնաշղթայի մը վրայ ընկող քիւրա գիւղացիներէ: Ծնթադրեցինք, որ մերինները պարտուած են օւրեմն, քանի որ Արամի պէս կարևոր օւժի մը զարնուիլը մեր լեռան սօցից կուտար, որ մեր ժողովուրդը փախուսար դիմած է:

Մուշէն ալ լուր չունէինք, երբ գիշեր մը անառայնացանք ալ երևեցան չարագուշակ բաներները: Խուճը մըն էր յոգնած, պատաստուած ու անհուօրէն վշտարեկ. մեր մօտիկ ընկերներն էին, որոնք Մուշի ժողովուրդին հետ ութ օրէ աւելի չէին կրցած դիտանալ զօրքի և քիւրաերու գրոհին ու ռմբակոծման ու անդի էին առած:

Կը պատահէին կօտայի Հաջիին հերոսական կռիւր իր ասունէն: Թշնամին երկար զբաղցնելէ ետք, երբ կը տեսնայ որ սաղմամթերքը սպառեցաւ, ասունը կրակի կուտայ, կրնը կը քնդակահարէ, ու ինքն ալ ամենի աբիւժի մը պէս մռնչելով, կ'իյնայ իր վերջին գնդակէն: Հը պատմէին հերոսական հաղուազիւա գրուաքներու մասին, կատարուած նաեւ օւրիչներու

կողմէ, որոնցիէ անկարելի էր անկարելի նման բան մը: Այս ասէնը, սակայն, անզօր էին փրկել ժողովուրդը, որը ի վերջոյ ասուներու մէջ ողջ կ'այրուի, իսկ բազմաթիւ կրններ ու աղջիկներ բարենիներու ձանկերուն կը յանձնուին...:

Պատմեցին նաև վարդան վարդապետի, Նազարէթ էֆօի, Համազասպի, երկու Արշակներու, Յարութիւնի և օւրիչ ընտիր մասաւորական և հասարակական դէմքերու մասին, որոնց հաւաքած, իրարու կապած և սուրներու ասկ' Խաս—Գիւղէն առաջնորդած ու հոն գնդակահարած կամ ողջ ողջ այրած են:

Ազատուած ընկերները, բուսն յազմուեցով և խօր կօկիծով, իրենց դառնութիւնը կը թափէին իմ և մասնաւորապէս, Սասունի ընկերուն դէմ: Պէտք չէր որ ես Մուշէն հեռանայի. զինուորական ուժ մը չէի, բարոյական հեղինակութիւն մըն էի, իբր լեղափոխական զօրծիչ. կրնայի համախօսութեամբ պահել իրենց օւժերը և կօտայի Հաջիի հետ յաջողութեամբ կազմակերպել դիմադրութիւնը. պէտք չէր որ լսէի Սասնոյ ընկերներու յամառ պահանջը և հեռանայի Մուշէն...:

Այսպէս կը խօսէին ինծի արիւնի և բօցերու մէջէն հրաչքով աղատուած այդ քաջերը: Ու ես զրուշըս հակած, խղճահար ակտուութեամբ կը զգայի որ այդ դատապարտութիւնը իրաւացի էր:

Սկզբներու մէջէն կը յիշեմ Գաւառեան (Լօլօյի) Տիգրանը, Կօնուրաճի Արմենակը, սարաջ և դերձակ Յարօնները, Տէր—Ջաջարեանը, ուսուցիչ Կօնջոյեան Յովհաննէսը և բանակէն այդ օրերը հայ սպայ մը Միսաքը (ազգանունը մոռցեր եմ):

Անոնք էին որ աւելի մանրամասն և ճշգրիտ պատկերացուցին դաշտի անաւոր շարքը:

Դիմադրութիւն ցոյց տուած են գլխաւորապէս  
ան դիւղերը, ուր եղեր էին հայդուկներ, զորօրինակ՝  
Աւրանը, Գոմսը, Աղաճանը, Յրօնքը, Ղշլաղանջը,  
Գառնին Վարդենիսը և ուրիշ գիւղեր:

Այս տեղերէն էին, որ քանի սը օրէն երևցան  
չըջճուիկներու նման անհատ փրկուածներ, որոնք  
կորա՛ցուցած ամէն ինչ՝ ուրուականներու երեւոյթը  
ունէին:

Իսկ Սասունը ըստ երևոյթին դեռ ընկճուած  
չէր բոլորովին: Օր սը մեզի եկաւ Գուլանըխցի Մար-  
տիրոս Վարժապետը, օգնութիւն կ'ուզէր. հեղձանք  
էր կարծես: Թուփերու մէջ հաւաքուեցանք, ստածե-  
լու այդ մասին. 8—10 հազի կը կարծեմ հազի- յա-  
ջողեցաւ ամառը իր հետ. աւելորդ էր ի հարկէ, ու-  
րովհետև ճամբան անոնցսէ մեծ մասը ջարդուեցաւ,  
Վարժապետն ալ վերադարձաւ մեր քով:

Օրէ օր կեանքը լերան ձեռքերուն մէջ այլևս  
անհարդուրժելի կը դառնար. ժողովուրդը համախուսը  
չէր ապրեր: Գրուած էր սար ու ձոր: Ամէն օր կը  
փոխէինք տեղերնիս: Լեռը ծածկուած էր տեղ—տեղ  
մարդահասակ թուփերով. անոնց և մեծ ժայռերու  
խռօջներու լմէջ կը պաշտպարուէինք, որովհետև  
գրեթէ ամէն օր, առշալոյսը բացուելուն հետ, մեր  
լեռները կը պաշարուէին Մուսա բեգի աշիրէթներով,  
որոնք լայն շրջանակներով շուրջկալ կը կազմակեր-  
պէին և անընդհատ համազօրկեր կը տեղացնէին  
թփուտներու յուղղութեամբ:

Անպատակ չէր այդ, որովհետև գիշերները մեր  
ժողովուրդը անխոհեմաբար խարոյկներ կը վտակէր  
այս ու այն կողմ, արտերէ բերած ցորենը խարկելու  
կամ ուսանք իրենց խնայած իւղով եփելու կամ հատիկ  
չինելու:

Քիւրտերը կը դիտէին կրակի վայրերը և ար-

չալոյսին այդ կէտերը կը պօշարէին: Մենք ալ, երբ  
իրիկունները կ'անցնէինք այդ անտառիկներու ե-  
ծերպերու մէջէն, կը տեսնէինք մեր շուրջը տաս-  
նեակներով հայերու դիակներ, ընկած իրենց օջախ-  
ներու քով, որոնց վրայի ցնցոտիներն իսկ կողոպտեր  
էին քիւրտերը:

Մտեղնի գոյութիւնը մտացած էինք բոլորօ-  
վին, ինչպէս նաև կաթնեղէնի կամ հացի: Այդ ամե-  
նը դեռ հանդուրժելի էին, բայց վերջացած էր նաև  
աղը և այդ էր սարօտփելին: Գարշահոտած էինք ու  
հիւանդ ամենքս. մեր բերաններէ և ակռաները այլևս  
անզօր էին չոր գարի փչրելու և ծածկուլու. այլ սնունդ  
չունէին: Աղբիւրի պէս բան սը կտր փաթրի՛ շիթով  
— բայց օ՛ր սէկուն բաւարարէր. կարև կառուած ամ.  
քօխի, սափորակախ՝ ջուրին շուրջ:

Ամենքը ցրուեցան. 8—10 հոգիով մնացի այ-  
լևս: Ժողովուրդը կը հալուէր ամենօրեայ մասնակի  
ջարդերէ և հիւանդութիւններէ:

Այդ պայմաններու մէջ օ՛վ կը ստածէր ու-  
ժերու չափօքան կամ օւէ նպատակի համար զա-  
նոնք կաղմակերպելու մասին: Ամենքը զանուրիտօրէն  
յուստահատ, անձնական կեանքի պահպանման միջոց-  
ներ կը փնտռէին ամէն զնով:

Օգոստոսի մէջ էր կարծեմ, երբ օր մը Քանի  
լեռը եկան յանկարծ Վարդենիս գիւղի մեր կարեւոր  
ընկերներէն Մարտիրոսը և Յարութիւնը: Ըսին թէ  
եկած են խորհուրդ ընելու Վարդենիսի չափերու  
(եղէգներու) մէջ ապաստանած ժողովուրդի փրկու-  
թեան մասին: Կ'ուզէին իմանալ թէ պէտք է Քան  
զան և սեզի միանան, եթէ ոչ փորձէին անցնիլ Եու-  
սական բանակը, օր իրենց ըսելով, հեռու չպիտի  
ըլլար իրենցից:

Ի հարկէ խորհուրդ չառնինք անցնիլ 50 քիլօ.

մէթր մուհաներնեբու շղթաներու մէջէն Բան հասնեալու յամար, քանի որ մեր վիճալը աւելի ծանր էր. թելադրեցինք իրենց որ նախ փորձեն կապուիլ բուսրանակին հետ, ապա անոնց պաշտպանութեան առկ ժողովուրդը փոխադրեն անոնց կողմը:

Լաթի մը վրայ նամակ մը պատրաստեցի բուսական բանակի յառաջապահ հայ կամաւորական գումարեւուն ուղղուած, աղերսելով որ ժամ առաջ քանի մը հարիւրեակ ձիաւոր ուժեր զրկեն գոնէ մինչև Մեղրաքէտ, նախապէս խորոյկներու սիջոցով նշան առով սեղ: Այդ շարաքային, մեր պաշտպանութեան առկ, լեաներէն կ'իջնցնէինք ցրուած ժողովուրդը և մուհաներնեբու մէջէն, թէև զօհերով կրնայինք հասնիլ մեր կամաւորներուն:

Վարդ նիսի երկու ընկերներն ալ հեռացան, մեր փրկութեան յոյսերու թելը իրենց հետ առնելով:

Օրչա՛ր—երկա՛ր օրեր, արշալոյսէն մինչև վերջալոյս, դիտակա հանդիպակաց լեռնաշղթաներուն ուղղած սեւ նշանի կը սպասէի...

Օր մը միայն արշալոյսին, նշմարեցի, որ նէմրուծի քովէն, Ախլաթէն դէպի դաշտ, կ'իջնէին անընդհատ ահագին փոշիի ամպեր. բուսական զօ՞րքն էր, արդեօք: Հոգեկան անկարագրելի ուրախութեան սպասումի և յուսախաբուութեան շատ վայրկեաններ ապրեցանք: Բայց երբ իջած էինք լեաներէն, այն առան կրցանք հաստատել, որ անոնք բուսական բանակին առջևէն հալածական ջրերտեր էին իրենց սարկերովը ու հոտերովը, որ սարսափահար արագութեամբ կը լեցուէին Մշոյ դաշտը: Այդ ալ կը սխիթարէր և յոյս կը ներշնչէր մեզի. կը խորհէինք թէ բուսական բանակը հեռու չէ Ախլաթէն և մեր կտուրահանգաները կրնան հասնիլ մեր կամաւորներուն:

Այս անուշ յոյսերով ապրեցանք շաբաթ մը օրեր. մեր յոյսը աւելի թափ առու, երբ դիտեցինք Գրգուշ լեռան կրճիւն ծուխի ահագին ջուլաները. գիւղ մըն էր որ կ'այրէր: Շատ լիտոյ երբ կովկաս հասած էինք, հօ՛ն հասկցանք, որ Վարդենիսի ժողովուրդը, մեր հինաւուրց քաջարի Հասրաթի առաջնորդութեամբ, եղէգնակուտերէն ելեր և անվտանգ հասեր է բուսական բանակին:

Անդրանիկն է ընդունելու զիրենք. կարդացեր է մեր նստակը և լսեր մեր վիճակի մասին անոնց բերանացի պատմութիւնը. բայց նոյն օրը բուսական հրամանաւարութենէն նահանջի հրաման ստանալով, շատ պարագաներու մէջ ըմբոսա Անդրանիկը, հարկ համարած է ենթարկուիլ սպայակոյտի հրամանին և անմիջապէս նահանջած է:

Անդրանիկի այդ «կարգապահութեան» վրայ, մինչև այսօր ալ պառնութեամբ կը խորհիմ:

Հարցուցի իրեն որ մը այդ մասին. առդմագրիտական հեղինակաւոր զիրքով մը ինծի դիտողութիւն ըրաւ թէ — ես չեմ հասկնար զինուորական շարժումներէ. ինչպէ՞ս ինքը կրնար սինակ մնալ այդ քան ներսը, թշնամիի երկրին մէջ, երբ ամբողջ բանակը կը նահանջէր...

Մուհաներնեբու ահաբեկ փախուստէն քանի մը օր վերջ, նոյն լեռնաշղթաներէն երեւցան նոր փոշիի ամպեր. դէպի դաշտ կ'իջնէր մեծ խուճը մը ձիաւորներու:

Անոնց զղուշաւոր և հովհարի ձևով փռուած դանդաղ յառաջնադաշուձէն և հագուստի ընդհանուր նրեւոյթէն դատելով, հաւատացած էինք որ բուսական հետախոյզ խումբ մըն էր առիկա:

Եկան հասան մինչև Մկրագոմ, մտան սուր

այդ գիւղը և յօս կէս ժամէն գարձեալ նոյն ձամբով վերադարձան, անհետացան լեռներու մէջ, փշրելով մեր բոլոր յոյսերն ու սպասելիքները:

Խորտակուած հօգուով՝ հաշտուեցանք այլևս անխուսափելի մահուան հետ. Այնուհետև անառբեր ու անպաղ օւրուակներու պէս ցորեկները կ'իյնայինք պուրակներու թուփերուն մէջ, գիշերները դուրս կ'ելլէինք ուտելիք փնտաելու, տեղ փոխելու համ մեր ժողովրդի բնկօրներուն հանդիպելու:

Գիշեր մը, երբ այսպէս ձւրէ մը կը բարձրանայինք, պուրակի մը խորքէն եկեղեցիի մեղեդիին նմանօղ կերկերուն ձայն մը լսեցինք: Յուշիկ մը առաջացանք և հեռուն, խոշոր ժայռի մը ստուերին մէջ երևցաւ խարոյկը, որուն քով մարդոց օւ ըստուերներ կ'երևային:

Մտածեցանք. կիտամերկ. ցնցոտիներու մէջ պըլլուած մարդոց և կանանց խումբ սըն էր, որ կիտաբոլորակ կազմած՝ շրջանակի մէջ էին առած կիտամերկ պատանի մը և դեռատի աղջիկ մը, իսկ անոնց դիմաց, կարծես կրակով ներկուած, երկար մօրուքը հովին՝ ծերունի քա՛նան էր կանգնած գիրք մը կուրծքին, գլուխը սպառնական և պողատաբին դէպի սև երկինք. սղիողորմ սեղեղի մը կ'երգէր — պսակ էր որ կը կատարէր:

Կը նայէի ապշած և սարսափածար. խելագար էին անոնք, թէ՛ մահը արհամարհող կամ անօր գոյութեան մասին գիտակցութիւնը կորսնցուցած մարդիկ. անոնք կ'ուզէին որ չմարի հայր կեանք—օջախը...:

Անցանք հեռուէն աննշմար. բարձրացանք լեռը և անհետացանք:

Արշալոյսը նոր էր բացուած, և տհառ ամէն կողսէ հոսադարկերը վերսկոռն. երկար ակեց: Երբ

վերջալոյսին կ'իջնէինք լեռնէն, նօր ապաստան մը դռներու մտատուքով, կ'անցնէինք նորէն «հարսնիսքի» պուրակէն... Մարտը խարոյկ մը և շարջը բազմաթիւ դիակներ. նորապսակ զօրք իրար քով երկնցած էին, խարոյկին նման անկենդան:

Քրտական հօրդաները մեղ հանդիստ չէին ասր. անոնց վրայ աւելցան նաև ոռւտ բանակի առջեւէն փախչող չէրքէզ և թիւրք հաղաբուար բազմութիւնները, քրտնք իրենց հօտերով, սայլերով և ընտանիքներով կը յեցուէին մեր լեռան ստորաք, երբեմն յանկարծ կը վերնային, յառաջանալով դէպի Մուշ եւ Օղնուտ, երբեմն ալ կը վերադառնային:

Անոնց այդ շարժումներէն մենք նոյնպէս կը կռահէինք կռիւներու ընթացքը:

Այս մուհաճիբները երևի իմանալով որ դեռ օղջ մնացած հայ բնկօրներ կ'ան, թերևս վախճալով, որ օր մը այդ յուսահատ բնկօրները կրնային գոհ թալ իրենց վրայ, փորձեցին իրենք յաշարել մեր լեռը, Հաւատարիկի և Բերդակի կողմի ձորերէ՛: Դեռ ձորը չմտած, ետ մղեցինք անոնց ձիւտները: Կեդրոնէն երկրորդ փորձ մը ըրին դէպի լեռ բարձրանալ. բայց երբ զարկինք անոնց գլխաւորը և քանի մը ձիւտներ, խուճապահար վերադարձան:

Շատ անգամ ծրագրեցինք խուճաբերով դաշտ իջնել, սարսափ ձգելու մուհաճիբներու մէջ և մահուանը քիչ մը սնունդ ձեռք ձգելու (չլխար, ցորեն և այլն), բայց անհնար եղաւ քանի մը հօգի իրար քով բերել և խուճաբ մը կազմել: Երբեմն կ'իջնէինք մեր լեռան վարի լանջերէն, Հաւատարիկի և Առադի գոմերու քովերը՝ լքուած այգիներէ և բանջարանոցներէ պաշար բերելու:

Անգամ մը, երբ քիչ մը դեմնախնձօր եւ ժուռ խաղող գտած կը վերադառնայինք, յանկարծ մեր

առջև դասնք հինգ անասնոթներ, առհակած պատ-  
ասած համազգեաներով: Անդէն էին, վիզէն կախ-  
ուած ռնէին սիայն իրենց պաշարի պարկերը:

Մեղի ապաստան եղող լեանային տարածու-  
թեան մէջ առաջին անգամ էր որ լստաողը իր ու-  
քովս կուգար մեր ձեռքը իյնալու: Անմիջապէս ի  
հարկէ կատեցինք որ ասոնք թրքական բանակէն  
դասալիք զինուորներ էին և հաւանաբար մեր լեա-  
ներու ճամբով դէպի հարաւ կ'երթային:

Պաշարեցինք զիրենք առանց կոսկած ներշնչ-  
չելու. ձևացանք քիւրա (վայրենի արաբսներու  
տեսք ռնէինք արդէն) և մեզմէ մէկ քանինքը դա-  
սալիք զինուոր, նստեցուցինք մեր բալորակին մէջ և  
հարցուփորձի սկսանք:

Փախած էին Պուլանըխի ճակատէն. թիւք  
բանակը կ'ըսէին, կազմալուծուած է. կէսէն աւելին  
հիւանդ. սնունդ չունին և ոչ ալ հագուստ. իրենք  
խօսք մէկ ըրին և փախան. կ'ուզեն երթալ դէպի  
Մուսուլ, Ընկերներու աչքերուն մէջ կրակ նշմարե-  
ցի. կատաղի վրիժառութեան բոց էր. հուս—հուս  
պիտի ուտէին. մարդկային քութի ոչ մէկ նշոյլ մնա-  
ցած էր մեր մէջ. լռելեայն անոնց մահաւան վճիռը  
աւուած էինք արդէն, մանաւանդ իրենց պարկերուն  
մէջ ալ պէտք է որ սնունդի պաշար ռնենային...

Մեր լաւ թրքախօս ընկերներէն 5—6 հոգի,  
իրար աչք ընելով, ըսին թէ իրենք ևս դէպի հարաւ  
պիտի մեկնին և առին իրենց մէջ ու հոռացան: Դա  
չոյնով խողխողած էին թիւք զինուորները. առած  
էին սիպսն անոնց զինուորական վերի հագուստները  
(որ յետոյ օգտակար եղան մեզի) և պարկերը. օրոնց  
մէ մէկը ինծի բաժին ինկաւ: Ծառ յետոյ երբ մեր  
ոտքերը այդ կողմերը ինկան նորէն, տեսանք անոնց

գարչահօտ դիակները, սեւցած, ռուսած եւ կիսովին  
նեխած:

Իրդական հորդաներու օրսարչակները մեր ժո-  
ղովուրդի վրայ հեաղհեաէ աւելի կատաղի և աւելի  
մեծ չափերով տեղի կ'ունենային:

Այդ պատճառով ալ ահհաա զինուած ուժերն  
մեղի միացան իրենց կիներով և երախտներով եւ  
դարձանք 30—40 հոգի:

Անհնար այլևս անշշուկ շարժուիլ և պահուիլ:  
Մեղի միացողներէն տեղնկացանք, որ պատուելի Գրի-  
գորը իր ընտանիքով դեռ կ'ուզէր և պահուրած է  
է մեր հանգիպակաց ձորի խոր պուրակի մը մէջ:  
Դիտակով կը դիտէի այդ պուրակը, օրուն շուրջը կը  
վխտային քրտական խաբերը, տաղին ժխոր բարձ-  
րացնելով:

Անոնց քովերը խմբուած էին ոչխարներու հօ-  
տեր, կ'ենթադրէինք որ հայերէ լափշտակուած հօ-  
տերն են, որ կը բաժնէին, որովհետև վայրենի կան-  
չերով կը կուտէին և կը ցրուէին հօտերը:

Իրիկուան մօտ էր արդէն, երբ սկսան հեռա-  
ւալ: Այդ միջոցին յանկարծ ձօրի մէջէն հրացաններու  
ձայներ լսեցինք. իսկ քիչ յետոյ առանոց տարճանակ  
մը պատասխանեց անոնց, մէկ անգամէն առա հար-  
ուած աւալով: Կասկած չկար որ պատուելի Գրիգորի  
տեղը դատած և պաշարած էին: Իրիկուան աղջամուղ-  
ջի մէջ հազիւ շարժող շմբակներու ստուերները կը  
տեսնէի. հրազէններու ձայները 15—20 րոպէ տեե-  
ցին միայն, այնուհետև մեռելային լուռութիւն արեց.  
հասկցանք որ պատուելի Գրիգորը և իր ընտանիքը  
սպաննուած էին:

Նախապաշարուս պիտի համարուի, սակայն  
չառ տարօրինակ էին իմ երազներս. անոնք ընդհա-

բապէս ձերբու կամ օձերու շուրջ կը դառնային: Երբ Օձ տեսնէի, անպատճառ ընդհարում սը պիտի ունենայինք կամ յարձակում սը պիտի կրէինք. իսկ երբ ձերբու հետ կապուած ըլլար, օրը խաղաղ կ'անցընէինք: Եւ այս նշանները գրեթէ անխալ էին:

Պատուելի Գրիգորին գերեզման դարձող խոր ձորին վերը, լեռնալանջի սը պուրակին մէջ գիշերեցինք օր սը: Մեզ հետ էին 15—20 հօգի՝ կիներ, տարեր և մանուկներ, վերջիններէն սիայն սէկ հաա կար, որ յաղիւ 5—6 ասուտան էր և սաստի չէր ենթարկուեր, միւսները բաւական մեծ էին:

Մեր պուրակէն վար, հողիւ ջրան քայլի վրայ կ'անցնէր լեռնային ճամբան, օրուն մօտ փօքրիկ աղբիւր սը կը հօսէր: Իրիկուան կողմը, երբ սերինները կամաց ձայնով կը խօսէին, ճամբայի վերէն գոռում—գօչումով վար կուգային խուսը սը սարդիկ՝ քիւրաակ էին, որոնք պիտի անցնէին սեր շատ մօտէն անցնող ճամբայէն: Սարսափաւոր ամենքս շունչերնիս իսկ պահեցինք և զսպեցինք երեխաները: Բիւրաակը կը մօտենային:

Այդ սիջոցին, երևի մօր կամ հօր սաստէն վախցած պզտիկ սանկիկը ճիչ սը արձակեց և սկսուլալ... Մենք քար կարեցանք. վառնգը ակներև էր. քիւրաակը խուսը ըստ սովորութեան, իրար ընդհատելով և գոռում գոչումով մօտեցաւ աղբիւրին: Յանկարծ մեր փոքր սանկիկին ձայնը կարծես սուրով կարեցին. սեռելային լուսթիւն տիրեց: Այդ սիջոցին էր, երբ քիւրաակը հաւաքուած աղբիւրի շուրջը, շուր կը խմէին, օր ակեց մօտ աստ բուշէ, ապա պանդաղօրէն հեռացան:

Ապա շունչ առինք. հայրը խեղդած էր իր մանկիկը, և այս զինով փրկուեցանք մենք...

Սյլևս վայրենի կենդանիներու կերպ էինք...

ամօ. մեր օտքերէն ու ուտերէն ցնցափններն էի կախուած. օտքերնիս մաշուած արեխներու մէջէն քարերու, մացաներու շարնուելով, կարծր վերջերով ծածկուած էին, դէմքերիս մութ հողի գոյն էին ալած, և սենք, տարողջովին ուղրացած կմախքի էինք վերածուած:

Կը տեսնէի շուրջս դանուող ընկերներէն մանուանդ մէկ քանի լուր տառապանքը ինծի համար: Անոնք գերմարդկային ճիգ գործ կը զնէին պատաս մը հաց կտոր սը շաքար գանելու և ամօքելու իմ ֆիզիքական տառապանքս:

Դ ա դ ձ կը հաւաքէինք երբեմն և յթէյօ կը շինէինք, որ քիչ մը ուժ կուտար մեզի:

Բան լեռը այլևս վառնգուած էր: Թուտայան բանակէն ալ յոյսերնիս կարեցինք և օրօշեցինք անցնիլ Մասնիկա լեռները:

Սարսափելին այն էր, որ պուրակներու տերևները սկօեր էին թափիլ և այլևս չէինք կրնար ծածկուիլ թշնամիներու աչքերէն:

Կեանքը ալ յոյսահետեւ աւելի անտանելի դարձաւ: Մեր ընկերներու մէջ իսկ անհաստատ իրենք զիրենք սիայն ազատելու զգացումներ արթնցան և միտժամանակ նեղսրտութիւն, կասկած՝ միսիանց հանդէպ: Այդ տեսակէտէն Պօլէի Արշակը (Մճօյի եղբարը) շատ կը կասկածուէր ինծի հետ եղող ընկերներու կողմէ. Կ'ըսէին թէ դու սը կը սիւթէ մեզի դէմ: Թէ ինչօ և ի՞նչպէս, չկրցայ հասկնալ: Միայն երբ կը հանդիպէինք իրեն, ժամա դէմքով և թշնամական հայտացքով կը դիտէր իր մօտիկ ընկերները:

Այս սթնուլորաին մէջ ամենքիս միտքը ակելի տենդաղին կ'աշխատէր. ճօր սը գանել ազատուելու հաւար դժօթային կեանքէն: Ոչ սէկ փրկութիւն կար

այդ վիճակին մէջ մնալէն: Պէտք էր սուրեմն վերջին ճիգ մը գործ դնել հասնելու սուսական բանակին: Այս էր անա մեր բոլորիս մասժուսը: Բայց ասիկա անկարելի կը համարուէր: Ի՞նչ պիտի ընէինք մեզի հետ եղած անագին թիւով կիներն ու երեխաները: Այս ստահոգութիւններուն շատ անգամ կը պատասխանէին — «կին ու երախտայ միշտ կարելի է ունենայ. սղաւարդն է որ պէտք է ողջ մնայ, ասն օջախը ան պիտի պահէ» — այսպէս կը դատէին անոնք: Ու իրարմէ գողտի, սահմանը անցնելու պատրաստութիւններ կը տեսնէին — առաջնորդներ, ուղեկիցիներ կ'որոշէին և պաշար կը պատրաստէին:

Ձիս շրջապատող ընկերներէ սմանք նայնպէս կ'աշխատէին այդ ուղղութեամբ և միշտ ի հարկէ իրարմէ գողտի: Անտարբեր էի դարձած բոլորովին այդ ամենի հանդէպ. ինծի անկարելի կը թուէր հասնիլ անվտանգ սուսական բանակը, իսկ սեանիլ ճաշ բան թէ հոս՝ լեաներու մէջ — միւսնոյնը չէ՞ր:

Սեպտեմբերը կը սօսենտար և ցրտերը սկսած էին. քարայրի մը մէջ կարճ ժամանակ մը անցուցինք հիւանդ ընկերով մը քով, բայց մուկահիր քիւրտները հոն ալ փորձեր էին բարձրանալ: Թէև փախցուցինք մեր գնդակներով, բայց ստիպուեցանք թողուլ այդ քարայրն ալ:

Անցանք Մասնիկա օտարերը. հոն պիտի հաւաքուէինք սահմանն անցնելու նախապատրաստութիւններուն համար:

Գիշերը իջնելուն պէս, Բանի ձորերով սկսանք յառաջանալ դէպի օրոշուած հաւաքատեղին: Երբ ձորի խորը իջած, կ'ուղէինք բարձրանալ լեռան հետեւալ թէին վրայ և կ'անցնէինք աւերակ գոյի մը սօսէն, յանկարծ լոկոցինք խուլ — աղերսական ու կից — կտուր ձայն մը: Նախ կարծեցինք թէ քիւրտները թակարդ

են լարած մեզի և շղթայի մը ձևով շարքը երկարեցինք, ու ապա մեզմէ երկու հօգի, խիտ զէրչ մօտեցան գոմին: Մտրոզ ձայնը կը շարունակեր իր աղերսը հայերէն լեզուով:

Պաշարեցինք քոմը, քանի մը հօգի ներս մտան և մօմի կտոր մը վտաեցին. խցիսօս յառակին վրայ փռուած էր Աւրանայ Արամը...:

Վիրաւորուած քիւրտներէն, մեր անվեհեր հայդուկը, քաւելով կամ սողալով, անագին ճամբայ էր կտրած. ծածկ մը գտնելու համար և միշտ այն յոյսով որ թափառող հայերէն հայերէն մէկը կրնար այդ կողմերէն անցնիլ ու զինքը գտնել:

Երկու վէրք ունէր, մէկը սուին և միւսը կուրծքին:

Վէրքերը լայնարեւած էին և խոր. անոնց մէջ կօյտերով արդեր կը վխտային...:

Ճանչցաւ մեզ ու լացաւ:

Կարծես օրբազան խորանի մը տաջև՝ լուս ու մուկ խոնարհած էինք սեր նտհատակին դիմաց, որ անտրտունջ մահուան կը սպասէր և կարծես երջանիկ էր որ շրջապատուած է իր ընկերներով:

Երկար նայեցաւ մեզի կիսախաւառի մէջ վտուող իր բոսորային աչքերով ու սրմնշաց.

«Իմ բանս վերջացած է. մի թողնէք զիս այսպէս, սպանեցէ՛ք ձեր ձեռքով...»:

Մտրաւացինք: Ո՞վ էր որ ձեռք պիտի վերցնէր այս նուիրական կեանքին վրայ:

Դուրս եկանք. կծկուեցանք գոմի դրան քով դարգուրանքով, մութին մէջ թաքցնելով մեր հայեացքները, լուր և մահուան պէս ախուր:

Մեր շարքերէն առաջ եկաւ Արամի փետան:

Թրքական նախկին զինուոր, փողակապ Վահանը ու  
բաւ:

— Ինծի կ'իյնայ, պատել Արամը իր ասու-  
պանքէն:

Մտաւ ներս: Լսեցինք որ շնչաց Արամին:

— Հալալ էրէ ինծի իմ ազիդ ախպէրս...:

Տասնօրի երեք հարուած. վերջացաւ... Մար-  
մինը ամփոփեցինք դոմի պատին աակ մեր փորած  
գերեզմանին մէջ ու հեռացանք գլխիկոր:

Այսչէս սեռու Տարօնի Արամը:

Մեր համախմբման արդիւնքն այն եղաւ, որ  
Մարտիրոս վարժապետի խումբը մեկնեցաւ Ղէպի ուու-  
սական բանակ:

Նոր յոյս մըն ալ անօր կապեցինք և անցանք  
Շիրիձոր: Խոր ձոր մըն էր դէպի Սասուն ամառ,  
որուն յատակը շատ փոքր ու նեղ պուրակ մը կար:  
Հոն ստանք և չարցած առուի մը մէջ պտակեցանք՝  
յոգնաբեկ ու ջախջախուած:

Երկիւղի ու վաանքի գազափարը կորսնցուցած  
էինք. մեքենայական էին մեր շարժումները, մեքե-  
նայական էին և մեր միտքերը որ այլեւս չէին աչ-  
խատեր: Գիշերաչրջիկներու նման յամր և արձաննե-  
րու պէս անզգայ ու անտարեր էինք:

Ցորեկ էր, երբ բաղձաթիւ հրօցաններու ո-  
րօւր արթնցուց մեզ: Հաշիւ չի տուինք թէ ուրկէ  
էր, մինչև որ զնդակները սկսած էին ծեծել մեր  
քովերը:

Մտանուած էինք, յարձակուած մըն էր թէ՞  
քիւրտերը գնդակներով կը խուզարկէին պուրակը:  
Հրօջ էր որ ոչ մէկիս չըպաւ տասնեաններով ար-  
ձակուած գնդակներէն և լչ մէկը:

Մեր կողմէ՝ ո՛չ մէկ ձայն: Տափ րուպէ հազիւ

աւեց ու ձայները լսեցին:

Այդ տանն էր որ միջոյ ունեցանք լեր նո-  
յեւու: Լեռներու թևերով ձորք կ'իջնէր քիւրտերու  
հրկար շարան մը, բայց սեզմէ հեռու էին և վաանքը  
անցած էր:

Գիշերը, երբ թողինք պուրակը և բարձրա-  
ցանք լերան թևերուն վրայ, հանդիպեցանք Սասու-  
նէն եկած երկու երիտասարդներու, սուրհակներ  
էին Թուրքէնէն զրկուած:

Երկրորդ անգամն էր որ իւրապիս մեզ փքնա-  
մէլու: Թուրքէնը կը հարցէր թէ ողջ ենք, և կ'ուզէր  
իսանալ թէ կրնա՞յ մեր քով իջնել:

Սուրհակները պատմեցին որ Սասունի ջար-  
դէն վերջ, Թուրքէնը Փեթարի Մանուկի, Ախայի, Չո-  
լօյի, Մուշեղի և ուրիշ մէկ քանիներու հետ պահ-  
ուեր է քարանձաւներու մէջ, բայց անկարելի է հոն  
երկար մնալ. քիւրտերը օրսկան շուներու պէս ամէն  
քար կը հօտոտեն:

Գրեցի որ գան: Բանի մը սրէն եկան անտե՛ք՝  
բզբտուած ու առապած:

(«ՎէՄ» հանդէսէն)

128  
92  
99

2012

ՎԱՆՈՒԱՆ ԹԻՒՈՎ, ԿՍՎԿՍԿԻ, ԴԻՏԵՔՍ ԵՒ ԺԱՔԼԻՆ,

ՀՀ Ազգային գրադարան



NL0001633

ՀՀ Ազգային գրադարան



NL0001632

